


26.939

336
5-37




ԱՆԴՐ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻՆ

== Կ Ի Ց ==

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀԵՌԱԿԱ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵ-
ՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

„ԶԱԿԶԻՖԵՆ“

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ



ԶԱԿԶԻՖԵՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՒԱՆ

1935

204

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Կազմեց Ղ. ՇԱՔԱՐՅԱՆ

(Ըստ Դրացնկոյի «ԽՍՀՄ
Ֆինանսներ»
աշխատանքի)

Խ/523

336
C-37

05 JAN 2010

EPUS .50. 6.0

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

3468

Կ Ա Ձ Մ Ե Ց

Ղ. ՇԱՔԱՐՅԱՆ

(Ըստ Դյաչենկոյի «ԽՍՀՄ ֆինանսները» աշխատության)



26.939

13.07.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության նախարարության հրահանգով



39818-63

Անգլական խմբագիր՝ Վ. ՓՈԹԵՅԱՆ

Յերևան, Սեփան-Քանաքեռի լիճակում

Դրավիտ № 263

Տիրաժ 600:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«ԽՍՀՄ Ֆինանսները» դասընթացը ավանդելը չափազանց դժվարությունների հետ է կապված, այդ առարկայի վերաբերյալ հայերեն լեզվով վաղվե ձեռնարկ չլինելու պատճառով:

Վ. Դյանչենկոյի խմբագրությամբ Մոսկվայի Ֆինանսա-եկոնոմիկան ինստիտուտի լեզվով ԽՍՀՄ Ֆինանսական աշխատակիցների բրիգադի կազմած «ԽՍՀՄ Ֆինանսները» ուսուցիչական լեզվով միակ դասագիրքն է այդ առարկայի վերաբերյալ, վորը սակայն իր մեծածավալ լինելու պատճառով հնարավոր չի թաղանթները լեզվա-հարմարեցնել: Այդ դասագիրքն ամբողջությամբ հայերեն թարգմանելն անհնարապատճառաբար է լեզվային պատճառով, վոր դասագրքում, ինչպես այդ գրքում են նայել հեղինակները, միմյանց հետ վաղ բավարար չափով են կապված դասագրքի առանձին մասերը: միջկուսակցական կրկնվում է տարբեր գլուխներում:

Բացի դրանից, գրքում կան մի քանի խեղաթյուրումներ լեզվա-անհատություններ (յերբեմն՝ նայել սխալներ: քվակալ սխալներն ընդգրկում են մինչև 1933 թ.): բացակայում է հարկերի փոխադրման լեզվ հարկերի ծանուցյալ վերաբերյալ գլուխը:

Բացակայում են առաջին հնգամյակի Ֆինանսների կատարման լեզվ հանրագումարները: միանգամայն աչքաթող է արված «Յերկրորդ հնգամյակի Ֆինանսները» հասվածք լեզվ, վերջապես, քանի վոր դասագիրքը լույս է տեսել մինչև XVII Կուսակազմում, ուստի նրանում տեղ չեն գտել XVII Կուսակազմում աշխատանքի վորոշումները, մասնավորապես բացակայում է Ֆինանսների՝ Յերկրորդ հնգամյակում ունեցած էություն լեզվ դերի հարցերի վերաբերյալ վորոշումները: Մինչդեռ առանց XVII Կուսակազմում աշխատանքի խորը ուսումնասիրության չի կարելի նիշ կերպով հասկանալ Ֆինանսների դերը ժամանակակից ետպում, նրա նշանակությունը անցած բոլոր ետպումներում լեզվ դրանով իսկ պարզաբանել մեր Ֆինանսների բնույթը:

Վերոհիշյալ բոլոր հանգամանքները նկատի ունենալով, մենք հրաժարվեցինք այդ դասագիրքն ամբողջությամբ թարգմանել լեզվ հրատարակել:

Ցանկանալով քեզից մասամբ քեզիցանել դասընթացի ավանդումը, լեզվ, Դյանչենկոյի «ԽՍՀՄ Ֆինանսները» դասագրքի հետևելությամբ, կոնսպեկտիվ ձեռնարկ, կազմեցի ներկա ձեռնարկը, բայց հնարավորին վերացնելով նշված բերությունները:

Ներկա դասագիրքը կազմված է ԽՍՀՄ Կենտրոնական կից «ԽՍՀՄ Ֆինանսները» դիսցիպլինի բարձրագույն տեխնիկական կր-

քուրյան համամիութենական հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրով:

Քանի վոր ամբողջ դասընթացը այսեղ տրված է խիստ սեղմ կերպով յեւ հիմնական հարցերը լուսաբանված են կոնսպեկտիվ ձեւով միայն, ապա շատ բան, վոր անհրաժեշտ է ամբողջ ծրագիրը լրիվ յուրացնելու համար, ուսանողը պիտի ձեռք բերի ինքը՝ լրացուցիչ գրականութիւնն ոգտագործելով:

Գ. ՇԱՔԱՐՅԱՆ

1. ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական հասարակութիւնն կառուցելու գործում ֆինանսների դերն ու նշանակութիւնը հսկայական է: ԽՍՀՄ ֆինանսների բնույթը հասկանալն անհնար է առանց անողորմ պայքար մղելու բուրժուական թեորիաների դեմ, մարքս-լենինյան թեորիայի բազայի վրա: Միմիայն պայքարելով բուրժուական նախապաշարունակների դեմ թեորիայի ասպարիզում, կարելի յե ամրացնել մարքսիզմի և լենինիզմի դիրքերը» (Ստալին. Ագրար-նիկ-մարքսիստների համագումարում 1929 թ. դեկտեմբերի 27-ին արտասանած ճառից): «Յուրաքանչյուր թեորիա ուժ է դառնում—գրում էր Մարքսը—յերբ յուրացվում է մասսաների կողմից»: Ուստի մենք պետք է ճշտորեն լուսաբանենք ԽՍՀՄ ֆինանսների բնույթն ու կառուցութիւնը, առավել ևս, վոր այս բնագավառում մի շարք «տեսաբաններ» կոպիտ սխալներ են արել ու խեղաթյուրել են ֆինանսների ճիշտ բնորոշումը:

Այդ հարցը ուսումնասիրել և լուսաբանել կարելի յե միայն խորհրդային տնտեսութիւնն ընդհանուր թեորիայի ու պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական քաղաքականութիւնն սերտ կապակցութեամբ:

Գոթայի ծրագրի քննադատութիւնն մեջ Մարքսը գրել է. — «Կապիտալիստական և կոմունիստական հասարակութիւնն միջև ընկած է հեղափոխականորեն վերակազմվելու՝ մեկը մյուսի փոխվելու շրջանը: Քաղաքականութիւնն մեջ դրան համապատասխանում է անցման շրջանը, վորի ընթացքում չի կարող այլ պետութիւն լինել, բացի պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայից: «Սոցիալիզմ կառուցելու խնդիրը չի կարելի միանգամից իրագործել, այդ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու բավականին յերկարատե շրջան է պահանջում թե՛ այն պատճառով, վոր արտադրութիւնն վերակազմակերպումը դժվար բան է, թե՛ այն պատճառով, վոր ժամանակ է հարկավոր կյանքի բոլոր բնագավառներում արմատական փոփոխութիւններ մտցնելու համար և թե՛ այն պատճառով, վոր մանր-բուրժուական և բուրժուական տնտեսավարութիւնն սովորութիւն հսկայական ուժը միայն յերկարատե, համառ պայքարով կարելի յե հաղթահարել»:^{*})

Վորչափով խորհրդային տնտեսութիւնը կապիտալիզմից սոցիալիզմի անցնող տնտեսութիւնն է, նույն չափով ել պրոլետարիատի դիկտատուրան սոցիալիստական հասարակութիւնն կառուցման անհրաժեշտ, պարտադիր նախադրյալն ու նախապայմանն է: Սոցիալիզմը տարերայնորեն և ինքնահոսով չի հասունանում կապիտալիզմի ընդերքում, այլ կարող է կառուցվել միմիայն իշխանութիւնն ու իշխող հիմնական բարձունքները պրոլետարիատի

^{*}) Լենին, Յ, XXIV եջ 314:

ձեռքն անցնելուց հետո, միլիոնավոր աշխատավորների ակտիվ, գիտակից ստեղծագործությունների միջոցով Պրոլետարիատի խնդիրն այն է, վերաբաղվել ստեղծի, ընդլայնել և ապահովել սոցիալիստական սեկտորի վերաբարձրությունը և միաժամանակ սահմանափակել, դուրս մղել և վերացնել կապիտալիստական տարերը: Այս խնդիրների իրագործման ասպարիզում ֆինանսների դերը շատ խոշոր է, քանի վոր իրենց բնույթով և ելուձյամբ մեր ֆինանսները պրոլետարիատի դիկտատուրայի վճռական լծակներից մեկն են սոցիալիստական շինարարության գործում:

Պրոլետարիատի դիկտատուրան ամրացնելու համար բանվոր դասակարգը պետք է անհրաժեշտ ռեսուրսներ մոբիլիզացիայի յենթարկի: Յեվ սոցիալիստական շինարարության նվաճումների հետ միասին ավելի ու ավելի յե աճում ֆինանսների դերը, քանի վոր ֆինանսները մի հզոր գործիք են, հասարակական արդյունքն ըստ համապատասխան կանալների վերաբաղխելու և ամբողջ սոցիալիստական սեկտորի ընդլայնված վերաբարձրությունն ապահովելու համար: Ուստի, խՍՀՄ-ի ֆինանսներն ու ֆինանսական սխտեմը ժողովրդական յեկամուտի վերաբարձրության ամբողջ պրոցեսսի մի որդանական մասը կազմելով, այդ յեկամուտը վերաբաղխում է պրոլետարիատի տնտեսական քաղաքականության համամաստ:

ԽՍՀՄ-ի ֆինանսներն արմատապես տարբերվում են կապիտալիստական յերկրների ֆինանսներից: Կապիտալիզմի ֆինանսական սխտեմն աշխատավորության կապիտալիստական շահագործման մի լրացուցիչ զենք է կապիտալիստների ձեռքում: Այդ սխտեմն իր բոլոր միջոցներով ուղղված է շահագործվողների դեմ. նա ուժեղացնում է այդ շահագործումը, ստիպելով պրոլետարիատին, գյուղացիությանն ու զաղութային ժողովուրդներին, հանուն իր իսկ՝ կապիտալիզմի ընդլայնված վերաբարձրության շահերի, ծածկել կապիտալիստական սխտեմի պահպանման և ընդարձակման հետ կապված ծախսերը: Կապիտալիզմի պայմաններում, վորտեղ արտադրությունը զարգանում է արժեքի տարբերային որենքի հիման վրա, իսկ դասակարգային հակասություններն ավելի ու ավելի յեն սրվում, ֆինանսների ֆունկցիան դասակարգային անարտադրողական ապարատի պահպանումն է:

Հակառակ կապիտալիզմի ֆինանսների, մեր ֆինանսներն ամբողջովին ուղղված են կապիտալիստական տարերի դեմ և նպաստում են պրոլետարիատի ուժեղանալուն և նրա ու աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրացմանն, ինչպես նաև սոցիալիստական սեկտորի ընդլայնված վերաբարձրության տեմպերի արագացմանը: Միաժամանակ մեր ֆինանսները պրոլետարիատի ձեռքում մի զենք են մանր-ապրանքային սեկտորը վերակառուցելու և կապիտալիստական տարերն ու ընդհանրապես դասակարգերը վերացնելու համար:

Մեր ֆինանսների և կապիտալիստական յերկրների ֆինանսների ըսկզբունքային տարբերությունը հաճախ է ընդգծվել կուլակցական և խորհրդային որդանների վորոշումներում: Այսպես, որինակ, ՌՍՖՍՀ-ի սահմանագրություն մեջ մենք կարդում ենք. «ՌՍՖՍՀ-ի ֆինանսական քաղաքականությունն աշխատավորության դիկտատուրայի ներկա անցման մոմենտում նպաստում է հետևյալ հիմնական նպատակին—եքսպրոպրիացիայի յենթարկել բուրժուազիային և հարստությունների արտադրության ու բաշխման

ման բնագավառում հանրապետության քաղաքացիների ընդհանուր հավասարության համար պայմաններ նախապատրաստել: Այս նպատակով ֆինանսական քաղաքականությունն իր առաջ խնդիր է դնում խորհրդային իշխանության որդանների տրամադրության տակ դնել բոլոր անհրաժեշտ միջոցները խորհրդային հանրապետության տեղական ու համապետական կարիքները բավարարելու համար, կանգ չառնելով մասնավոր սեփականության իրավունքները յախտելու առաջ»:

«Եքսպրոպրիացիայի միջոցով կապիտալիստներից յալած արտադրության միջոցների սկսված հանրայնացման ժամանակաշրջանում պետական իշխանությունն արդեն արտադրական պրոցեսներից վեր կանգնած մի պարադիտային ապարատ չի, այլ նա սկսում է դառնալ մի կադմակերպություն, վոր անմիջաբար իրագործում է յերկրի եկոնոմիկայի դեկավարման ֆունկցիան և այդ չափով ել պետական բյուջեն դառնում է ամբողջ ժողովրդական տնտեսության բյուջե: Այս պայմաններում յեկամուտներն ու ծախքերը բաշխավորել կարելի յե միայն այն ժամանակ, յեթե ճիշտ հիմքերի վրա դրված լինեն պետական պլանաչափ արտադրությունն ու արդյունքների բաշխումը» (Համ. Կ. (բ) Կ. ծրագիրը):

խորհրդային ֆինանսների սկզբունքային տարբերությունը կապիտալիստական պետությունների ֆինանսներից անտեսվում, մթագնվում ու յեկաթյունվում է բուրժուական «տեսաբան» վնասարարների աշխատություններում և աջ ոպորտունիստական ու աջ—«ձախ» հակահեղափոխական թեորիաներում:

Բուրժուական «տեսաբանների» կարծիքով «նյութական այն բոլոր ռեսուրսները, վոր ունի հանրային իրավական միությունն իր անդամների կոլեկտիվ կարիքները բավարարելու համար,—կազմում են նրա ֆինանսական տնտեսությունը» (Բուկոլիցկի): «Յերբ մենք յոսում ենք ֆինանսների մասին, ապա այս բառի տակ մենք պետք է հասկանանք պետական տնտեսությունը, այսինքն այն հատուկ կոլեկտիվի տնտեսությունը, վոր պետություն է կոչվում» (Սորոլե):

Կանգ չառնելով այլևս ֆինանսների այն մի շարք համանման բնորոշումների վրա, վոր տալիս են բուրժուական հեղինակները, մենք ալստեղ պետք է նշենք միայն, վոր այդ տնտեսագետներն աշխատում են մթագնել ֆինանսների դասակարգային բովանդակությունն ու ելությունը: Դիտելով ֆինանսները վորպես կոլեկտիվ կարիքները բավարարելու համար միջոցներ ստանալու մի մեթոդ, դրանով իսկ այդ հեղինակները պետությունը դիտում են վորպես մի «ապագասակարգային կադմակերպություն», վորը բուրժուական կարգերի շահերն է պաշտպանում ու նրանց կոլեկտիվ կարիքները բավարարում:

Հատկապես հետաքրքրական է ֆինանսների այն բնորոշումը, վոր տալիս է Բուդերյովը. նա ասում է. «պետության դրամական և նյութական այնպիսի միջոցները, վորոնք կարող են դրամի վերածվել, կազմում են այդ պետության ֆինանսները»: Բուդերյովը ֆինանսները կապում է դրամի հասկացողության հետ կամ այն բանի հետ, «ինչ-վոր կարելի յե դրամի վերածել»: Բայց քանի վոր կապիտալիզմի պայմաններում դրամի կարելի յե վերածել վոչ միայն նյութական ռեսուրսները, այլև որինակ պաշտոն-

յաների վաճառված խիղճը, ապա Բոլշևիկյան ֆինանսների հասկացողութունը կարելի չէ ընդարձակել նաև այս իմաստով:

Ֆինանսների մի այլ «հետադոտող» Կուզովկովը, ապացուցում է, վոր կապիտալիստական բյուջեն մի պլան է, վորը կարգավորվում է պետութայն կողմից: Ուստի նա առաջարկում է կապիտալիզմի ֆինանսներն անվանել «պետական տնտեսութուն» (վորչափով վոր այն «պլանավորվում» է), իսկ «ֆինանսական սխառն» տերմինով բնորոշել ԽՍՀՄ-ի ֆինանսները:

Այսպիսով, ուրեմն, Կուզովկովը ֆինանսները պետական տնտեսութայն շրջանակներով է սահմանափակում: Մինչդեռ հայտնի չէ, վոր մեր միասնական ֆինանսական պլանում, վորն ամբողջ ֆինանսական պլանավորման մի սինթեզ է, հաշվի չեն առնվում վոչ միայն պետական ֆինանսները, այլ և ժողովրդական տնտեսութայն բոլոր ճյուղերի ֆինանսները: Կուզովկովը կապիտալիստական պետութայնների ֆինանսների բնորոշ գիծը (պետական հիմնաբեկների համար միջոցներ հայթայթելը) մեխանիկորեն փոխադրում, տարածում է անցման շրջանի ֆինանսների վրա: Այն ժամանակ, յերբ կապիտալիզմի պետական ապարատը պարագլխորեն «ձեռք է բերում» իրեն անհրաժեշտ ռեսուրսներն իր դասակարգային նպատակներն իրագործելու համար, ԽՍՀՄ ֆինանսական սխառնի հիմնական ֆունկցիաները վոչ թե «ձեռք բերված» միջոցները ծախսելու, այլ վերաբաշխելու ֆունկցիաներն են: Վերաբաշխման այդ պրոցեսները ընդգրկում են վոչ միայն պետական տնտեսութայնն ու ամբողջ հանրայնացված սեկտորը, այլ և բնակչութայնը:

Սխալ էյին նաև Լենինգրադի ֆինանսական ամբիոնի տեսակետները: Ֆինանսների թեորիայի առարկային ու մեթոդին վերաբերող հարցի շուրջը 1931 թ. Մոսկվայում տեղի ունեցած խորհրդակցութայն ժամանակ այդ տեսակետների կողմնակիցները փորձում էյին ապացուցել, վոր անհրաժեշտ է «ընդհանուր ֆինանսական թեորիա ստեղծել և կապիտալիզմի ֆինանսական կատեգորիաները փոխադրել խորհրդային իրականութայն մեջ:

Մեր ֆինանսները սոցիալիստական շինարարութայն և վոչ մի ետապում չեն նմանվել կապիտալիստական պետութայնների ֆինանսներին վոչ իրենց բովանդակութայնը, վոչ իրենց ձևով:

Ինչ վերաբերում է ֆնասարարներին, ապա նրանք իրենց բոլոր ջանքերը գործ էյին դնում, վորպեսզի ֆինանսները ծառայեցրած լինեն մասնավոր-կապիտալիստական տարրերի և ընդհանրապես տարերային մոմենտների զարգացման գործին: Դրա համար ել նրանք առաջադրում էյին «ֆինանսների պասիվութայն թեորիան», ըստ վորի ֆինանսները իբր թե կառավարութայն մի պարզ, տեխնիկական դրամական ձեւ էյին: «Տվեք մեզ լավ եկոնոմիկա, իսկ լավ ֆինանսներն ինքնին կստեղծվեն» (Յուրովսկի): Այդ նպատակով ել կառուցվում էյին «արտադրողական ուժերի զարգացման հավասարակշռութայնը պահպանելու թեորիաներ», «արտադրողական ուժեր» բառերի տակ հասկանալով կուլակային տնտեսութայնները և այլն:

Վերջապես, ձախ պետք է համարել մի շարք «հետադոտողներին» այն տեսակետները, վոր խորհրդային տնտեսութայն մեջ կապիտալիստական տարրերը վերացնելուց, պլանի դերն ուժեղացնելուց և ամբողջ ժողովրդական տնտեսութայն զարգացումը պլանավորման յենթարկելուց հետո մեր ֆինանս-

ները պետք է «մահանան»: 17-րդ կուսկոնֆերենցիայի՝ յերկրորդ հգնամյա պլան կազմելու վերաբերյալ դիրեկտիվներում հատկապես նշվում են, վոր պետք է անհաշտ վերաբերմունք ունենալ դեպի այն ամեն տեսակ «ձախ» թեորիաները, թե սոցիալիստական շինարարութայն հենց տվյալ շրջանում պետք է անցնել «արդյունափոխանակման», «դրամի մահացման» և այլն:

Սոցիալիստական շինարարութայն աշխարհում ֆինանսներն առանձնապես խոշոր դեր ու նշանակութայն ունեն վորպես մի հզոր զենք սոցիալիստական արշավի բարձր տեմպերի համար պայքարելու, տնտեսական հաշվարկ մտցնելու և խորացնելու, ֆինանսական ու վարկային կարգապահութայնն ամրացնելու և ուղղելով կոնտրոլ սահմանելու ասպարիզում:

17-րդ կուսկոնֆերենցիայի ընդգծել է, վոր «տնտեսական գործունեյութայն հիմքը պետք է կազմի այն պայքարը, վոր մղվելու չէ ժողովրդական տնտեսութայն բոլոր ողակներում՝ տնտեսական հաշվարկ մտցնելու, պլանային ֆինանսական կարգապահութայնն ուժեղացնելու համար, ինչպես նաև խորհրդային ուղղիկն—տնտեսական հաշվարկն ուժեղացնելու և քաղաքի ու գյուղի տնտեսական կապերն ուժեղացնելու այդ կարեւորագույն լծակն ել ավելի ամրացնելու համար:

Ամփոփելով այս բոլորը, մենք կարող ենք մեր ֆինանսները բնորոշել վորպես մի զենք պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքին, վորով պլանայնորեն բաշխվում և վերաբաշխվում են նյութական ռեսուրսները ժողովրդական տնտեսութայն սոցիալիստական և այլ սեկտորների միջև, ինչպես նաև սոցիալիստական սեկտորի ներսում՝ սոցիալիստական ընդլայնած վերարտադրութայն, մանր-պարանջալին սեկտորը վերականգնելու և կապիտալիստական տարրերն ու ընդհանրապես դասակարգերը սահմանափակելու, դուրս մղելու և վերացնելու համար:

2. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵԿԱՍՈՒՏԸ

Այս հատվածում մենք լուսաբանում ենք ֆինանսների դերը ժողովրդական յեկամուտի վերաբաշխման գործում: Սակայն, նախքան այդ նյութին անցնելը, մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ մի քանի խոսքով տալ ժողովրդական յեկամուտի հասկացողութայնը:

Ապրանքային կապիտալիստական հասարակարգի պայմաններում ժողովրդական յեկամուտը յերկրի պատրաստի արտադրանքի, նոր ստեղծված արժեքի մի մասսա չէ, վորը վերաբաշխվում է հիմնական դասակարգերի միջև և ապահովում տվյալ տնտեսական սխառնի վերարտադրութայնն ու զարգացումը: Ինչպես հայտնի չէ, հասարակական արդյունքի արժեքը բաժանվում է հետևյալ բաղադրիչ մասերի՝ $C+V+M$, վորտեղ C արտադրութայն միջոցների արժեքն է, փոխանցված նոր արդյունքի, V աշխատանքային ուժի վերարտադրութայն ֆոնդը կամ աշխատավարձն է, M հավելյալ արժեքը, վոր յուրացնում են կապիտալիստները: Հետևապես, ժողովրդական յեկամուտը, այսինքն՝ նոր ստեղծված արժեքը ($V+M$) իր մեջ պարունակում է կապիտալիստական հասարակութայն բոլոր հակասութայնները:

Ժողովրդական յեկամուտը կարելի չէ ուսումնասիրել միայն կապիտալի վերարտադրութայն ընդհանուր թեորիայի հիման վրա, քանի վոր նոր

ստեղծված արժեքն ապրանքային վերաբրտագրութեան պրոցեսում ապրանքի մի անխզելի մասն է կազմում: Մինչդեռ բուրժուական քաղաքատնտեսութեանը չըմբռնելով կապիտալիստական հասարակութեան վերաբրտագրութեան այն իսկական արժեքները, վոր Մարքսն է հայտնաբերել, ժողովրդական յեկամուտը դիտում է վորպես մի ինքնուրույն, վերաբրտագրութեան պրոբլեմից անկախ հարց: Լենինը գրել է, վոր «աղբային յեկամուտի» և «աղբային սպառման» հարցն անլուծելի յե, յեթե «մենք այդ հարցն իբրեւ ինքնուրույն հարց ենք դնում» և «միանգամայն լուծելի յե դառնում, յերբ մենք վերլուծում ենք ամբողջ հասարակական կապիտալի արտագրութեան պրոցեսը» (յերկ. ժող. հ. 3, էջ 37): Ժողովրդական յեկամուտի մեջ պետք է մտնել վերաբրտագրութեան բոլոր ելեմենտները՝ արտագրութեանը, բաշխումը, փոխանակումն ու սպառումը: «Արտագրութեանն առարկաներ է ստեղծում կարիքների համեմատ, բաշխումն այդ առարկաները բաշխում է հասարակական որեւիքների համաձայն, փոխանակութեանը արդեւ իսկ բաշխվածը նորից է բաշխում առանձին կարիքների համաձայն և, վերջապես, սպառման մեջ արդյունքը դուրս է մնում հասարակական շրջանառութեանից ու դառնում է անմիջաբար առանձին կարիքի առարկան ու ծառան և այդ կարիքը բավարարում է ոգտագործման պրոցեսում» (Մարքս):

Կապիտալիստական եկոնոմիկան զարգանում է արժեքի տարերային որեւիքի հիման վրա: Արտագրութեան հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական ձեւի միջև յեղած հակասութեանը՝ արտագրութեան կապիտալիստական յեղանակի հիմնական հակասութեանն է: Ամենից աւելի ցայտուն կերպով այդ հակասութեանը մենք տեսնում ենք, յերբ ուսումնասիրում ենք ժողովրդական յեկամուտի արտագրութեանն ու բաշխումը, վորտեղ բանվորների աշխատանքով ստեղծված արդյունքը յուրացնում են կապիտալիստները:

ԽՍՀՄ-ում ժողովրդական յեկամուտն իր եյուլթյամբ արմատապես տարբերվում է կապիտալիստական հասարակութեան ժողովրդական յեկամուտից: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում այդ յեկամուտը սոցիալիստական ընդլայնած վերաբրտագրութեան մի միջոց է, այսինքն, կապիտալիստական դասակարգերի և ընդհանրապես դասակարգերի վոչնչացման միջոց, անդասակարգ հասարակութեան կառուցելու և աշխատավորութեան լայն մասսաների կյանքի կուլտուրական և նյութական մակարդակն անընդհատ բարձրացնելու միջոց: Միաժամանակ, արտագրութեան բաշխման և վերաբաշխման հարաբերութեաններն իրենց բովանդակութեամբ սկզբունքորեն տարբերվում են կապիտալիստական տնտեսութեան հարաբերութեաններից: Հետեւապես և այն դուտ արտագրանքը՝ ժողովրդական յեկամուտը, վոր խորհրդային եկոնոմիկայի պայմաններում է ստեղծվում, միանգամայն այլ կատեգորիա յե, քան կապիտալիստական տնտեսութեան ժողովրդական յեկամուտը: Այդ արտագրանքը մեզ մոտ նոր ստեղծված արժեք չէ, քանի վոր արժեքի կատեգորիան ընդհանրապես խորհրդային տնտեսութեանը հատուկ չէ, այլ նոր ստեղծված հասարակական արդյունք է, վորն արտագրվում, բաշխվում, վերաբաշխվում և սպառվում է մեր սոցիալիստական պլանի հիման վրա:

Բուրժուական տնտեսագետները, չըմբռնելով խորհրդային տնտեսութեան

եյուլթյունը և աշխատելով ինչ վոր «ընդհանուր որեւիքներ» գտնել, չեն տեսնում ԽՍՀՄ և կապիտալիստական հասարակութեան ժողովրդական յեկամուտի միջև յեղած այդ եյական տարբերութեանը:

Այսպես, որինակ, Լիտոշենկոն ժողովրդական յեկամուտը դիտում է վոչ վորպես հասարակական արտագրութեան մի ձև, այլ վորպես «տնտեսութեամբ զբաղվող սուբյեկտների» յեկամուտների սոսկ հասարակ գումար: Լիտոշենկոյի թեորիայով դուրս է գալիս, վոր ժողովրդական յեկամուտը բնակչութեան «անհատական յեկամուտների» մի գումար է, այսինքն՝ դրանով իսկ նա այդ յեկամուտները դիտում է բաշխման հարաբերութեանների լույսի տակ, անկախ արտագրութեան հարաբերութեաններից, հաշվի չառնելով այդ նույն յեկամուտների դասակարգային բնույթը,

Մի այլ «տեսաբան» Գերշակը, հիմնականում առաջադրելով Լիտոշենկոյի թեորիան, գտնում է, վոր ժողովրդական յեկամուտը տնտեսական ռեալ նշանակութեան չունի, այլ միայն հաշվային բնույթի ունի, բնակչութեան յեկամուտների մի հանրագումար է, վոր դասակարգային տեսակետից միանգամայն դիմադրելի է: Դրանով իսկ Գերշակն ուզում է ապացուցել, վոր կապիտալիստական հասարակութեանը զուրկ է վորեւէ դասակարգային հակամարտութեանից:

Ժողովրդական յեկամուտը կարելի յե հաշվել յերկու մեթոդով՝ անհատական և ռեալ: Անհատական մեթոդը ասելով պետք է հասկանալ այն մեթոդը, վորն ընդգրկում է բնակչութեան առանձին սոցիալիստական խմբերի ամբողջ յեկամուտը, իսկ ռեալ մեթոդը ժողովրդական յեկամուտը վորոշում է տնտեսութեան առանձին ճյուղերի միջև այդ յեկամուտը բաշխելու հիման վրա: Ռեալ մեթոդն անվանում են նաև արտագրական մեթոդ, քանի վոր այդ մեթոդով ուսումնասիրվում են արդյունքի արտագրութեան հարաբերութեաններն ըստ առանձին ճյուղերի, իսկ անհատական մեթոդը, կամ այլ կերպ ասած՝ բաշխման մեթոդն ուսումնասիրում է, թե ինչպես է բաշխվում ժողովրդական յեկամուտը բնակչութեան առանձին դասակարգերի միջև: Այս յերկու մեթոդներն իրար հակադրելը սխալ կլինի, քանի, վոր դրանց մեջ միասնութեան կա՝ այդ յերկու մեթոդն ել նույն բանն են հետադոտում, այն է՝ նոր ստեղծված հասարակական արդյունքը: Ժողովրդական յեկամուտն արտագրական մեթոդով վորոշելիս պետք է արտագրանքից հանել արտագրական սպառման այն բոլոր տարբեր (հումք, կիսաֆաբրիկատներ, վառելիք և այլն), վորոնք այլ ճյուղերից ստացվել են վերամշակելու համար: Հակառակ դեպքում, ընդհանուր արտագրանքը գումարելիս մենք կրկնակի գումար կստանանք: Այսպիսով, այդ մեթոդով մենք պետք է ստանանք այսպես կոչված զուտ արտագրանքը: Մեզ մոտ, արտագրական մեթոդով ժողովրդական յեկամուտը վորոշելիս, մենք վոչ միայն պետք է պարզենք, թե վոչ ճյուղերում է աշխատանքը յեկամուտ ստեղծում (ինչպես կապիտալիստական յերկրներում են անում), այլ և պարզենք հենց այդ ճյուղերի սոցիալիստական պրոֆիլները, դրանց ուղղութեանը (հանրայնացված, վոչ—հանրայնացված) և շարժումը: Իսկ ժողովրդական յեկամուտն անհատական մեթոդով վորոշելիս չի կարելի մեխանիկորեն հաշվել բնակչութեան յեկամուտների գումարը, այլ անհրաժեշտ է արտագրողական աշխատանքի տված հիմնական յեկամուտը դատել այն ածանցյալ յեկամուտից,

վորն առաջ և յեկել ամբողջ հասարակութեան մեջ ժողովրդական յեկամուտը վերաբաշխելու հարաբերութիւնները հիմքի վրա:

Այսպիսով, ուրեմն, անհատական մեթոդը նախ և առաջ պետք է պարզի, թե վորն է հիմնական և ածանցյալ յեկամուտը, այլ խոսքով, պետք է պարզի արտադրողական և վոչ—արտադրողական աշխատանքի վերաբերյալ հարցը:

Մարքսն ապացուցել է, վոր կապիտալիզմի պայմաններում արտադրողական աշխատանք ամեն մի կապիտալիստներն կազմակերպված աշխատանք է, վորը հավելյալ արժեք է ստեղծում:

Անցման շրջանում արտադրողական և վոչ—արտադրողական աշխատանքի բովանդակութիւնը տարբերվում է կապիտալիստական տնտեսութեան մեջ ունեցած նրա բովանդակութիւնից: ԽՍՀՄ-ում արտադրողական աշխատանք պետք է համարել այն ամբողջ աշխատանքը, վորը կատարվում է նյութական արտադրութեան վոլորտում և ապահովում է ընդլայնած սոցիալիստական վերարտադրութիւնը: Մեզ մոտ արտադրական հարաբերութիւնները հիմնական ձեւը՝ սոցիալիստական հարաբերութիւններն են, իսկ ժողովրդական տնտեսութեան զարգացումը սոցիալիստական հարաբերութիւնների ընդլայնած վերարտադրութեան, ժողովրդական տնտեսութեան, մանր-ապրանքային սեկտորի վերակառուցման ու կապիտալիստական սեկտորի վերացման պրոցեսն է: Հետեւապես, արտադրողական աշխատանք է մեզ մոտ ամեն մի աշխատանք, վորի նպատակը սոցիալիստական հարաբերութիւնները վերարտադրութիւնն է: Ուրեմն և մտավոր աշխատանք կատարողի աշխատանքը, վորի նպատակը կազմել պատրաստիւն է, արտադրողական աշխատանք է այն չափով, վորչափով նա կազմել պատրաստիւնով աշակցում է մեր տնտեսութեան սոցիալիստական հարաբերութիւններին վերարտադրութեանը: Սակայն ժողովրդական յեկամուտը վորոշելիս պետք է յենել այդ յեկամուտն ստեղծող աշխատանքից, այսինքն այն աշխատանքից, վորը ծախսվում է նյութական վերարտադրութեան ասպարիզում: Այլ խոսքով, յուրաքանչյուր հանրոքն անհրաժեշտ աշխատանք, վոր ծախսված է նյութական արտադրութեան վոլորտում, պետք է ժողովրդական յեկամուտ ստեղծող աշխատանք համարել: Իսկ բնակչութեան մնացած կատեգորիաների յեկամուտներն ածանցյալ են և ժողովրդական յեկամուտի վերաբաշխման պրոցեսում են գոյանում: Անհատական մեթոդով վորոշված ժողովրդական յեկամուտը պետք է բաղկացած լինի հիմնական յեկամուտների գումարից, դուրս յեկած դրանց այն մասը, վորը հետագայում վերաբաշխվում է, և ավելացրած ածանցյալ յեկամուտների գումարը: Այդ վերջին գումարը պետք է հավասարի հենց հիմնական յեկամուտների այն մասին, վորը վերաբաշխվում է: Հետեւապես, անհատական մեթոդով վորոշված յեկամուտների ամբողջ գումարը պետք է հավասարվի հիմնական յեկամուտների գումարին, այսինքն՝ ունալ մեթոդով վորոշված ժողովրդական յեկամուտին: Սակայն, պրակտիկան մեզ ցույց է տալիս, վոր այդ յերկու մեթոդների կիրառումից ստացված արդյունքները տարբեր են լինում: Այսպես, անհատական մեթոդով վորոշված ժողովրդական յեկամուտը սովորաբար ավելի յե լինում ունալ մեթոդով վորոշված յեկամուտից: Այդ բացատրվում է նրանով, վոր արտադրութեան բնագավառում ստեղծված ժողովրդական յեկամուտը, վերաբաշխման յենթարկվելով, վորպես յեկամուտի աղբյուր է ծառայում բնակչութեան մի

շարք սոցիալիստական խմբերի համար, վորոնք ամիջականորեն չեն մասնակցում այդ յեկամուտն ստեղծելու գործին: Որինակ, բանվորը, վորի աշխատանքը զուտ արտադրանք է ստեղծում, ստանում է աշխատավարձի ձեւով այդ արտադրանքի մի մասը և բավարարելով իր կուլտուրական կարիքները, (կինո, թատրոն և այլն), իր հերթին իր յեկամուտի մի մասը տալիս է ուրիշներին: Այսպիսով, ուրեմն, ժողովրդական յեկամուտը, վորը հաշվի յե առնված վորպես բանվորների յեկամուտ (աշխատավարձ), սովորաբար հաշվի յե առնվում նաև վորպես այն անձի յեկամուտ, վորը ծառայութիւն է մատուցել և ստացել է բանվորի ստեղծած յեկամուտի մի մասը: Ուրեմն, բանվորի յեկամուտի մի մասը յերկրորդ անգամ է հանդես գալիս վորպես այն անձի յեկամուտ, վորը ծառայութիւններ է ստեղծում:

Մենք արգեն նշեցինք, վոր ժողովրդական յեկամուտը պետք է վորոշել ըստ սոցիալական այն խմբավորումների, վորոնք բնորոշում են այդ յեկամուտի արտադրութեան, բաշխման, վերաբաշխման և սպառման դասակարգային ելութիւնը: Ներկայումս մի նոր սխեմա յե մշակված, վորը հասակորեն դիֆերենցում է ժողովրդական յեկամուտն ըստ դասակարգային հատկանիշների: Այդ սխեմայով ժողովրդական յեկամուտը հետևյալ կերպ է ստորաբաժանվում. 1) սոցիալիստական տնտեսութեան յեկամուտներ, վորոնց թիւում՝ ա) պետական տնտեսութիւնը, բ) կոոպերատիվ տնտեսութիւնը (նեւրադյալ կոոպերատիվութիւնները, 2) անհատական արտադրողների յեկամուտներ, վորոնց թիւում՝ բանվորների և ծառայողների յեկամուտները և կուտնտեսականները, կոոպերացված արհեստավորների և տնայնագործների անհատական յեկամուտները, 3) մանր-ապրանքային տնտեսաձև և 4) կապիտալիստական տարբեր յեկամուտները: Ինչպես տեսում ենք այս սխեմայից, սոցիալական խմբավորումը վորոշում է բնակչութեան յուրաքանչյուր խմբի բաժինը ժողովրդական յեկամուտի մեջ, այդ խմբի տեղն ու դերը արտադրութեան և բաշխման մեջ, բնորոշում է դասակարգային ելութիւնն ու սոցիալիստական շինարարութեան մեջ կատարվող տեղաշարժերը: Այդ վերջին հանգամանքն առանձնապես կարեւոր է, քանի վոր «ժողովրդական յեկամուտն ըստ դասակարգների բաշխելու հարցը՝ հիմնական հարց է հանդեսանում բանվորների և գյուղացիների նյութական կուլտուրական դրութեան տեսակետից» (Ստալին, «Լենինի գործի հարցեր» էջ 667):

Ժողովրդական յեկամուտ ստեղծող ճյուղեր են՝ արդյունաբերութիւնը, գյուղատնտեսութիւնը, շինարարութիւնը, տրանսպորտն ու կապը, առևտուրը, հասարակական սնունդը:

Ժողովրդական յեկամուտը, վորն ստեղծվում է արտադրութեան պրոցեսում և բաշխվում առանձին սեկտորների ու բնակչութեան սոցիալական խմբերի միջև, հետագայում վերաբաշխվում է թե փոխանակման և թե ֆինանսական սխտեմի միջոցով: Այդ վերաբաշխման պրոցեսները տեղի յեն ունենում հանրայնացված սեկտորի և անհատական սեկտորի ներսում, դասակարգների, քաղաքի և գյուղի, տնտեսական շրջանների միջև: Վերաբաշխելով միջոցները, ֆինանսական սխտեմը կազմակերպում, փոխում և օւղղութիւն է տալիս ժողովրդական յեկամուտին հոգուտ սոցիալիստական շինարարութեան: Ներկայումս պետական բյուջեյի կողմից վերաբաշխվող ռեսուրսները կազմում են ամբողջ ժողովրդական յեկամուտի 3/4-ից ավելին:

Ժողովրդական յեկամուտը ԽՍՀՄ-ում տարեցտարի անընդհատ աճում է: Այսպես, առաջին հնգամյակում այդ յեկամուտը 1929 թ. 28,9 միլիարդ ռուբլուց հասնում է 1932 թ. 45,5 միլիարդ, ռուբ., իսկ 1934 թ. 60,2 միլիարդ ռուբ.:

Միմիայն 1934 թ. Ժողովրդական յեկամուտի աճը 1933 թ. համեմատությամբ կազմում է 20,4%, ընդվորում տարեցտարի աճելանում է սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը, վորը 1928 թ. 44%-ից բարձրանում է 1934 թ. հասնում է 95%-ի: Վերաբաշխելով Ժողովրդական յեկամուտը, Ֆինանսական սխտեմը դրանով իսկ մեծ չափով ազդում է Ժողովրդական յեկամուտ ստեղծելու վրա: Միաժամանակ մի շարք Ֆինանսական կոնկրետ մեթոդներով Ժողովրդական յեկամուտի մի վորոշ մասը մորելիզացիայի յենթարկելով առանձին սեկտորներում ու սոցիալական խմբերի մեջ է ուղղելով այդ յեկամուտը դեպի Ժողովրդական տնտեսությունը, մեր Ֆինանսական սխտեմը, դրանով իսկ ներգործում է ընդլայնած վերարտադրության ընթացքի վրա, ախտիվորեն մասնակցելով հանրայնացված սեկտորում կուտակման ֆոնդեր ստեղծելու գործին, կարգավորելով, սահմանափակելով ու հետդհետ դուրս մղելով կապիտալիստական սեկտորի կուտակումները: Ֆինանսական սխտեմի այդ վերաբաշխման մեթոդները շնորհիվ մեզ հաջողվեց մեր յերկիրն ազրարային յերկրից դարձնել ինդուստրիալ-ազրարային: Յեթե 1928 թ. արդյունաբերության տեսակարար կշիռը յերկրի ամբողջ արտադրանքի մեջ կազմում էր 44%, ապա 1934 թ. կազմում է արդեն 78,2%:

Այսպիսով, ուրեմն, Ֆինանսական սխտեմն ախտիվ դեր է խաղում Ժողովրդական յեկամուտ ստեղծելու գործում, բաշխում է այդ յեկամուտը ճյուղերի և դասակարգերի միջև, արագացնելով ընդլայնած վերարտադրության տեսակերն ամբողջ խորհրդային տնտեսության մեջ:

3. Հ Ա Ր Կ Ե Ր

Խորհրդային հարկի բնույթը կարելի յե ճշտորեն պարզել այն ժամանակ միայն, յեթե նկատի ունենանք Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության մեջ այդ հարկի ունեցած քաղաքական, Ժողովրդական-տնտեսական դերը: Անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու հիմնական խնդրի իրագործումը բնորոշում է հարկային հարաբերությունների բովանդակությունը խորհրդային տնտեսության մեջ և հարկի վորպես անցման եկոնոմիկայի տնտեսական կատեգորիայի զարգացումը: Մեզ մոտ հարկերը պրոլետարական պետության դասակարգային քաղաքականության հզոր լծակն են:

Անցման շրջանի բազմաձևությունը և սոցիալ-տնտեսական սեկտորների հարաբերությունների տարբեր բնույթը «պայմանավորում են այն դանազանությունները, վորոնք գոյություն ունեն խորհրդային հարկի կատեգորիաների ներսում: Սակայն սրանք զանազանություններ են միասնության մեջ, ընդվորում խորհրդային հարկի կատեգորիաների այդ միասնությունը բնորոշում է հենց իր դասակարգային բնույթով, այն բանով, վոր հարկերը ԽՍՀՄ-ում պրոլետարիատի դիկտատուրայի լծակն են:

«Այդ միասնությունը դասակարգերի վերացման տարբեր ձևերի, սոցիալիստական շինարարության տարբեր ձևերի միասնություն է, միասնություն ԽՍՀՄ տնտեսական տարբեր ձևերի զարգացման պրոցեսում» (Ստալին): Անցման շրջանի հասարակական տնտեսության հիմնական ձևերի վերարտադրությունը կարգավորելու գործում պրոլետարիատի կարեվորագույն միջոցներից մեկը լինելով, հարկերը միաժամանակ մի լծակ են կարգավորելու համար տնտեսական տարբեր ձևերի հետեին կանգնած հիմնական ուժերի կուտակման և սպառման ֆոնդերը:

«Հասարակական տնտեսության հիմնական ձևերն են՝ կապիտալիզմը, մանր-ապրանքային արտադրությունը, կոմունիզմը: Այդ հիմնական ուժերն են՝ բուրժուազիան, մանր բուրժուազիան (մանավանդ գյուղացիությունը), պրոլետարիատը» (Լենին):

Տնտեսական այս ձևերից յուրաքանչյուրի վերաբերմամբ պրոլետարիատը տարբեր մեթոդներով է կիրառում և ոգտագործում իր հարկային լծակները:

Տարբեր տիպի հարկերում արտացոլվող դասակարգային հակասությունների բարդ հանգույցի մեջ, այդ հակասությունների արտահայտության բարդ բաղաձևվության մեջ բոլոր հարկերը սոցիալիստական արտադրական հարաբերությունների մի հզոր գնդ են, վորն ապահովում է սոցիալիզմի վերջնական հաղթանակը: Քանի վոր Ֆինանսական կատեգորիաները բաշխման և վերաբաշխման կատեգորիաներ են, միաժամանակ ախտիվորեն ներգործելով արտադրական պրոցեսի բոլոր ստադիաների վրա, հարկի դերը նախ և առաջ բնորոշվում է նրա՝ վորպես Ժողովրդական յեկամուտի վերաբաշխման մեթոդի նշանակությունը: Հարկերը մի միջոց են, վորով պլանայնորեն վերաբաշխվում է հասարակական արդյունքը դասակարգերի, սեկտորների և տնտեսության ճյուղերի միջև անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար: Հարկերը միջոցների մորելիզացիայի այլ մեթոդներից տարբերվում են նրանով, վոր հարկը միջոցների մորելիզացիայի մի պարտադիր ձև է և դրանով իսկ ապահովում է պետության այն կայուն ռեսուրսները, վորոնք անհրաժեշտ են մի շարք պետական խնդիրներ լուծելու համար: ԽՍՀՄ հարկերը բնորոշելիս շատերն աշխատում են մի ինչ վոր ընդհանուր նմանություն գտնել կապիտալիստական հարկերի հետ և հիմնավորել այդ հարկերի «վերասերումը» անցման շրջանի պայմանների համեմատ: Այդ բոլոր փորձերն ոպորտունիստական յեղրակացությունների յեն բերում:

Մենք արդեն ասեցինք, վոր հարկերը մեզ մոտ զուտ դասակարգային բնույթ ունեն: Սակայն, մի քանի տնտեսագետներ առարկում են դրա դեմ և ուղում են հակառակն ապացուցել: Այսպես, որինակ, Կուզոկովը գրում է. «Նրանք, ովքեր տեղի կամ անտեղի ուղում են լինել կամ իրենց ձևվացնել հարյուր տոկոսային մաքսիստներ, խոսում են խորհրդային հարկերի ցայտունորեն արտահայտված դասակարգային բնույթի մասին... Մինչդեռ... խորհրդային հարկային սխտեմը դասակարգային բնույթի խիստ արտահայտված թուլացում է բնորոշում»:

Կուզոկովովի դասակարգությամբ (կլասիֆիկացիայով) հարկերը բաժանվում են դասակարգային հարկերի և «ինքնահարկման»: Այնուհետև,

ինքնաբերական ըստ Կոնգրեսի, մի մեթոդ է, վերով հարկադրաբար կողմերացվում են տվյալ դասակարգի միջոցները նույն դասակարգի նպատակներին համար, իսկ դասակարգային հարկն ընկնում է տվյալ պետական իշխանությունն սոցիալական վոչ հարազատ դասակարգերի վրա: Հիմնվելով Լենինից բերված այն ցիտատի վրա, թե «մեր խորհրդային հանրապետություն մեջ սոցիալիստական կարգը հիմնված է յերկու դասակարգի՝ բանվորների ու գյուղացիների համագործակցության վրա», Կոնգրեսի վրա ապացուցում է, վոր ԽՍՀՄ-ի պայմաններում հարկերն իրենց դասակարգային բնույթը կորցրել են: Հետևապես, այն հարկերը, վոր խորհրդային պետությունը դնում է գյուղացության վրա, ըստ էության պետք է դիտել վոչ թե վորպես դասակարգային հարկեր, այլ վորպես ինքնահարկում, հենց իր՝ պրոլետարիատի վրա ընկնող հարկերի կողքին» (Կոնգրեսի):

Մինչդեռ պրոլետարիատի և գյուղացիության փոխհարաբերությունները հիմնված են դաշինքի վրա և միաժամանակ յենթադրում են պրոլետարիատի սոցիալիստական տենդենցների պայքարը մանր-ապրանքային տնտեսության կապիտալիստական տենդենցների դեմ, և այդ դասակարգային պայքարի պրոցեսս է: Նախապատրաստելով աշխատավոր գյուղացիության շրջադարձը դեպի սոցիալիստական ուղին, պրոլետարիատի դիկտատուրան արմատախիլ է անում այդ տենդենցները, աշխատավոր գյուղացիներին սոցիալական վերամշակելու և այդ հիմքի վրա կուլակությունը՝ վորպես դասակարգ վերացնելու միջոցով: Այս դեպքում աշխատավոր գյուղացիների վրա ընկնող հարկերը մանր-ապրանքատադրողին կոլտնտեսական, սոցիալիստական հասարակության ակտիվ կադրերն կոլտնտեսական, սոցիալիստական հասարակության ակտիվ կադրերն կոլտնտեսական, սոցիալիստական լծակների դեր են խաղում: Իսկ Կոնգրեսի թեորիայով դուրս է գալիս, վոր հարկերը վոչ մի ազդեցություն և ներգործություն չունեն մանր-ապրանքային սեկտորի վերամշակման գործում, վոր պրոլետարիատի ու գյուղացիության միջով վորրևե հակասություններ գոյություն չունեն, և վոր մանր արտադրողը չներաճում է սոցիալիզմի մեջ ինքնահոսով, անկախ դասակարգային պայքարի պրոցեսսից:

Այսպիսով, ուրեմն, Կոնգրեսի թեորիան վոչ այլ ինչ է, բայց յեթ հարկային կատեգորիաների աջակցությունից հանձնվող հարկերը, այլև պրոլետարիատից հանձնվող հարկերը մի ինչ վոր «ապադասակարգային» ինքնահարկում չեն: Իր պետությունը հարկեր վճարելով, պրոլետարիատը լայնացնում է սոցիալիստական կուտակման ֆոնդը և ապահովում է սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման գործը:

Մի շարք տնտեսագետներ աշխատում են գտնել խորհրդային և կապիտալիստական հարկի ընդհանուր բնորոշումը: Այսպես, պրոֆ. Սորոկը գրում է, վոր «հարկ ասելով պետք է հասկանալ մի հարկադրական տուրք, վոր պետական իշխանությունը գանձում է տնտեսական առանձին անձներից կամ տնտեսություններից իր վոչ արտադրողական ծախսերը ծածկելու կամ տնտեսական քաղաքականության վորև է խնդիրները լուծելու համար, առանց հարկատուներին հատուկ եկվիվալենտ հատկացնելու»: Մենք դեռ չենք խոսում այն մասին, թե վորքան անորոշ է ձևակերպված

այստեղ հարկի հասկացողությունը, սակայն անեկվիվալենտության սկզբունքը բացարձակապես անընդունելի յե մեր պայմաններում: Իհարկե, մեզ մոտ պետությունը հարկերի դիմաց և առանձին հարկատուներին անմիջաբար հատուցում չի տալիս վորեկ ծառայություններով, բայց և այնպես, վորչափով հարկերի կարգով ժողոված միջոցները ծախսվում են վերաբաշխողության պրոցեսսի ընդլայնման և աշխատավորության նյութական ու կուլտուրական դրության բարելավման համար, դրանք վերադարձ միջոցներ են: Այդ նշանակում է, վոր պետությունը աշխատավորությանը ծառայություններ է մատուցում (դպրոցներ, հիվանդանոցներ և այլն) հարկային մեթոդով կուտակվող միջոցների հաշվին և հարկերի միջոցով ել ներգործում է սոցիալիստական սեկտորի վերաբաշխողության վրա: Հասկանելի յե, վոր հարկերը վերադարձնելի չեն կապիտալիստական տարերի համար, քանի վոր հարկի նպատակը դրանց սահմանափակումն ու դուրս մղումը, տվյալ ետապում՝ նաև լրիվ վերացումն է:


Գոյություն ունեցող սովորական դասակարգության համաձայն հարկերը բաժանվում են ուղղակի և անուղղակի հարկերի: Ուղղակի հարկեր սովորաբար կոչվում են այն հարկերը, վոր հարկատուն անմիջաբար է վճարում պետական ֆինանսական ապարատին: Իսկ յեթե այդ վճարումը կատարվում է առանց ֆինանսական ապարատի անմիջական պահանջի ծախսերը կատարելու ընթացքում, ապա այդ դեպքում խոսքը վերաբերում է անուղղակի հարկին» (Սոկոլնիկով): Այլ խոսքով, ուղղակի հարկերն ընկնում են սեկտորի յեկամտի վրա, իսկ անուղղակի հարկերը՝ ծախսերի վրա:

Ինչպես տեսնում ենք, հարկերի այս գույն ֆորմալ դասակարգության մեջ ընդունված է հարկերի փոխադրելիության կամ անփոխադրելիության սկզբունքը: Հարցի այսպիսի դրվածքը ճիշտ չէ: Փոխադրել կարելի յե ինչպես ուղղակի հարկերը, նույնպես ել անուղղակի հարկերը, քանի վոր փոխադրելու հնարավորությունը վոչ թե հարկման ձևով է վորոշվում, այլ գների գոյացման պայմաններով:

Կապիտալիստական տնտեսության պայմաններում հարկերն ուղղակի և անուղղակի հարկերի բաժանելը սոցիալական խոշոր նշանակություն ունի, քանի վոր ուղղակի հարկերի ելությունն այն է, վոր դրանք հարկատվի համար քողարկված հարկեր են: Ինչպես հայտնի յե, նույն կապիտալիստական տնտեսության մեջ ուղղակի և անուղղակի հարկերն աշխատավոր մասսաների լրացուցիչ շահագործման մի ձև են և անուղղակի հարկումը տիրող դասակարգերի համար հարկման ծանուցությունն աշխատավորության վրա փոխադրելու ամենից շահավետ ձևն է:

Մեր խորհրդային եկոնոմիկայում հարկերի այդպիսի բաժանումն անընդունելի յե: Մենք արդեն վերը նշեցինք, վոր մեր բոլոր հարկային կատեգորիաները գույն դասակարգային բնույթ ունեն: Վորովհետև մեզ մոտ գներն ու գների գոյացումը կարգավորում և պլանավորում է պետությունը, ուստի ուղղակի և անուղղակի հարկերի մասին խոսք լինել չի կարող: Վերականգնման շրջանի պայմաններում (ՆեՊ-ի առաջին տարիներում) գները գոյացման վրա վորոշ չափով ազդում ելին ժողովրդական տնտեսության չհանրայնացված սեկտորները: Այդ ժամանակ վորոշ իմաստ կա

39818-67



բող եր ունենալ հարկերի այդպիսի բաժանումը, իսկ տվյալ ստադիայում, յերբ չհանրայնացված սեկտորը գրեթե դուրս ե մղված, և գները պետու- թյունն ե պլանավորում առանց շուկայի վորեե ազդեցության, հարկերի այդ բաժանումը կորցրել ե իր նշանակությունը, և այդպիսի դասակար- գումն անխմատ ե:

Մեր սոցիալիստական շինարարության աժմյան ետապում հարկերն աժելի ճնշո կարող ենք դասակարգել, յեթ պարզենք, նրանց դերն անցման եկոնոմիկայի առանձին ձեւերը մեջ: Հիմք ընդունելով այդ, մեր հարկերը կարելի յե բաժանել հետեւյալ չորս խմբերի. 1) կապիտալիստական տար- բերի վրա ընկնող հարկերը, 2) մանրապրանքային արտադրողների վրա ընկնող հարկերը, 3) հարկեր, վոր վճարում ե պրոլետարիատը, և 4) հարկեր, վոր վճարում են հանրայնացված սեկտորի ձեռնարկություն- ները:

Համառոտալի կանգ առնենք այդ հարկերի յուրաքանչյուր խմբի վրա:

1. Կապիտալիստական տարրերի վրա ընկնող հարկերն այդ նույն տարիներին սահմանափակելու, դուրս մղելու և վերացնելու հզորագույն գործիքներից մեկն են: Կապիտալիստական դասակարգերի վերացման պրո- ցեսսը մեզ մոտ մի շարք քաղաքական ու տնտեսական ձեռնարկումների միջոցով և կատարվում, և դրանց մեջ հարկային մեթոդը զգալի դեր ե խաղում: Յեղ յեթե վերականգնման շրջանում հարկերը կարեւորագույն միջոցներից մեկ են յեղել կապիտալիստական տարրերի դեմ արշավելու գործում, ապա վերականգնման շրջանում, հատկապես վերջին ետապում, հարկերի միջոցով դուրս են մղվում ու վերացվում են կապիտալիստական տարրերը: Սոցիալիստական շինարարության ավարտմամբ բոլորովին վերա- նում են կապիտալիստական տարրերը, և պայմաններ են ստեղծվում նաեւ այդ հարկերը վերացնելու համար:

2. Մանրապրանքային արտադրողների վրա ընկնող հարկերի եյու- թյունը մենք պարզած կլինենք, յեթե պարզենք պրոլետարիատի և գյու- ղացիության հարաբերությունները:

Պրոլետարական դիկտատուրան, բռնորեն դուրս մղելով և վերացնելով կուլակությունը վորպես դասակարգ, տնտեսական քաղաքականության մի շարք ձեռնարկումներով արագացնում ե մանր—ապրանքային տնտեսության սոցիալիստական վերականգնման պրոցեսը: Վերականգնման շրջանի առաջին տարիներում պարենհարկը, վերացնելով պարենմասնատրումը, նպաստեց անհատական մանր—ապրանքային տնտեսության արտադրողական ուժերի զարգացմանը և միաժամանակ հանդիսացավ մի միջոց կուլակի վրա հարձակում գործելու, գյուղի միջակ և չքավոր մասսայի դիրքերն ամրաց- նելու, ինչպես նաեւ բանվոր դասակարգի և գյուղացիության մերձեցումն ուժեղացնելու գործում:

Գյուղհարկին անցնելուց հետո այս դրությունն աժելի ևս ամրանում ե, և մի շարք կարեւորագույն քաղաքական-տնտեսական խնդիրներ են զբղծում պրոլետարական պետության առաջ:

14-րդ կուսկոնֆերանցիան ու 14-րդ կուս. համագումարը նշել են այն ձեռնարկումները, վորոնք պետք ե կիրառվեն պրոլետարիատի և գյուղա- ցիության սերտ գաշինքն ստեղծելու համար:

Բանվոր դասակարգի և գյուղացիության մերձեցումն ամրացնելու տե- սակետից խոշոր նշանակություն ունեցավ գյուղհարկի վերականգնումը, վորով ապահովվում եր կուլակության առավելագույն սահմանափակումը, մանր—ապրանքային տնտեսության արտադրողական ուժերի, ինչպես նաեւ տնտեսության կոոպերատիվ ձեւերի զարգացումը, և հենց դրանով հիմքեր եյին նախապատրաստվում բազմամիլիոն գյուղացիության համար կոլեկտի- վացման ռեւսերի վրա անցնելու:

Մեր այժմյան պայմաններում, յերբ ապարտվում ե համատարած կոլ- լեկտիվացման պրոցեսսը, իսկ կուլակությունը, վորպես դասակարգ վերաց- ված ե, գյուղհարկը մի հզոր միջոց ե դառնում կոլտնտեսությունները կազմակերպչորեն—տնտեսապես ամրացնելու, պլանի համար պայքարելու, կոլտնտեսության աշխատանքի վորակը, ինչպես նաեւ աշխատանքի սոցիա- լիստական կարգապահությունը բարձրացնելու տեսակետից, նպատակ ունե- նալով բարձրացնել ճշգրտ կոլտնտեսականներին... և հասցնել ունեւոր- ների մակարդակին, այն մարդկանց մակարդակին, վորոնք միջերջների ա- ռատություն են վայելում և միանգամայն կուլտուրական կյանք են վա- րում (Ստալին):

Մենատնտեսի վերաբերմամբ գյուղհարկը մի միջոց ե, վոր նպաստում ե նրա՝ կոլտնտեսային գյուղացիության շարքերն անցնելու:

Այս բոլորը վոչ միայն գյուղացիության վրա ընկնող հարկերն, այլ և կոոպերացիայի չընդգրկած տնայնագործների ու արհեստավորների վրա ընկնող հարկերն ե վերաբերում: Թեեւ դրանց հարկումն այլ մեթոդներով ե կատարվում (յեկամտային հարկ), այնուամենայնիվ հարկային այդ կա- տիգորիաների սկզբունքային նշանակությունն ու զարգացման ուղիները նույնն են, ինչպես և գյուղհարկինը:

3. Պրոլետարիատի վրա ընկնող հարկերը մեզ մոտ աշխատավորու- թյան կողմից սոցիալիստական կուտակումներն կազմակերպված կերպով մասնակցելու, ինչպես նաեւ պրոլետարիատի յեկամուտները ֆինանսական լծակների միջոցով դասակարգայնորեն վերաբաշխելու մի ձեւ են: Սոցիա- լիստական շինարարության հաջողությունները, ժողովրդական տնտեսու- թյան հանրացված սեկտորի կուտակման ներքին աղբյուրների ուժեղա- ցումը, պետվորսությունների, խնայրամարկղների և այլ ձեռնարկու- մների միջոցով պրոլետարիատի կուտակումների դերի հսկայական աժելա- ցումը, այս բոլորը ռեալ նախադրային են ոտեղծել հարկերն աստիճա- նաբար իջեցնելու և պրոլետարիատի յեկամուտները սոցիալիստական կարիք- ների համար ոգտագործելու ասպարիզում: Այժմ պրոլետարիատի վճարած հարկերի կարգավորող նշանակությունն անհշան ե: Սակայն այդ չի նշանակում, թե հնարավոր և անհրաժեշտ ֆինանսական ապարատի մի- ջոցով պրոլետարիատի յեկամուտները վերաբաշխելու: Հարկեր վճարելով, պրոլետարիատը մասնակցում ե սոցիալիստական կուտակումների ֆոնդերի գոյացման պրոցեսին: Այդ մասնակցության բնորոշ գիծն այն ե, վոր հա- մեմատաբար նվազում ե հարկերի դերը պրոլետարիատի ռեսուրսների մո- լելիզացիայի ընդհանուր պլանի մեջ և միաժամանակ ուժեղանում են աշ- խատավորության կազմակերպված կուտակումների (փոխառություններ, ավանդներ խնայրամարկղներում և այլն) դերը: Այս հանգամանքը աշ-

խատալորութեան ակտիվութեան ու դասակարգային գիտակցութեան բացահայտ ցուցանիշն է:

4. Հանրայնացված սեկտորի ձեռնարկութեանները վրա ընկնող հարկերը նույն սեկտորի ներսում ռեսուրսների միջնորդային վերաբաշխման մի պարտադիր մեթոդ են, վորը կիրառվում է պիտուութեան պարտադիր սանկցիայով: Հարկերի միջոցով առանձին ճյուղերի կուտակումները կարգավորվում ու վերաբաշխվում են սոցիալիստական շինարարութեան ընդհանուր պլանի համեմատ: Մի քանի տնտեսագետներ կարծում են, թե տնտեսութեան հանրայնացված սեկտորում հարկային հարաբերութեանները գոյութիւն ունեն նրա համար, վոր մեր եկոնոմիկայում սոցիալիստական ձեռնարկութեանները շարքում կան և մանր—ապրանքային կապիտալիստական ձեռնարկութեաններ, ընդլորում, այդ պետական ձեռնարկութեանները, «մասնավոր ձեռնարկութեանների ձեռք են ընդունել» և վորպես «մասնավոր ձեռնարկութեաններ... պետք է նույնպես հարկեր վճարեն» (Սոկոլով): Այդ նույն տեսակետն ունի և Շախնովսկայան, վորն առաջարկում է հարկման յենթարկել սոցիալիստական սեկտորը և «Ֆինանսական հարաբերութեանները հաշվարկային հարաբերութեանների վերածել»: Այս կոնցեպցիայով դուրս է գալիս, վոր մեր հարկերը կապիտալիստական ժառանգութեան են, վորոնցից արդեն ժամանակն է հարաժանվելու, մասնավոր, յերբ մենք թելակոխել են սոցիալիզմի շրջանը: Սակայն, հարկման սխտեմից մենք կարող ենք հրաժարվել այն ժամանակ միայն, յերբ անցնենք անմիջական, սոցիալիստական բաշխման, յերբ անհրաժեշտ չեն լինի վերաբաշխման հարաբերութեանները: Բայց այդ կարելի չէ իրագործել այն ժամանակ, յերբ բաշխումը կատարվի աշխատանքային հաշվառման հիման վրա և դրամի փոխարեն տրվեն աշխատանքային տալոններ, յերբ պլանավորումն ու կոնտրոլն իրագործվի վոչ թե դրամական ձևով, յերբ տնտեսական կարգն ու ռուբլով կոնտրոլը վորպես պլանավորման մեթոդներ, վերանան և այլն: Իսկ այժմ, յերբ հանրայնացված սեկտորի ռեսուրսները վորոշ դեր են խաղում մեր ժողովրդական տնտեսութեան մեջ, և յերբ անմիջական, անդրամ բաշխման անցնելն անհնար է, այդ մասին խոսելն վաղաժամ է:

Ճիշտ չի նաև Շախնովսկայայի յերկրորդ տեսակետն այն մասին, թե անհրաժեշտ է սահմանել միասնական վճար հանրայնացված սեկտորի համար, առանձին ձեռնարկութեաններին թողնելով միայն արտադրութեան ծախսերի ռեսուրսները, իսկ ինքարժեքի և մեծածախսի գների ամբողջ տարբերութեանը մոցնել միասնական ֆինանսական պլանի մեջ՝ վերաբաշխելու համար: Հարցի նման լուծումը կդիմադրկեր ձեռնարկութեանը և արգելք կհանդիսանար նրա ինքնուրույն գործունեութեանը: Այլ խոսքով, այստեղ հաշվի չի առնվում տնտեսական հաշվարկի և ձեռնարկութեան ֆինանսական վերահսկողութեան ամբողջ նշանակութեանը: Բացի դրանից, այստեղ թերագնահատվում է նաև բյուջեյի դերը ֆինանսական պլանավորման սխտեմում: Միասնական վճարման սխտեմը հիմնավորվում է նրանով, վոր պլանային կարգապահութեանն ալիւորդ է դարձնում ֆինանսական հարկադրանքի հարկային ներգործութեան մեթոդի անհրաժեշտութեանը և ֆինանսական հարաբերութեանները հաշվարկային հարաբերութեանների յի վերածումը:

Այսպիսով, ուրեմն, այստեղ անտեսվում է ֆինանսական լծակների դերը ժողովրդական յեկամտի վերաբաշխման գործում, և դրվում ֆինանսների «մահացման» հարցը: Այդ տեսակետը միանգամայն սխալ է և «ձախ» խոտորում: Չի կարելի թերագնահատել մի այնպիսի հիմնական լծակի դերը, վորպիսին բյուջեն է՝ ընդլայնած վերաբաշխութեան խնդիրներն իրագործելու, պիտութեան պաշտպանութեան, կառավարչական և սոց. կուտակման ծախսերն ապահովելու ապարիզում:

Անմիջական հարկման հետ միասին հանրայնացված սեկտորը հարկվում է նաև շահույթից հատկացումներ կատարելու միջոցով:

Ինչպես հայտնի չէ, մեր եկոնոմիկայի պայմաններում գնի մեջ, բացի արտադրական ծախսերից, մտնում են նաև այն կուտակումները, վորոնք ծախսվում են ընդլայնած վերաբաշխութեան նպատակներին համար: Այդ կուտակումները բաժանվում են հարկային վճարումների և շահույթի: Մինչդեռ հանրայնացված սեկտորից գանձվող հարկը սոցիալիստական կուտակման մի հատուկ ձեռք է, և այդ հարկը պետութեանը մոցնում է ապրանքի գնի մեջ, որինստիպական նորմաների հիման վրա կատարվում է հարկումը, ձեռնարկութեանների շահույթը՝ դրանց տնտեսական գործունեութեան արդյունքն ու շահավետութեան չափանիշն է: Ուստի ձեռնարկութեան շահույթից հատկացումներ կատարելով, վերաբաշխվում է ֆինանսական սխտեմի միջոցով այդ ձեռնարկութեան սոցիալիստական կուտակումների մի մասը:

Շահույթը հարկից նանով է տարբերվում, վոր վորպես կուտակում մեծ մասամբ ծախսվում է ձեռնարկութեան՝ իր ընդլայնած վերաբաշխութեան կարիքների համար, իսկ հարկը, վորպես կուտակում ակումուլացիայի յի յենթարկվում պետբյուջեյում և սոցիալիստական պլանի համաձայն բաշխվում է առանձին ճյուղերի միջև՝ նույն ընդլայնած վերաբաշխութեան համար:

Ֆինանսական քաղաքականութեանը վերաբերող հատկածում մենք լուսաբանեցինք ԽՍՀՄ հարկային սխտեմի զարգացման հիմնական ետապները: Այժմ մեզ անհրաժեշտ է կանգ առնել 1930 թ. հարկային ռեֆորմի վրա:

Ինչպես մենք արդեն նշեցինք, խորհրդայնացման առաջին տարիներում (1917—1920 թ. թ.) մինչ հոկտեմբերյան Ռուսաստանի հարկային սխտեմը կապիտալիստական տարրերի եքսպրոպրիացիայի համար ոգտագործելու հետ միասին (հարկի բարձր դրույքներ), լրացուցիչ մի շարք նոր հարկեր մոցվեցին (միանվագ, արտակարգ հարկեր և այլն): Սակայն բյուջեյի նաաուրալիզացիան և թղթադրամի արագընթաց արժեքազրկումը հնարավորութեան չափին դրամական հարկերի սխտեմը զարգացնելու, և 1921 թ. փետրվարի 3-ի դեկրետով բոլոր դրամական հարկերի գանձումը դադարեցվեց:

Նոր տնտեսական քաղաքականութեան շրջանում հնարավոր չեղավ նոր հարկային սխտեմ տեսնելը:

Միաժամանակ կուտակութեանն իր առաջ խնդիրն է դնում հարկային ապարատի կառուցմանը զուգընթաց զարգացնել նաև ուղղակի հարկման սխտեմը և հետզհետե հրաժարվել անուղղակի հարկերից:

Այդ շրջանի հարկային շինարարության բնորոշ գիծն այն է, վոր բազմաթիվ հարկեր ու տուրքեր գոյություն ունեյին, և առևտրաարդյունաբերական շրջանառությունը մի քանի անգամ եր հարկվում էր տարբեր ողակներում:

1930 թ. հանրայնացված սեկտորի վճարումները թիվը կազմում էր 86, իսկ մասնավոր սեկտորին՝ 76: Հարկային սխառմի այդպիսի կառուցվածքը վերականգնման շրջանում, յերբ դեռ հաշվառում չեր կազմակերպված, պետք է հնարավորություն ստեղծեր լրիվ ընդգրկելու հարկվող ոբյեկտների յեկամուտները:

Ժողովրդական տնտեսություն սոցիալիստական վերակառուցման հանդուրժողուններն ու պլանային սկզբունքի հսկայական աճումը բոլոր նախադրյալները ստեղծեցին մեր վարկային ու հարկային սխառմները վերակառուցելու համար: Վճարումների բազմակիությունն ու հարկման բազմողականությունը վոչ միայն անհրաժեշտ չեյին, այլ և վորոշ դեպքերում արգելեյին հանդիսանում տնտեսական որգանների գործունեությունը դեմ:

Հանրայնացված սեկտորի վերաբերմամբ այդ վերակառուցումը սկսվեց բաժային (ակցիդային) հարկման սխառմի վերակազմությունը ու միանվագ հարկման փորձեր անցկացնելուց (բաժերի գանձման կենտրոնացում, մի շարք մանր բաժերի վերացում, միանվագ արհեստագործական հարկում այնպիսի ապրանքների, ինչպես՝ տեքստիլը, շաքարը, ծխախոտը և այլն):

Այս բոլոր վերակառուցողական ձեռնարկումների հետևանքով ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմբորհի 1930 թ. սեպտեմբերի 2-ի վորոշմամբ հարկային ռեֆորմ մտցվեց:

Հարկային ռեֆորմը յերևում էր հարկային վճարումներն առավելագույն չափով կրճատելու և միավորելու սկզբունքներից: Հանրայնացված սեկտորի 86 հարկային վճարումներից թողնվում էյին միայն 28-ը, իսկ մասնավոր սեկտորի 76 վճարումներից՝ 31-ը և հանրայնացված սեկտորի համար սահմանվում էյին հետևյալ յերկու հիմնական վճարումները.—

ա) շրջանառության հարկ, վորը միացնում էր իր մեջ 53 վճարում (նեբառյալ և 12 տեսակի բաժերը և բ) շահույթից կատարվող հատկացումներ: Իսկ մասնավոր սեկտորի համար — ա) արհեստագործական հարկ, վորը միացնում էր իր մեջ 32 վճարում և բ) յեկամային հարկ՝ յերեք վճարում:

1930 թ. հատուկ յեռամսյակում հարկային սխառմի մեջ մտցվեցին մի քանի ուղղումներ, վորոնք վորոշ խեղաթյուրումների հետևանք էյին, իսկ հետագա տարիներում մի շարք նոր ուղղումներ և լրացումներ մտցվեցին, վերանայվեց շրջանառության և շահույթի հարկման պրակտիկան, վերականգնվեցին մի քանի վերացված վճարումներ, նոր վճարումներ մտցվեցին հատկապես կապիտալիստական տարրերի համար:

Տեղի սղությունը մեղ թույլ չի տալիս կանգ առնել հանրայնացված և մասնավոր սեկտորների բոլոր վճարումների վրա, ուստի մենք կանգ կառնենք միայն կարեվորագույն հարկերի վրա:

Ինչպես նշվեց, հանրայնացված սեկտորի առաջին հիմնական վճարումը շրջանառության հարկն էր, վորի տեսակարար կշիռը պետբյուջեում 1931 թ. 51 տոկոսից բարձրանում, հասնում է 1934 թ. 59,8 %-ի, իսկ 1935 թ. 78,2 %-ի:

Շրջանառության հարկը վճարում է այն ձեռնարկությունը, վորը տվյալ ապրանքն է պատրաստել կամ մթերել, և յեթե այդ ապրանքն արտագրողի կամ մթերողի մոտ մի անգամ արդեն հարկվել է, հետագայում նույն հանրայնացված սեկտորի սահմաններում այլևս չի հարկվում: Սկզբում հարկումը կենտրոնացված էր միավորություններում, իսկ հետո տեղերին շահագրգռելու համար, այդ հարկումն ապակենտրոնացվեց, և հարկ վրճարել սկսեցին այն միավորումները, վորոնք անմիջականորեն իրենք էյին իրացնում ապրանքը:

Հարկի դրույքները վորոշելիս հիմք ընդունվեց կառավարության դիրեկտիվն այն մասին, վոր «հարկային ռեֆորմի հետևանքով չպետք է ալելանա հարկերի ընդհանուր գումարը, ինչպես նաև չբարձրանան ապրանքի գներն ու վերադիր ծախսերը»:

Այս դիրեկտիվների հիման վրա մշակվեցին հարկի դրույքներն ու ստորաբաժանվեցին ըստ ապրանքների առանձին տեսակների և ամենից բարձր դրույքներ սահմանվեցին այն ապրանքների համար, վորոնք մինչև այդ բաժով էյին հարկված յեղի:

Հանրայնացված սեկտորի ձեռնարկություններից գանձվող յերկրորդ հարկը շահույթից կատարվող հատկացումներն են:

Հարկային ռեֆորմ կիրառելիս մի շարք փոփոխություններ մտցվեցին, միավորելով մեկ հատկացման մեջ մի քանի նախկին վճարումներ և հարկելով ընթացիկ կուտակումներն, այսինքն՝ ընթացիկ և վոչ անցյալ շրջանառության տարվա շահույթը, ինչպես այդ առաջ եր կատարվում: Հատկացումների դրույքները սահմանվում էին նայած ձեռնարկությանը՝ բյուջեյից ֆինանսավորվող ձեռնարկության համար հատկացման դրույքն ալելի ցածր էր, քան բյուջեյից դուրս ֆինանսավորվողի համար սահմանվածը:

Բացի այս բոլոր վճարումներից, հանրայնացված սեկտորից գանձվում է նաև կինոթատրոնների շրջանառության հարկ, վոչ-ապրանայքն գործառնությունների հարկ, խորհատնություններից վերցվող հարկ և յեկամային հարկ (վորը փոխարինում է կուպիւրացիայի և խառը բաժնետիրական ընկերությունների շահույթից կատարվող հատկացումներին):

Քաղաքային բնակչությունից և մասնավոր սեկտորի ձեռնարկություններից գանձվող հիմնական հարկեր են արհեստագործական և յեկամային հարկերն ու գերաշույթի հարկը:

Տարբերվելով շրջանառության հարկից, վորն ընկնում է հանրայնացված սեկտորի ապրանքաշրջանառության վրա, արհեստագործական հարկը, բացի մասնավոր ապրանքաշրջանառությունից, տրվում է նաև արհեստագործական բնույթի աշխատանքները կատարելու և ծառայություններ մատուցելու հետ կապված շրջանառության վրա և ապրանքաշրջանառությունը հայտաբերում է մթերման կամ արտադրական ու ապրանքաարտադրական ցանցի յուրաքանչյուր ողակում: Մասնավոր առևտուրը դուրս մղելուց և վերացնելուց հետո, արհեստագործական հարկի դերը խիստ փոփոխվեց և գուռ ռեգիստրացիոն բնույթ ընդունեց, դառնալով մի շարք այլ հարկերի յենթակա անձանց հայտաբերելու մի միջոց:

Յեկամային հարկը քաղաքի մասնավոր սեկտորի վճարումներից խոշորագույնն է և մի հզոր գենք մեր դասակարգային քաղաքականությունը

կիրառելու ու մասնավոր կուտակումը կարգավորելու գործում: Հարկի պատ-
կառվածքն ընդհանուր արտահայտվում է այն արտոնությունների, վորոնք
տրվում են այդ հարկի համաձայն: Հիմնական արտոնությունն այն է, վոր
հարկումից լրիվ ազատվում են գինվորականները, աշխատանքի հերոսները,
թողակառուները և այլն: 1935 թ. հացի, ալյուրի և կրակային քարային
սիստեմի վերացման հետևանքով հարկի դրույքներն աշխատավորության
համար զգալիորեն իջեցված են: Բանվորներն ու ծառայողները հարկվում են
խիստ ցածր դրույքներով և տարեկան հարկը վճարվում է ամիսե-ամիս, մինչ
դեռ մյուս կատեգորիաները 4 նվազում են վճարում: Բնակչության մեծագույն
կատեգորիաները, նայած իրենց սոցիալական դրությունը, հարկը վճարում
են վայրենջ պրոգրեսիվ սանդղակով՝ կառուցված և ստորաբաժնված դրույք-
ներով:

Գերադասելի հարկը հիմնականում վճարում են առևտրական ձեռնար-
կությունների մասնավոր տերերը: Հարկի չափը տվյալ ձեռնարկության
փաստական յեկամուտների և հատուկ նորմաներով նրա համար սահմանված
յեկամուտների միջև յեղած տարբերությունն է: Բնակչության մեծագույն
ընկերներից անհրաժեշտ է նշել նաև ընկերային-կուլտուրական-կենցա-
ղային շինարարության համար գանձվող տուրքը, վորը գանձվում է թե՛ քաղա-
քում և թե՛ գյուղում:

Հարկման կարգը բանվորների և ծառայողների համար նույնն է, ինչ
վոր յեկամտային հարկին:

Գյուղի բնակչության հիմնական հարկը՝ գյուղհարկն է: Նոր տնտեսական
քաղաքականությունն անցնելուց հետո պարենմասնատրումը փոխարինվեց
պարենհարկով, վորը պարենային հարկերի մի կոմպլեքս էր: Հետագայում,
հարկման սխեման ամրացնելու նպատակով, սահմանվեց միասնական ընա-
կան (նստուրալ) հարկ, ընդվորում գոյություն ունեյին նաև դրամական
հարկեր, այն է՝ համաքաղաքացիական, աշխատանքի և սայլ հարկ, ծխա-
յին-դրամական հարկ: 1923—24 թ. ունիֆիկացիայի յենթարկվեցին գյուղի
բնակչության բոլոր վճարումները և մտցվեց միասնական գյուղհարկ, վորն
առաջին տարում խառը ձևով էր գանձվում՝ վորոշ շրջաններում բնաբե-
քով, իսկ այլ շրջաններում՝ դրամով: 1924—25 թ. հարկման բնական ձևը
վերացվեց և փոխարինվեց դրամական հարկմամբ: Ամբողջ հետագա շրջանում
գյուղհարկը յուրաքանչյուր տարի վերակառուցվել է համաձայն այն քաղաքա-
կանության, վոր կուտակությունն ու խորհրդային իշխանությունը վարել
են գյուղում: Գյուղհարկ վճարում են կուտակությունները, չնայած այնուհանդերձ
յեկամուտներ ունեցող կուտակականները, մենատնտեսները և կուլակային
տնտեսությունները: Հարկատուներից յուրաքանչյուր խմբի համար հարկման
հատուկ կարգ է սահմանված:

Տեղի սղություն պատճառով մենք չենք կարող մանրամասն կանգ առնել
գյուղհարկը սահմանելու սկզբունքների և հարկման տեխնիկայի վրա: Այս-
տեղ մենք կնշենք միայն, վոր կուլակության համար հարկման հատուկ կարգ
է սահմանված, վորի նպատակն է կուլակության՝ վորպես դասակարգի վերջ-
նական վերացումը: Այդ առանձնահատկությունները հիմնականում այն են,
վոր յուրաքանչյուր տնտեսություն հարկվում է վոր թե ըստ նորմաների, այլ
ըստ իսկական յեկամտաբերության, վորը վորոշվում է տնտեսական կարգով,

բարձրացված դրույքներով և կուլակներին վոր մի արտոնություն չի տրվում:

Գյուղացիության մեծագույն վճարումներից հիմնականներն են՝ ինքնահար-
կումը, մենատնտեսություններից գանձվող միանվագ հարկը և վերը նշված
կուլակարկը, վոր վճարում են կուտակականներն ու մենատնտեսները: Գյուղ-
դատնտեսական բնակչության ինքնահարկում կարող է տեղի ունենալ նույն
բնակչության կամավոր վորոշմամբ, և ինքնահարկման գումարները ծախսվում
են գյուղի կուլտուրական առևտնտեսական կարիքները բավարարելու համար:
Ինքնահարկման չափը վորոշում է գյուղի բնակչության ընդհանուր ժողովը՝
որենքով նախատեսած սահմաններում:

Մենատնտեսություններից գանձվող միանվագ հարկի նպատակն է (բացի
միջոցներից մոբիլիզացիայից) նպաստել մթերությունների հաջող ապարաման և
մենատնտեսությունների պարտավորությունների կատարմանը: Միանվագ
հարկի նկատմամբ որենքով շրջադրվողներին իրավունք է վերապահվում ռամ-
բողջովին կամ մասամբ հարկից ազատել այն առանձին տնտեսություններին,
վորոնք պարտաճանաչորեն կատարել են պետության հանդեպ իրենց պարտա-
վորությունները՝ դրամական վճարումների և պետական մթերությունների պահան-
քի կատարման ապարիզում: Մյուս կողմից, ռայն դեպքում, յերը առանձին
տնտեսությունները չարամտորեն չեն կատարում պետության առաջադրանք-
ները մթերությունների վերաբերյալ, շրջադրվողներին իրավունք է տրվում այդ
տնտեսության համար բարձրացնել միանվագ հարկի դրույքները:

Մանրամասն կանգ չառնելով կուլտուրաբի վրա, մենք այստեղ կնշենք
միայն, վոր ի տարբերություն հանրայնացված և մասնավոր սեկտորների
վճարումների, վորոնց վերաբերմամբ միութենական որենսդրությունը հարկ-
ման միասնական նորմաներ է սահմանում Միության ամբողջ տերիտորիայի
համար, գյուղի վճարումներն տեղական որդաններն իրենք են կարգավորում:

Քանի վոր մեր դասընթացի մեջ տեղական ֆինանսները չեն մտնում,
մենք այստեղ չենք լուսաբանում այսպես կոչված տեղական հարկերն ու
տուրքերը:

Վերջացնելով, կանգ առնենք նաև մաքսային տուրքերի վրա: Այդ
տուրքը գրվում են խՍՀՄ ներմուծվող և խՍՀՄ-ից արտահանվող բեռների
վրա: Տուրքը խոշոր նշանակություն ունի մեր և արտասահմանի փոխհարա-
բերությունների համար և կարգավորում է մեր ապրանքներն արտահանե-
լու և արտահանումից վալյուտա ստանալու գործը:

Ինչպես արդեն նշվեց, մենք այստեղ կանգ առնենք խՍՀՄ-ում գործող
խոշորագույն հարկային վճարումների վրա, չորսափելով մանր հարկերն ու
հարկման տեխնիկայի կիրառման գործը: Հարկերի ելույթյան լրիվ պատ-
կերը առկա համար վերջում կանգ առնենք նաև հարկերի ու հարկման ծա-
նությունը փոխադրելու պրոբլեմի վրա:

4. ՀԱՐԿԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՅԵՎ ՀԱՐԿԻ ԾԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

ԽՍՀՄ հարկային սխեման և առանձին հարկերի ելույթյունը բնորոշ-
լուց հետո անհրաժեշտ է վերջում կանգ առնել հարկերի փոխադրման և
հարկի ծանրությունը պրոբլեմի վրա:

Այդ պրոբլեմն ինքը մշակման կարոտ է և ամենից քիչ է ուսումնա-

սերված մեր ֆինանսական զբաղանդության մեջ: Ուստի, մենք այստեղ կշո-
շափենք միայն այդ պրոբլեմի հանգուցային հարցերը:

Այս բնագավառին վերաբերող սահմանափակ աշխատությունները նշելի-
յե «Հարկի ծանրությունը ԽՍՀՄ-ում և ստարայեկըյա պետություններում»
գրքովի, վորը կազմել են Գենդելը, Մեքելաձեն, Ստրոգինը և Շմելեյը:
Շմելեյը գրել է այդ հարցի թեորիայի ռեֆլեկտիվ, Մեքելաձեն և Ստրոգինը
հետազոտական աշխատանք են կատարել իսկ Գենդելը տվել է այդ տնտեսա-
գետների աշխատությունների ամփոփումը: Այդ հեղինակները տալիս են հար-
կի ծանրություն վերլուծությունը, հիմնվելով բուրժուական տնտեսագետների
աշխատություններում մեջ բերված տեսական նախադրյալների վրա և ան-
տեսանելով հետազոտման մարքս—լենինյան մեթոդը, և դրանով իսկ շփոթու-
թյան մեջ են գցում ընթերցողին: Այդ տնտեսագետները տալիս են միայն
հարկի միջին տոկոսները՝ հարկատուների բոլոր խմբերի վերաբերմամբ, բա-
ժանելով դրանց քաղաքային և գյուղական հարկատուների, սակայն առանց
սոցիալական խմբերի բաժանելու: Միջին ցուցանիշները հնարավորություն
չեն տալիս վորոշելու, թե ի՞նչ չափով և հարկային սխտեմում պահպանված
դասակարգային սկզբունքը, ինչպես են հարկատուները բաժանվում սոցիա-
լական կատեգորիաների: Հեղինակները մոռացել են, վոր հարկի ծանրու-
թյունն անհավասար կերպով է ընկնում բնակչության զանազան խմբերի
վրա:

Յերեվոյթների մարքսիստական վերլուծությունը հենց նրանով և կա-
տարյալ, վոր պրոցեսները ուսումնասիրվում են նրանց ներքին կապակցու-
թյամբ և խորը հետազոտում է ուսումնասիրության որքեկտը, առանձին ողակ-
ների բաժանելով այն:

Դեռևս Լենինն իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշ-
խատության մեջ ընդգծել է, «վոր բանվորներին ու տերերին միացնելն ու
«միջին» բյուշե դուրս բերելը չափավոր «վիճակի» և «չափավոր» զուտ
յեկամտի պատկեր է տալիս... Բայց նման միջինը միանգամայն ֆիկտիվ
է» (յերկ. ժող. հ. 3. էջ 112):

Հարկի ծանրությունը կարելի յե պարզել միայն բնակչության առան-
ձին խավերի բոլոր յեկամտային աղբյուրները ճշտորեն հաշվի առնելով
և դրանց բյուշեն այս կամ այն ճշտությամբ վորոշելով: Իսկ միջին ցուցա-
նիշներն, որինակ, գյուղացիական մասանների նկատմամբ տալիս են «չա-
փավոր վիճակի պատկերը» և դրանից չեն արտացոլում հարկային սխտե-
մի ներգործությունը, սրա դասակարգային սկզբունքների արտահայտու-
թյունը:

Հարկի ծանրության ուսումնասիրության ասպարիզում խոշոր աշխա-
տանք կատարել է ԽՍՀՄ ժողովրդական կից հատուկ հանձնաժողովը, վորը
տվել է բնակչության վրա ընկնող հարկերի ծանրության ավելի ճիշտ պատ-
կերը, ստորաբաժանելով այդ հարկերը ըստ սոցիալական առանձին խմբե-
րի: Նախապես ուսումնասիրելով բնակչության սոցիալական կազմը, հանձ-
նաժողովը մարքս—լենինյան մեթոդով վերլուծում է խորհրդային պետու-
թյան հարկային սխտեմը: Այնուհետև վիճակագրական աղյուսակները վոչ
միայն պատասխանում են դրված հարցերին, այլ և բնորոշում են մեր ժո-
ղովրդական տնտեսության կառուցվածքը, հնարավորություն են տալիս այդ

տվյալները գործադրել նաև ուրիշ նպատակով՝ մեր եկոնոմիկայի ամենա-
լիակատար հետազոտման համար:

Հանձնաժողովը մեզ չի տալիս առաջադրված պրոբլեմի վորևե թեորե-
տիկական հիմնավորումը, այլ միայն նյութ է պատրաստում դրա համար, և
այդ նյութից կարող է ոգտվել յուրաքանչյուր վոք, ով կկամենա ուսում-
նասիրել մեր ժողովրդական տնտեսության եկոնոմիկան, ուսումնասիրել
խորհրդային Միության հարկային քաղաքականությունը: Այն մեթոդով
գիտն, վոր կիրառել և հանձնաժողովը, ստիպում է հետազոտողին հարկային
քաղաքականության խնդիրները մարքս—լենինյան մեթոդով ուսումնասի-
րելու:

Հարկման ծանրության պրոբլեմն յի հարկ է բարդ պրոբլեմ է, ուստի
և անհրաժեշտ է ավելի ուշադիր և լուրջ մոտեցում ունենալ:

Մեր պայմաններում չի կարելի այդ պրոբլեմն ուսումնասիրել անկախ
մեր հասարակության դասակարգային կառուցվածքից, անկախ այն դասա-
կարգային սկզբունքներից, վորոնք առանձին հարկերի հիմքն են կազմում:
Այս կամ այն միջին ցուցանիշները տալիս անխուսափելիորեն պետք է տալ
նաև յուրաքանչյուր հարկի վերլուծությունը, վորպեսզի ավելի պարզորոշ
ցույց տրված լինի այն յուրաքանչյուր հարկի դերը ֆինանսական տնտե-
սության սխտեմում:

Մեզ մոտ վոչ միայն կարելի յե, այլ և պետք է դնել հարկերի եկվի-
վալենտության հարցը, իհարկե միայն պրոլետարիատի և գյուղացիության
վերաբերմամբ, քանի վոր մասնավոր սեկտորի հարկման եկվիվալենտու-
թյան մասին խոսք անգամ լինել չի կարող: Սակայն, մեզ համար կարևոր
են նաև հենց եկվիվալենտության այդ ձևերը: Այս դեպքում ավելի քան
անհրաժեշտ է հարկային կուտակման ձևերի և մեթոդների վերլուծությունը,
ինչպես նաև ժողովրդական տնտեսության մեջ միջոցները զետեղելու գործի
վերլուծությունը:

Այժմ մի քանի խոսք կառավարական հանձնաժողովի աշխատանքի
մասին: Ինչպես արդեն ասացինք, այդ աշխատությունն արժեքավոր է վոչ
միայն այն տեսակետից, վոր ամենամանրամասն կերպով մշակել և հարկ-
ման ծանրության պրոբլեմը, այլ և այն իմաստով, վոր թույլ է տալիս հա-
սակալել, թե ինչ ուղղությամբ է ընթանում մեր հարկային քաղաքակա-
նությունը, քանի վոր յերեվան և հանում բնակչության առանձին խմբերի
յեկամտի սոցիալական բնույթը և տալիս յերկրի ժողովրդական տնտեսու-
թյան ու առանձին սեկտորների սոցիալական կառուցվածքը: Այդ աշխա-
տանքի թվական աղյուսակները՝ նրա ամենաարժեքավոր մասն են կազմում
և առաջադրում են նոր պրոբլեմներ, վորոնք պահանջում են մի շարք հարցե-
րի հետագա խորացրած ուսումնասիրությունը: Պետք է ասել, վոր չնայած վո-
րոշ պայմանականությանը, կոտորակային խմբերի վերաբերյալ թվական
հաշվարկն ավելի մոտ է ճշմարտության, քան ամբողջ բնակչության հարկի
ծանրությունը վորոշող միջին ցուցանիշները: Սակայն, այնքան ել ճիշտ
չեք լինի, յեթե մենք դրանով միայն բնորոշելնք հարկի ծանրությունը:
Հանձնաժողովի կատարած հաշվարկումների թերությունը հենց այն է, վոր
տրվում են միմիայն հարկային վճարումների ընդհանուր գումարները, և չի
պարզված, թե ինչ ոգուտ ունի բնակչության այս կամ այն խումբը, վորը
հարկ է վճարում:

Ինչպես մենք արդեն ասացինք, մեր պայմաններում միանգամայն ճիշտ կլինե՞ր գծել պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության հարկերի եկվիվալենտության հարցը: Խնդիրը միայն այն է, վորպեսզի վորոշենք, թե ինչ ձևով պետք է կատարվի հարկերի միջոցով ակումուլյացիայի յենթարկվող միջոցների այդ վերադարձը:

Յեթե համեմատելու լինենք հարկի ծանրությունը պետությունների միջոցով ակումուլյացիայի յենթարկված հարկային միջոցների բաշխման հետ, ապա կհամոզվենք, վոր առանձին սոցիալական խմբեր փաստորեն զրեթե վոչ մի հարկային ծանրություն չեն կրում, քանի վոր այդ գումարները զանազան ինստիտուտների գծով ծախսելիս՝ բնակչությանից հարկման կարգով գանձված միջոցները վերադարձվում են:

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, վոր բնակչության հարկման ծանրության պրոբլեմը (մանավանդ մեթոդոլոգիան) ներկայումս մշակվում է հատուկ հանձնաժողովի կողմից, և մատ օրերս արդյունքները կպարզվեն ու հայտնի կլինեն:

5. Պ Ե Տ Ա Կ Ա Ն Վ Ա Ր Կ

Սորհրդային ֆինանսների և կապիտալիզմի ֆինանսների սոցիալ-քաղաքական տարբերությունը արտահայտվում է նաև պետական վարկի բնագավառում:

Յե՛վ իրոք, կապիտալիստական պետական վարկի և խորհրդային պետական վարկի միջև չի կարելի վոչ մի «անալոգիա» անցկացնել, դրանք մի միասնական սխեմայի մեջ առնել, դրանց մեջ ընդհանուր» գծեր և բնորոշ հատկանիշներ գտնել:

Կապիտալիզմի պետական վարկի նյութական հիմքը փոխառվական դրամական ֆիկտիվ կապիտալի ստեղծումն է: Արդյունաբերական կապիտալի վերջնական ու անբաժան տիրապետությունը և առևտրական ու փոխառվական-դրամական կապիտալի լիակատար յենթարկումը այդ նույն արդյունաբերական կապիտալի շարժմանը—բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու նյութական կայուն բազա ստեղծեցին վոչ միայն մասնավոր վարկի, այլ և պետական վարկի լայն զարգացման համար: Պետական վարկը զարգացավ բացառապես կապիտալիզմի զարգացման շնորհիվ:

Պետական վարկի սխեմայի միջոցով կուտակման յենթարկված գումարները բուրժուական պետության պարադիտային ծախսերը սնող կարևորագույն անցքն են: Յե՛վ վորչափով ժողովրդած այդ գումարները պետությունը ծախսում է սպառողական պետքերի համար, այդ չափով ել պետական վարկի և տոկոսների վճարման աղբյուրը միայն պետական հարկերը կարող են լինել: Հետեվապես, հարկային սխեմայի բուրժուական իրավակարգում պետական վարկային սխեմայի մի անհրաժեշտ լրացումն է, քանի վոր պետական պարտքի ավելացումն անխուսափելիորեն հարկերի մեքենայական բարձրացում է առաջ բերում:

Քանի վոր պետական պարտքերը հիմնված են պետական յեկամուտների վրա, վորոնց հաշվին են ծածկվում տարեկան տոկոսներն ու այլ վճարումները, ուստի ժամանակակից հարկային սխեման առաջ է յեկել վորպես ազգային վարկի սխեմայի լրացում: Փոխառությունները կառավարությունը

հնարավորություն են տալիս արտակարգ ծախսերը ծածկել այնպես, վոր վճարողը միանգամից չզգա այդ ծախսերի ամբողջ ծանրությունը, սակայն նույն փոխառությունները վերջիվերջո հարկադրում են բարձրացնելու հարկերը» (Կապիտալ, հ. 1, էջ 607): Փոխառություններն անխուսափելիորեն հարկերի ավելացում են պահանջում և, ընդհակառակը, հարկերի ավելացումը նոր փոխառությունների անհրաժեշտությունն են առաջ բերում: Իսկ հարկերը կապիտալիզմի պայմաններում մի մեթոդ են, վորով բուրժուական պետությունը վերաբաշխում է ժողովրդական յեկամուտի այն մասը, վորն ընկնում է աշխատավորության վրա կապիտալիստական բաշխման որոնքների կարգով, այսինքն, աշխատավորների լրացուցիչ շահագործման միջոցով: Քանի վոր պետական փոխառություններն ու դրանց տոկոսները բուրժուական պետությունը ծածկում է հարկերի հաշվին, և քանի վոր հարկերն ծանրանում են բանվորների աշխատավարձի և մանր-ապրանքային արտադրողների յեկամուտների վրա, ուստի պետական պարտքերի ամբողջ ծանրությունը բացառապես բնակչության այդ նույն խավերն են կրում:

Այստեղից ել կապիտալիստական յերկրների փոխառությունները կարելի յեն վորոշել վորպես միջոցների մոբիլիզացիա, վորը բուրժուական պետությունը կատարում է իր նյութական բազան ամրացնելու և կապիտալիստական հարաբերությունների ամբողջ սխեմայի վերաբարձրությունն ապահովելու համար:

Սորհրդային եկոնոմիկայի պայմաններում պետական փոխառությունները ֆիկտիվ փոխառվական կապիտալ ստեղծելու կարգով կատարված միջոցների մոբիլիզացիա չեն, մեր փոխառությունների պարտատոմսերը ֆիկտիվ կապիտալ չեն: Հետեվապես, հիմնովին սխալ է Տրախտմերբեդի այն տեսակետը, թե մեզ մոտ «փոխառվական կապիտալի մի, թեկուզ և յուրահատուկ կատեգորիայի գոյությունը փաստ է», վորն ապացուցվում է պետական փոխառությունների պարտատոմսերի առկայությամբ:

Մի շարք սխալներ է թույլ տվել նաև ընկ. Սոկոլնիկովը մեր փոխառությունները բնորոշելիս: Այսպես, նա փոխառությունները սերտորեն կապում է բյուջետային դեֆիցիտի հետ, պնդելով Վլոր փոխառությունները միանգամայն ընդունելի մի միջոց են յեղած բյուջետային դեֆիցիտը ծածկելու համար, յեթե հարկերն ու վոչ-հարկային յեկամուտները բավարար չեն ծախսերի մասը փակելու համար: Բյուջետային դեֆիցիտի նման ըմբռնումը յենթադրում է, վոր մենք ունենք յերկու տեսակի փոխառություն, այն է՝ արտադրական և վոչ-արտադրական նպատակ հետապնդող փոխառություններ: Յեթե մեր իրականության մեջ գտնվել փոխառության վոչ-արտադրական ոգտագործման դեպքերի մի վորեք ապացույց, ապա պարզ է, վոր ճիշտ կլինե՞ր ընկ. Սոկոլնիկովի այն կարծիքը, թե փոխառությունները բյուջետային դեֆիցիտը ծածկելու մի միջոց են: Սակայն, խորհրդային պետական վարկի պատմությունը բացահայտ կերպով հերքում է ընկ. Սոկոլնիկովի տեսակետը: Մեր փոխառությունների վերադարձն ապահովված է նրանով, վոր դրանք ծախսվում են արտադրական կարիքների վրա և ծածկվում են իրենց իսկ ստեղծած ֆոնդերի հաշվին: Հետեվապես մեր պետական փոխառությունների ժողովրդատնտեսական շահավետությունը դրանց վերադարձը ներկայի կամ ապագայի հարկերով չի ապահովում, ինչպես այդ տեղի յեն ունենում կապիտալիստական յերկրներում:

Այսպիսով, ուրեմն, մեր պետական վարկն իր զարգացման բոլոր ետապ-
ներում մի մեթոդ է, վորով միջոցներ են ժողովրդում սոցիալիստական շինա-
բարության համար և այդ միջոցներն ուղղվում են ժողովրդական տնտեսու-
թյան արտադրական կանաչները: Մեր փոխառությունները վոչ մի կապ
չունեն բյուջետային դեֆիցիտի հետ:

Հիմնովին սխալ է նաև կոչվելովի այն տեսակետը, թե մեր փոխա-
ռություններն ինքնահարկման մի ձև են. «այն սկզբունքային տարբերու-
թյունը, վորը գոյություն ունի մի կողմից՝ փոխառությանը բաժանորդավը-
վելու մեջ, վոր տեղի չի ունենում բանվորների և ծառայողների վորոշմամբ
ու մյուս կողմից՝ բանվորական իշխանության գեկրետով պրոլետարիատին
հարկելու մեջ, այդ տարբերությունն ըստ ելույթյան վերանում է»: Մինչ-
քեռ հայտնի չի, վոր մեր փոխառությունները հակայական հաջողություն
ունեն աշխատավորության լայն մասսաների մեջ, վորովհետև դրանք բաց
են թողնվում այդ նույն մասսաների ցանկությամբ, մոբիլիզացիայի չեն
յենթարկվում իրենց խնայողությունները սոցիալիստական շինարարությանն
ակտիվորեն մասնակցելու համար:

Վերջապես, չպետք է մոռանալ նաև այն, վոր հարկային մեթոդը փո-
խառություններից նրանով է տարբերվում, վոր միջոցների ստացման ան-
հատական ձևն աշխատավոր հարկավոր համար փոխհատուցվում է այդ
նույն միջոցներն ամբողջ դասակարգին կոլեկտիվորեն վերադարձնելու ձե-
վով, այնինչ փոխառությունները բնորոշվում են կամավորությամբ, և փո-
խառության գումարը վորոշ հավելումով վերադարձվում է անհատական ձե-
վով փոխառվին:

Բնակչության միջոցների մոբիլիզացիայի կամավոր մեթոդների շար-
քում փոխառությունները մեղ մոտ առաջին տեղն են գրավում:

Բոլոր տեսակի կազմակերպված կուտակումների տնտեսական բազան
աշխատավորների խնայողություններն են: Յեղ յեթե խնայողական դրա-
մարկդների և կամավոր այլ մեթոդների միջոցով հիմնականում կուտակման
յեն յենթարկվում կարճատև խնայողությունները, ապա փոխառություննե-
րի միջոցով ժողովրդում են յերկրատև խնայողությունները:

Մեր փոխառություններն ուժեղացնում են ուսուրսների ներգրավումը
ժողովրդական տնտեսության հանրայնացված սեկտորի մեջ ու հենց դրանով
թույլ են տալիս այդ սեկտորին գերակշռող ու հաղթող հանդիսանալ մյուս
սեկտորների հանդեպ: Փոխառությունները մի լծակ են, վորով ժողովրդա-
կան յեկամուտը վերաբաշխվում է հոգուտ հանրայնացված սոցիալիստական
սեկտորի, քանի վոր «արդյունաբերական գործի համար կատարվող սեփա-
կան խնայողությունների ուղին, սոցիալիստական կուտակման ուղին, վորը
հաճախակի մատնանշում եր Լենինը, վորպես մեր յերկրի ինդուստրացման
միակ ուղին» (Ստալին) մեղ մոտ նույնպես պետական փոխառությունների
միջոցով է իրագործվում:

Այսպիսով, ուրեմն, խորհրդային փոխառություններն աշխատավորու-
թյան այն միջոցների կամավոր մոբիլիզացիան են, վորոնք ոգտագործվում
են մեր պետության կողմից յերկրի արտադրողական ուժերը վերարտադրե-
լու և սոցիալիստական զարգացումն արագացնելու համար:

Պետական վարկի զարգացման հիմքը դրվեց 1922 թ., սակայն այդ

ձեռնարկման տնտեսական նախադրյալները շատ թույլ եյին, մասնավորապ
յեթե նկատի ունենանք դրամական տնտեսության քայքայված վիճակը:

Պետական վարկի համար չափազանց անպատաս այս պայմաններում
բաց թողնվեցին առաջին փոխառությունները, վորոնք պետք է թուլաց-
նեյին բյուջետային դեֆիցիտը ծածկելու համար տաղաքական դադարյանի
ոգնությանը դիմելու պրակտիկան, և վորպես մի ժամանակավոր միջոց, այդ
փոխառություններն իրացնելու համար, պետք եր հարկադրական միջոցներ
կերտվեյին անաշխատ տարերի նկատմամբ: Բայց «խորհրդային առաջին
փոխառությունների կապը բյուջետային դեֆիցիտի հետ հիմք չի տալիս ա-
նալոգիա անցկացնելու դրանց և կապիտալիստական փոխառությունների
միջև, քանի վոր մեր փոխառությունները ժողովրդական տնտեսության վե-
րականգնման արտադրական նպատակներն եյին հետապնդում: Այդ փոխա-
ռություններն ու դրանց տոկոսները վճարելու աղբյուրները վոչ թե հար-
կերն են, այլ ժողովրդական տնտեսության այն ճյուղերը, վորտեղ այդ փո-
խառությունները եֆֆեկտիվ կերպով ոգտագործվում են:

Մեր առաջին փոխառություններն են՝ 1922 թ. 6%-ային, 100 միլիոն
ռուբլու 10 տարվա ժամկետով և 1924 թ. յերկրորդ խաղարկու 6%-ային
փոխառությունը, նույն գումարով, 5 տարվա ժամկետով: Այդ փոխառու-
թյունները դրամական ռեֆորմի նախապատրաստական շրջանի կարևորա-
գույն վարկային գործառնություններն եյին:

Բոլորովին չեն ըմբռնում մեր պետական վարկի ելույթյունը, մեր փո-
խառության պատմությամբ դրավով մի շարք հեղինակներ, յերբ նրանք
պնդում են, թե այդ շրջանում մեր փոխառություններն ավելի շուտ հարկե-
ման լրացուցիչ տեսակներ եյին, քան վարկ՝ այս բառի բուն իմաստով»
(Յուրովսկի):

Այդ շրջանում բաց են թողնվել նաև բնական փոխառությունները
(հացի ու շաքարի առաջին ու յերկրորդ փոխառությունները): Այդ փոխա-
ռությունների նպատակն եր գլխավորապես հող պատրաստել հարկման բնա-
կան մեթոդներից դրամական մեթոդների անցնելու համար: Հացի փոխառու-
թյունները բաց թողնվեցին յուրաքանչյուրը 100 միլ. փութ. և լայն չափե-
րով տարածվեցին: Այդ փոխառությունները գյուղացիությունը մեծում եր
պարենահարկի դիմաց: Շաքարի փոխառությունը, վոր բաց թողնվեց 1 միլ.
փթի շաքարի քանակությամբ, նույնպես խոշոր հաջողություն ունեցավ:

Դրամական ռեֆորմը, ամուր հիմք ստեղծելով ռմբողջ ժողովրդական
տնտեսության արագընթաց զարգացման համար, մի նոր ետապ եր խորհր-
դային պետական վարկի պատմության մեջ: Այդ շրջանից սկսած պետական
վարկի ժողովրդա-տնտեսական նպատակների համար միջոցներ ժողովելու
այդ ֆակտորի տեսակարար կշիռն անընդհատ բարձրանում է: Պետական
վարկի աճման վերաբերյալ տվյալները հետևյալ պատկերն ունեն:

Տարիներ	Պետական պարտքի ծավալը	Ժողովրդ. տնտ. ֆինան- սավոր. (առանց արանսպ.)	Բանի տոկոսով և ծածկ- ված ժող. տնտես. ֆին-ժը պետվարկի հաշվին
1924/25 թ.	376,3	592,8	21,9
1925/26 թ.	430,4	668,0	8,1
1926/27 թ.	751,9	1007,2	32,4
1927/28 թ.	1271,0	1443,4	35,6

Իրամական ռեֆորմի առաջին տարիներում մեր փոխառությունները հիմքը հանրաքանակված սեկտորի կուտակումներն էին կազմում։ Այդ շրջանի որենսդրությամբ բոլոր պետական, կոոպերատիվ, արդյունաբերական և առևտրական կազմակերպությունները պարտավոր էին իրենց շահույթի մի մասով փոխառություններ ձեռք բերելու։ Այդ փոխառությունների լուծարելիությունը (ликвидность) ապահովում էր ֆինոգիկոմատը, վորը պարտավորություն էր ստանձնում վճարելու պարտատոմսերի անվանական գինը այն դեպքերում, յերբ ձեռնարկությունը կարիք ուներ ոգտագործելու փոխառությունների մեջ գետեղած կապիտալը։ Հանրաքանակված սեկտորում տեղավորված փոխառություններ են՝ 1924 թ. 8 տոկոսային ներքին վոսկե փոխառությունը 100 միլ. ռուբլի, 1926 թ. յերկրորդ 8% ալին ներքին փոխառությունը 100 միլ. ռ., 1927 թ. 8 տոկոսային փոխառությունը 200 միլ. ռ., 1927 թ. 12 տոկոսային փոխառությունը 200 միլ. ռ. և 1925 թ. տնտեսական վերականգնման մասնակի փոխառությունը 300 միլ. ռ.։ Այս վերջին փոխառության նպատակն էր ոգտագործելու բախնելում յեղած ընթացիկ հաշիվները կայուն նպաստող՝ ժողովրդական տնտեսության յերկարատեվ ֆինանսավորման համար։

Հանրաքանակված սեկտորի տեսակարար կշիռը պետական վարկում կազմում է (միլ. ռուբ.)—

	Առ 1/10 25 թ.	Առ 1/10 26 թ.	Առ 1/10 27 թ.	Առ 1/10 28 թ.
Պետ. պարտքի ընդ. գումարը, վորից՝ հանր. սեկտորում գետեղված	376,3 250,0	430,4 315,6	756,9 572,9	1271,0 840,1
Պետ. պարտքի ընդհանուր գումարի վոր տոկոսը	66,4	73,3	75,7	66,1

Ինչպես տեսնում ենք այս թվերից, բնակչության մեջ գետեղված փոխառությունները կազմում են պետական ամբողջ պարտքերի 27-ից մինչև 35 տոկոսը (կլոր)։

Բնակչության մեջ գետեղված փոխառություններից պետք է նշել գյուղացիական փոխառությունները, վորոնք հիմնված են գյուղի աշխատավոր մասնաների խնայողությունների վրա։ 1924 թ. մինչև 1927 թ. յերեք գյուղացիական փոխառություններ են բաց թողնվել։

Պետական վարկի դարգացման բնագավառում կարևոր նշանակություն ունեցավ 1927 թ. 10 տոկոսային փոխառությունը 100 միլ. ռուբ.։ Այդ փոխառությամբ առաջին փորձն արվեց պարտատոմսերը կազմակերպված բռնակչության մեջ գետեղելու կոլեկտիվ բաժանորդագրության միջոցով և վճարումները մի քանի նվազում կատարելու պայմանով ու դրանով ել մասսայական փոխառությունների սկիզբը դրվեց, վորոնք ամենից շատ էին համապատասխանում խորհրդային պետական վարկի ելությունը։

Ինդուստրացման առաջին փոխառությունը և գյուղացիական տնտեսության ամբացման փոխառությունը մեր պետական վարկի պատմության մեջ մի նոր, յերրորդ ետապի սկիզբը դրին։ Այդ փոխառությունը բաց

թողովեց բանվորական կոլեկտիվների առաջարկությամբ այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներն սպառնում էին ֆինանսական բլոկադի յենթարկել ԽՍՀՄ։ Այդ փոխառությունից հետո արդեն մեր կառավարությունը մասսայական փոխառություններ է բաց թողնում աշխատավորության լայն մասսաների պահանջմամբ սոցիալիստական շինարարության խնդիրներն իրագործելու համար։

Առաջին հնգամյակի սկզբում բաց է թողնվել նաև ինդուստրացման 2-րդ փոխառությունը, վորը նույնպես հաջողությամբ գետեղվեց աշխատավորության մեջ։

Այսպիսով, ուրեմն, առաջին հնգամյակի սկզբում խորհրդային պետական վարկի բնագավառում կենտրոնական տեղը գրավեցին քաղաքի և մասամբ գյուղի աշխատավորները։ Յեթե քաղաքում փոխառություններն արդեն աշխատավորության կուտակումների ակումուլյացիայի մասսայական ձև են յին ընդունել, ապա գյուղում այդ պրոցեսը ձևափոխվում էր միայն։

Հնգամյա պլանով փոխառության գործառնություններից ստացվելիք բյուջետային յեկամուտը նախատեսված էր 6 միլիարդ ռուբ., 3,8 միլիարդ ռուբլի գուտ յեկամտային սալդոյով։ Չորս ու կիս տարվա ընթացքում հնգամյա պլանով նախատեսած փոխառությունների իրացումն զգալիորեն գերակատարվեց։ Փոխառություններից ստացված բյուջետային յեկամուտը կազմեց 9,5 միլիարդ ռուբ. կամ նախատեսված գումարի 160%-ը, իսկ գուտ յեկամտային սալդոն՝ 7,6 միլիարդ ռուբ. կամ նախատեսված յեկամտային սալդոյի 230,5%-ը։

Առաջին հնգամյակի ընթացքում բաց թողնվեցին ինդուստրացման 3-րդ փոխառությունը, «Հնգամյակը չորս տարում», այդ փոխառության 2-րդ նվազը «Հնգամյակի 3-րդ վճռական տարին» անվամբ և «Հնգամյակը չորս տարում» փոխառության 3-րդ նվազը՝ «Հնգամյակի 4-րդ ավարտման տարի» անվամբ։ Բացի այդ մասսայական փոխառություններից, բաց թողնվեցին նաև ալսպես կոչված շուկայական փոխառություններ, այն է՝ 1929 թ. ներքին յաղարկու փոխառություն, 1930 և 1932 թ. թ. յաղարկու փոխառություններ։

Առաջին հնգամյակի վերջում մեր փոխառությունների ասպարիզում կոնվերսիա անունով ռեֆորմ կիրառվեց։ Սակայն պետք է այստեղ նշել, վոր մեր փոխառությունների կոնվերսիան յիստ տարբերվում է բուրժուական պետությունների կոնվերսիայից։ Այն ժամանակ, յերբ բուրժուական յերկրներում կոնվերսիաների նպատակն է իջեցնելու փոխառությունների յեկամտաբերությունը, մեզ մոտ կոնվերսիան այդ յեկամտաբերությունը չի փոխում։

Փոխառությունների հետ միասին, բանվորական լայն մասսաների պահանջմամբ սահմանվեց նաև հասարակական վերահսկողություն՝ պարտատոմսերը վաղաժամ իրացնելու իրավունքի վրա։ Հասարակական վերահսկողության պարտականությունները գրվեցին պետական վարկին և յնայողական գործին ոժանդակող հանձնաժողովների վրա, վորոնց ընտրում են փոխառության պարտատոմսերը ունեցողները։ Պարտատոմսերի վաճառքն ու գրավը թույլատրվում էր այդ հանձնաժողովների վորոշմամբ։

Առաջին հնգամյակի ընթացքում բնակչության մեջ իրացվել է 5945,7

միլ. ուրբ. փոխառություն, վորից մասսայական փոխառություններ 5814,4 միլ. ուրբ. և շուկայական փոխառություններ 131,3 միլ. ուրբ. կամ ընդհանուր գումարի 2,2%-ը: Յեթե հաշվի առնելու լինենք փոխառությունների վաճառքը և բնակչության ոգտին կատարված վճարումները, ապա փոխառություններից ստացված դուտ սալդոն կկազմի 4366,4 միլ. ուրբ.:

Բանվորների և ծառայողների տեսակարար կշիռը մասսայական փոխառություններից ստացված ընդհանուր գումարի մեջ կազմում է միջին հաշվով 70%, մենատնտեսներինն ու կոլտնտեսականներինն՝ 21%:

Պետական պարտքի դինամիկան առաջին հնգամյակում.—

Տարիներ	Ընդամենը պետ. պարտք.	Վ. Ո. Բ. Ի. Ց.	
		Հանր. անտ.	Բնակչություն
1/X-28 թ.	1244,4	649,1	598,3
1/X-29 թ.	1846,1	1021,3	824,8
1/X-30 թ.	2504,8	730,9	1773,9
1/X-31 թ.	2838,1	873,9	1964,2
1/X-32 թ.	6012,8	2301,5	3436,8
1/X-33 թ.	9771,3	3436,8	6334,5

Պետական պարտքի պրորեմը խորհրդային եկոնոմիկայի պայմաններում սոցիալիստական այլ խմատ ունի: Պետութայն կողմից պետական պարտքերը վճարելու հանգամանքը վոչ միայն աշխատավորների համար հարկերի ավելացում առաջ չի բերում, ինչպես այդ տեսնում ենք կապիտալիստական յերկրներում, այլ ընդհակառակը, աշխատավոր մասսաների բարեկեցությունը բարձրացնող մի գործոն է դառնում: Հնգամյակի ընթացքում բնակչութայնը, բացառապես աշխատավորներին վճարվել է 854 միլ. ուրբ.: Պետք է նշել նաև, վոր խորհրդային վարկը միաժամանակ սնում է թե պետութայն ֆինանսական պլանը և թե աշխատավորների անհատական բյուջեն:

Պետական վարկի զարգացման արդյունքներն առաջին հնգամյակի ընթացքում փայլուն կերպով ապացուցեցին ընկ. Ստալինի խոսքերն այն մասին, թե «մեր շինարարութայն հիմնական շարժիչ ուժը՝ գյուղի ու քաղաքի աշխատավորութայն միլիոնավոր մասսաների ակտիվությունն է»:

Յերկրորդ հնգամյակում փոխառությունները, հիմնելով ժողովրդական յեկամտի ավելացման, աշխատավոր մասսաների բարեկեցութայն հարձուռն բարձրացման և նրանց քաղաքական ակտիվութայն վրա, ընդհանուր ֆինանսական պլանում խոշոր տեղ են գրավում: Յերկրորդ հնգամյակի յերկու տարվա ընթացքում բաց են թողնված «Յերկրորդ հնգամյակի փոխառությունը» (յերկու նվազ) և շատ հաջող գետեղված է բնակչութայն մեջ: Յերկրորդ հնգամյակի փոխառութայն առաջին նվազը 1930 թ. տվել է 3330,9 միլ. ուրբ., իսկ յերկրորդ նվազը 1934 թ. 3700 միլ. ուրբ.:

Այդ փոխառությունների իրացումը կատարվեց սոցիալիստական մըրցման նոր ալիքի ծավալմամբ և աշխատավորութայն քաղաքական բարձր ակտիվութայն:

6. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Խնայողական դրամարկղները ԽՍՀՄ-ում միջոցների կամավոր մոբիլիզացիայի մի լծակ են սոցիալիստական կուտակման ֆոնդն ընդարձակելու համար: Այդ դրամարկղների սոցիալական բազան խորհրդային եկոնոմիկայի պայմաններում աշխատավորութայն լայն մասսաների՝ բանվորների, ծառայողների, կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների խնայողությունն է:

Մինչդեռ կապիտալիստական յերկրներում «խնայողական դրամարկղները մի վոսկի շղթա յեն», վորով կառավարությունն իր ձեռքում է պահում բանվոր դասակարգի մի զգալի մասը, վորի միջոցով, մի կողմից, կարծես թե ցուցադրում է բանվորների շահագրգռվածությունը գոյություն ունեցող կարգերը պահպանելու գործում, իսկ մյուս կողմից յերկպառակություն է սերմանում բանվոր դասակարգի՝ խնայողական դրամարկղներին մասնակցող և չմասնակցող մասերի միջև*):

Իրենց խնայողությունները մոցնելով խնայողական դրամարկղները, բանվորները ղենք են տալիս իրենց թշնամիների ձեռքը գոյություն ունեցող ու նրանց ստրկացնող հասարակական կաղմակերպութայնը պահպանելու համար**):

Վերջապես, խնայողական դրամարկղներն մասնակցելով, բանվոր դասակարգը լայն հնարավորություններ է տալիս կապիտալիստներին աճեցնելու իրենց կապիտալը: Այն դրամական միջոցները, վոր բանվոր դասակարգը ստանում է կապիտալիստներից վորպես աշխատավարձ, խնայողական դրամարկղները մոծեկով՝ հոսում են ազգային բանկը, վորը նորից այդ գումարները փոխ է տալիս կապիտալիստներին, բանկն ու կապիտալիստները բաժանում են շահութայն իրար մեջ ու ալալիսով, շնորհիվ այն դրամի, վոր նրանց տվել է ժողովրդը, չնչին սոկոտներ ստանալով, նրանք աճեցնում են իրենց կապիտալը. հենց միայն շնորհիվ կենտրոնացման նրանք դառնում են արդյունաբերութայն հզոր լծակը—ավելացնում են իրենց անմիջական իշխանությունը ժողովրդի վերաբերմամբ***):

Կապիտալիստական հասարակութայն մեջ խնայողական սխտեմը, ժողովելով խնայած չնչին գումարները, կամ բանկերին է տալիս՝ խոշոր բուրժուազիային վարկավորելու համար, կամ ել պետութայնը՝ նրա դասակարգային ծախսերը հոգալու համար: Միաժամանակ ի հարկե, չի կարելի թե բազնահատել այդ մանր գումարների նշանակությունը, ինչպես նաև խնայողական դրամարկղների դերը, վորոնք ղեպի իրենց են քաշում մանրագույն «վոսկի փոշին». դարձնում են այն «վոսկի հորթի» տարերը, վորին յերկրպագում է կապիտալիստական հասարակությունը:

Աշխատավորների մանր խնայողությունների աճումը կապիտալիստական հասարակարգում բացառվում է հենց իր՝ կապիտալիզմի կառուցվածքով: Անվտանգություն վաղվա որվա նկատմամբ, յեկամտի անկայունություն, ամեն բոպե աշխատանքի պահեստազորի մեջ ընկնելու յերկյուղ, ինքնաապա-

*) Կ. Մաքս և Գր. Ենգելս, յերկ. ժող. հ. 1, եջ 546.

**) Նույն տեղը:

***) Նույն տեղը:

հովում հիվանդությունից և ծերությունից—ահա այն գլխավոր սոցիալական շարժառիթները, վորոնք ստիպում են կուտակելու և խնայելու նրանց, վորոնք գրոշներ են ստանում հավելյալ արժեքը կապիտալիստական հասարակության դասակարգերի միջև բաշխելիս: Հետեւապես, խնայելու ֆունկցիան նրանց ե վիճակվում «ովքեր հնարավորությունն չունեն խնայելու» (Մ արքս): Այնուհետեւ, այդ խնայողությունները կապիտալիստական յերկրներում ձեւով են միայն կամավոր, իսկ ըստ եյության պարտադիր են:

Սակայն բուրժուական տնտեսագետներն ու սոցիալ-ֆաշիստները պընդում են, վոր ավանդատունների թվի և անվանդների գումարների ավելացումը կայանում է «կապիտալի դեմոկրատիզացիայի» մասին, այն մասին, վոր «մանր ավանդատուները դառնում են շահույթ ստացողներ»: Միևնույն փաստը, այսինքն՝ խնայողական դրամարկդների ավանդների և մանավանդ մանր անվանդատուների թվի ավելացումը տարբեր կերպ են բացատրվում: «Մարքսիզմի քննադատն» ասում է. աճում է ժողովրդական բարեկեցությունը, աճում է կապիտալի ապահանջարկացումը: Սոցիալիստն ասում է. «Բնական խնայողությունները» վեր են ածվում դրամական խնայողությունների, աճում է ունեւոր գյուղացիների թիվը, և դրանք դառնում են բուրժուական ու իրենց խնայողությունները դարձնում են կապիտալ: Անհամեմատ ավելի արագ է աճում այն գյուղացիների թիվը, վորոնք մղվում են պրոլետարիատի շարքերը, վորը վաճառում է իր աշխատանքային ուժը և իր չնչին յեկամութիւնների մի մասը (գեթ ժամանակավորապես) խնայողական դրամարկդն ե մուծում:

Մանր ավանդատուների խոշոր թիվ ապացուցում է, վոր մեծ և աղքատությունը կապիտալիստական հասարակության մեջ, քանի վոր այդ մանր ավանդատուների բաժինն ավանդների ընդհանուր գումարի մեջ չնչին է (Լենին, հ. V, եջ 61): Կապիտալիստական պետություններն այնպես ցույց տալով, թե իբր իրենք «պաշտպանում են» մանր ավանդատուների շահերը և ձգտում են, վորպեսզի խնայողական դրամարկդների ավանդները շահավետ կերպով ոգտագործվեն, փաստորեն նրանք վորոշ ուղղություն են տալիս այդ գումարներին և աշխատում են գետեղել պետական փոխառությունների մեջ:

Ինչպես Լենինն եր գրում, Ռուսաստանում խնայողական դրամարկդները կապիտալները «նախ և առաջ ուժեղացնում են ռազմական և վոստիկանական—բուրժուական պետության հզորությունը: Ցարական կառավարությունը... տնորինում է այդ կապիտալիստները նուրբնան անվերահսկողաբար, վորքան և իր ձեռքն ընկած ժողովրդական մնացած գույքը... 1899 թ. խնայողական դրամարկդներում յեղած ամբողջ 679 միլ. ռուբ. գումարի 613 միլ. ռուբ. տոկոսարեւ թղթեր եյին... «Ժողովրդական խնայողությունների» միջոցով միշտ կարելի յե զգալի գումար ծավալել» (Լենին, հ. V, եջ 62): Վորքան ավելի յեն զարգանում խնայողական դրամարկդները, այնքան ավելի յե աճում մանր ավանդատուների շահագրգռվածությունը պրոլետարիատի սոցիալիստական հաղթանակի նկատմամբ: Միմիայն պրոլետարիատը կարող է նրանց դարձնել հասարակական հաստատության վոչ թե ֆիկտիվ, այլ իսկական «մասնակիցներ և տնորեններ» (Լենին, հ. V, եջ 65):

Այսպիսով, աշխատավոր մասսաների խնայած կոպեկները կապիտալիստների ձեռքում դառնում են նույն այդ մասսաների ստրկացման ու շահագործման միջոց:

Յեթե կապիտալիստական իրավարգում խնայողությունների աճումն իր ձեւով միայն «կամավոր» է, իսկ ըստ եյության հարկադրական, յեթե այդ խնայողություններն աշխատավորության աշխատության հետեւանք են, և, վերջապես, յեթե «անվստահությունը վաղվան որվա վերաբերմամբ» խնայողական դրամարկդների ավանդների աճման գլխավոր պատճառն է, ապա խՍՀՄ-ի պայմաններում խնայողական դրամարկդներն իրենց սոցիալական բնույթով բոլորովին այլ բազա ունեն:

Դործադրկության վերացումը, սոցիալակտն ապահովագրությունը, ձրի բժշկության, հանգստյան տների, ձրի ուսուցման և աշխատավոր լայն մասսաների սոցիալ—կենցաղային և կուլտուրական սպասարկման մի շարք այլ ձեռնարկումների լայն ծավալումը,—ահա այս բոլորն ավելորդ են դարձնում «ապահովագրական» գումարների կուտակումը և խՍՀՄ-ում վերացնում են խնայելու այն սպեցիֆիկ շարժառիթները, վոր գոյություն ունեն կապիտալիստական յերկրներում:

Աշխատավորական խնայողությունների հիմքը մեզ մոտ աշխատավոր լայն մասսաների կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացումն է: Բանվոր դասակարգի, կոլտնտեսականների ու աշխատավորության մնացած խմբերի յեկամութիւնների աճման հետեւանքով նրանց անհատական բյուջեների կառուցվածքում ներքին փոփոխություններ են կատարվում, բյուջեյի ավելի ու ավելի խոշոր մասն ազատվում է ընթացիկ սպառումից և կարող ծառայել ավելի «հիմնական» կարգի նապատակային ծախսերի համար, այն է՝ թանգարտեք իրեր—կահույք, զգեստ և հարմարություններ ձեռք բերելու համար, վոր չի կարելի կատարել, որինալ, ամսական բյուջեյի հաշվին, սակայն կարելի յե կատարել կիսամյա կամ տարեկան բյուջեյի հաշվին:

Աշխատավորների ժամանակավորապես ազատ միջոցները, այսինքն, նապատակային խնայողություններն այն հիմնական աղբյուրն են, վորից կարող են միջոցներ ստանալ մեր խնայողական դրամարկդները:

Սակայն այս հիմնական աղբյուրի կողքին, խնայողական դրամարկդների համար նվազ դեր չպետք է խաղան նաև աշխատավորների բյուջեյի դրամարկդային այն մնացորդները, վորոնք գոյանում են առորյա ծախսումների ընթացքում: Դրամարկդային մնացորդները, վոր գուտ կարճատեւ խնայողություններ են անհատական բյուջեյում, յերբ կուտակվում են խնայողական դրամարկդներում, տնտեսական խոշոր ֆոնդեր են դառնում: Աշխատավորների բյուջեյի ժամանակավորապես ազատ միջոցները, ինչպես նաև դրամարկդային մնացորդները խնայողական դրամարկդների միջ առավելագույն չափով կենտրոնացնելու գործին պետք է նպաստեն նաև անդրամ հաշվարկի լայն զարգացմանը: Մեր խնայողական դրամարկդների սիստեմում անդրամ գործառնությունների զարգացման սկիզբ դրվեց 16-րդ կուսկոնֆերենցիայի վորոշմամբ, վորն առաջարկեց «պիտական, կոմմունալ և հասարակական կազմակերպություններին ավելի ու ավելի տարածել բնակչության մասսայական վճարումների բնագավառում անդրամ հաշվարկ կիրառելու փորձը»: Այդ գործի կարեւորությունն ընդգծել է նաև կուսակցության

16-րդ համագումարը՝ «հավանություն տալով ԲԳՏ ԿՎՀ-ի այն ձեռնարկմանը, վերոյ անդրամ հաշվարկի մտցվում, մասնավորապես բնակչության դրամարկդային վճարումներին բնագավառում, համագումարն, առաջարկում է ԲԳՏ ԿՎՀ-ին միջոցներ ձեռք առնել լայնորեն զարգացնելու այդ հաշվարկը»։ Անդրամ հաշվարկը նախադրյալներ է ստեղծում դրամի՝ վերադառնալու համար։ Թողովրդական տնտեսություն հանրայնացված սեկտորում վճարումների խոշորագույն մասն անդրամ հաշվարկի միջոցով է կատարվում։ Դրա հետ միասին, բնակչության կողմից հանրայնացված սեկտորի ոլորտի կատարված վճարումները (բնակարանավարձ, ելեկտրականություն, սպառնականություններ և բնակկոոպերացիայի փայեր, պրոֆմիտեթենական անդամավճար և այլն) և նույն այդ սեկտորից բնակչության ստացած գումարներ (աշխատավարձ, միջոցների գծով ստանալիքներ այլն) ապահովում են անդրամ հաշվարկի մասսայական կիրառումը հանրայնացված սեկտորի և բնակչության փոխհարաբերությունների մեջ։ Սակայն, անդրամ հաշվարկի թույլ զարգացումը մեզ մոտ պետք է բացատրել ինչպես խնայողական դրամարկդների ապարատի անբավարար տեխնիկական պատրաստականությամբ, այսպես ել նրանով, վոր աշխատավորություն լայն մասսաները դեռևս լավ ծանոթ չեն անդրամ հաշվարկի առավելություններին։ Շնորհիվ խնայողությունների ներգրավման, խնայողական դրամարկդների մեջ գոյանում են մնացած ավանդներ, վորոնք պետական վարկի կազմակերպված կանախներով, վորպես յերկարատև վարկ, լցվում են սոցիալիստական կուտակման ֆոնդը։

Այս բոլորը թույլ է տալիս մեզ նշել, վոր խնայողական դրամարկդները մեզ մոտ մի կամավոր մեթոդ են, վորն աղումովյացիայի յեն յենթարկում աշխատավորների միջոցները ընդլայնած սոցիալիստական վերաբաշխության նպատակների համար։

ԽՍՀՄ-ում խնայողական դրամարկդներ կազմակերպելու վերաբերյալ դեկրետը հրապարակվել է 1922 թ. վերջում։ Սակայն, խորհրդային դրամանիշի արագընթաց անկման պատճառով խնայողական գործն այդ ժամանակ շատ թույլ էր զարգանում և միայն դրամական օեֆորմից հետո զարգացավ։

Խնայողական գործի զարգացումը 1924 թ. մինչև 1928 թ. ցույց է տալիս հետևյալ աղյուսակը։

(Առանց միջանկյալ տարիների)

Տարիներ	Խնայողամ. թիվը	Ավանդատուների թիվը (հազ.)	Ավանդների մնացորդը (միլ. ռուբ.)
1924 թ.	4544	537,4	11,3
1928 թ.	16438	3788,4	335,8

Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, խնայողական դրամարկդները հինգ տարվա ընթացքում կարողացել են ընդգրկել մինչև 3,8 միլ. հոգի և 335 միլ. ռ. ավանդ կուտակել։

Միաժամանակ կարելի է մատնանշել, վոր մեր խնայողական դրամարկդներն իրենց աշխատանքը բոլորովին այլ քաղաքական ու տնտեսական

պայմաններում և այլ սոցիալական բազայի վրա յեն ծավալել։ Պետք է նշել նաև վոր 1928 թ. ֆիզիկական ավանդատուների ավանդների գումարի 60 %-ը բանվորներին և ծառայողներին է ընկնում, այսինքն՝ արդեն իսկ 1-ին հընգամյակի սկզբում կենտրոնական տեղը խնայողական գործում մեզ մոտ աշխատավորներն են զբաղում։

Համեմատաբար ավելի թույլ էր ընդգրկված գյուղական սեկտորը, վորտեղ միջակ-չքաղի մասսան նույն 1928 թ. բոլոր ավանդատուների 12 տոկոս և ավանդների 4 տոկոս էր կազմում։ Առաջին հնգամյակի սկզբում ավանդների 1/3-ը կազմում էյին իրավական անձերի ավանդները, վորոնք չեն կարող բնակչության խնայողություններ համարվել, քանի վոր իրենց եյուլյամբ դրանք տնտեսության հանրայնացված սեկտորի շրջանառու միջոցներն են։ Սոցիալիստական շինարարության հաջողություններն առաջին հնգամյակում նպաստավոր նախադրյալներ ստեղծեցին խնայողական գործի հետագա զարգացման համար։ Առաջին հնգամյակում խնայողական դրամարկդներն ընդգրկել են 1 միլիարդ 75 միլիոն ռուբլու նոր ավանդներ, մասնավորապես զգալիորեն բարձրացել է գյուղի տեսակարար կշիռը, այն է՝ 12 տոկոսից հնգամյակի վերջում հասել է 25 տոկոսի։

Խնայողական դրամարկդների սոցիալական բազան ընդարձակվել է նրանով, վոր գյուղի ու քաղաքի աշխատավորների թվից նորանոր միլիոններ անդամագրվել են այդ դրամարկդներին։ Ավանդատուների ընդհանուր մասսան ավելանալով հասել է 24 միլիոնի, այսինքն, գրեթե 6 անգամ, իսկ խնայողական դրամարկդների թիվը նույն ժամանակաշրջանում ավելացել է 3 և կես անգամ՝ 1932 թ. հասնելով 57,198-ից 1928 թ. 16,438-ի դեմաց։

Խնայողական դրամարկդների ցանցի աճումը նրանով է բացատրվում, վոր այդ դրամարկդներին է հանձնվում փոխառության ամբողջ գործը, գյուղական բյուջեների դրամարկդային կատարումը և այլն։

Զգալի նվաճումների կողքին, խնայողական գործի զարգացման բնագավառում վորոշ չափով հետ են մնում վորակական ցուցանիշները։

Առաջինը՝ ավանդների միջին մնացորդի աննշան չափն է, վորը մասամբ նրա նով է պայմանավորվում, վոր ավելի մանր խնայողություններ ունեցող ավանդատուների նոր մասսաներ եյին ընդգրկված խնայողական դրամարկդներին մեջ, սակայն գլխավոր պատճառն այն էր, վոր խնայողական դրամարկդներն անհրաժեշտ ձևերում չէյին ցուցաբերում ավանդատուների նկատմամբ աշխատանքը թույլ էր կազմակերպված, թույլ էյին մասսայական-բացատրական կամպանիաները և այլն։

ԽՍՀՄ Ժողկոմիտեի 1933 թ. հունիսի 21-ի վորոշմամբ, ֆիզիկական անձերի համար 5 ռուբլի և իրավական անձերի համար 25 ռուբլի ավանդի մեծությունը սահմանելը, «խնայողական դրամարկդների ցանցի վերանաշխույն ու կրճատումը», անշահավետ և թերաբեռնավորված կետերի փակումը, խնայողական դրամարկդների ապարատում տնտեսական հաշվարկ մտցնելը, խնայողական դրամարկդների աշխատողների համար աշխատավարձի պարգևատրական-խրախուսական ձև մտցնելը, ահա այս բոլոր դիրեկտիվները հիմնովին վերակառուցեցին խնայողական դրամարկդների աշխատանքը։

Տվյալ շրջանում խնայողական դրամարկդների հիմնական խնդիրը պետք է լինի՝ շահավետ ցանցն էլ ավելի զարգացնել, խնայողական դրա-

մարկղնրը բնակչության համար ռացիոնալ ձևով տեղաբաշխելը, ավանդա-
տուններին և փոխառուներին հստակորեն և արագ սպասարկելը, դրամարկը-
նների աշխատանքներն ամեն կերպ բարելավել, վորակյալ աշխատողներ
ընտրել՝ մանավանդ գյուղի համար և այլն:

Յեղ խնայողական դրամարկղներն բոլոր նախադրյալներն ունեն ի-
րենց աշխատանքը ծավալելու և բարելավելու համար:

7. ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ԽՍՀՄ-ի ընդհանուր ֆինանսական սխեմում պետական բյուջեն հիմ-
նական տեղն է գրավում: Պետբյուջեն ֆինանսավորում է ընդլայնած վերաբ-
առությունների հիմնական պրոցեսները, այն է՝ կապիտալ ներդրումները, շը-
ջանառու միջոցներ ավելացումը, սոցիալատուրական ձեռնարկումները: Դրա
հետ միասին պետական բյուջեն ֆինանսավորում է նաև վարչական ապա-
րատի պահպանումն ու յերկրի պաշտպանության գործը:

ԽՍՀՄ պետական բյուջեյի բնույթը պարզելով, մի շարք հետազոտող-
ներ հնարավոր են համարում տալ այդ բյուջեյի ու կապիտալիստական պե-
տությունների բյուջեյի ելույթյան ընդհանուր բնորոշումը: Տվյալ դեպքում
անհրաժեշտ է նշել ընկ, Սոկոլնիկովի «Ֆինանսական գիտություն» դասըն-
թացում արծարծված այն սխալ միտքը, թե «ամեն մի պետության մեջ
պետական բյուջեն պետական տնտեսություն վարելու պլանն է»: Այդ նույն
տեսակետն է զարգացնում նաև Կուզովիլովը (Ս.Մ. Հանրագիտակ), յերբ
գրում է, թե «տարբերվելով ապրանքային-կապիտալիստական դարաշրջանի
ժողովրդական տնտեսությունից, վորը յենթարկվում է շուկայի տարերային
որենքներին, պետական տնտեսությունը մինչև անգամ բուրժուական պե-
տություններում պլանային տնտեսություն է»: Այստեղ կապիտալիստական
տնտեսության բյուջեն հեղինակը դիտում է վորպես «պետական տնտեսու-
թյան» պլան, իսկ ֆինանսների միջխտրությունը «բուրժուական պետականի»
դերն է կատարում: Մինչդեռ հայտնի յե, վոր կապիտալիստական սխտեմի
հիմնական հակասությունը՝ արտադրության հասարակական բնույթը և յու-
րացման մասնավոր բնույթը, արտադրության անարխիան և այլն լիովին
արտահայտվում են կապիտալիստական յերկրների պետական բյուջեյում:

Թեպետ կապիտալիստական պետությունները հաղվում են իրենց սպա-
սելիք յեկամուտներն ու յենթադրվող ծախսերը, բայց այդ դեռևս իսկական
պլանավորում չէ: Կապիտալիստական պետության ֆինանսների պլանավո-
րումը անհնար է այնպես, ինչպես անհնար է ամբողջ կապիտալիստական
տնտեսության պլանավորումը: Այդ առանձնապես բացորոշ արտահայտվում
է կապիտալիզմի ճգնաժամի միջոցին, յերբ խոշորագույն կապիտալիստական
պետությունների բյուջեյային յենթադրությունները թերակատարվում են
30-40 %-ով: ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների բյուջեյի բնույթի վե-
րաբերյալ ուրիշ սխալ գրույթներից անհրաժեշտ է կանգ առնել այն բուր-
ժուական թեորիաների վրա, վորոնք բնորոշում են բյուջեն:
Պրնֆեսոր Շնեյդերը գրում է, վոր «պետական բյուջեն կարելի յե բնո-
րոշել վորպես պետության բարձրագույն որգանների կողմից հաստատված
յեկամուտների և ծախսերի պլան»: Նույն տեսակետն ունի և պրոֆ. Կարպին-
կոն, բնորոշելով բյուջեն, վորպես պետական իշխանության կողմից վորոշ

ժամանակաշրջանի համար հաստատված՝ պետական տնտեսության այն մա-
տերի յեկամուտների և ծախսերի գործառնական պլան, վորոնք յենթարկ-
ված են պետական տնտեսությանը՝ հատուկ պլանավորման և կառավարման
առանձին ռեժիմի:

Իսկ իրականում վոչ մի «պետական տնտեսության» և «յեկամուտների
ու ծախսերի պլանի» մասին կապիտալիստական պետության պայմաններում,
ինչպես արդեն առանցինք, խոթ լինել չի կարող: Պետական բյուջեյի մի-
ջոցով կապիտալիստական պետություններն էլ ավելի յեն ուժեղացնում աշ-
խատավորության շահագործումն ու նրա բացարձակ ու համեմատական աղ-
քատացումը:

Բյուջեյի միջոցով հսակայական գումարներ կենտրոնացնելով իրենց
ձեռքում, կապիտալիստական պետություններն այդ գումարները ծախսում են
իրենց ապարատը պահպանելու համար, սխաժամանակ անմիջական ֆինան-
սական ոգնություն հասցնելով կապիտալիստներին: Հետեվապիս, կապիտա-
լիստական պետության բյուջեն դրամական ռեսուրսների մոբիլիզացիայի ու
ծախսման ձեռնարկումների մի այնպիսի սխտեմ է, վոր կապիտալիստական
պետությունները կիրառում են շահագործման հարաբերություններն ամրա-
ցնելու և խորացնելու համար: Իմպերիալիզմի և կապիտալիզմի ընդհանուր
ճգնաժամի դարաշրջանը հենց այդ գծերով է բնորոշվում: Սպառազինման հըս-
կայական աճումը պահանջում է նորանոր միջոցներ, վորը՝ «ձեռք բերելու»
համար կապիտալիստական պետությունները սահմանում են զանազան տե-
սակ նոր հաժիեր, վորոնք լրացուցիչ բեռ են դառնում աշխատավոր մասսա-
ների համար,

Ահա այս բոլորը մեղ բերում են այն յեղրակացության, վոր ԽՍՀՄ բյու-
ջեյի և կապիտալիստական յերկրների բյուջեյի միջև վոչ մի նմանություն
չկա և և չի կարող լինել:

ԽՍՀՄ պայմաններում պետբյուջեն հանդես է գալիս վորպես սոցիալիս-
տական պլանավորման մի հզոր ֆակտոր, «վորի մեջ միանում են մեր տնտե-
սության ֆինանսավորման բոլոր թելերը» (Մուրտով):

Մի շարք սխալներ թույլ է տվել ընկ. Սոկոլնիկովը նաև պետբյուջեյի ու
միասնական ֆինպլանի բնորոշման հարցում: Ընկ. Սոկոլնիկովը նույնացնում
է պետբյուջեն միասնական ֆինպլանի հետ և կարծում է, թե «պետք է այն-
պես վերակառուցել պետբյուջեն և դարձնել այն պետական ֆինանսական
մի այնպիսի պլան, վորն ընդգրկի ֆինանսական բոլոր հարաբերություննե-
րը խորհրդային տնտեսության սահմաններում»:

Այդ միանգամայն սխալ տեսակետ է:

Միասնական ֆինանսական պլանը նախ միավորում է մի շարք ֆինան-
սական ինստիտուտներ, այն է՝ պետբյուջեն, տեղական բյուջեն, վարկային
պլանները, խնայողական դրամարկղների, Պետապի պլանները և այլն, և
բոլորովին չի վերացնում դրանց ինքնուրույնությունը, և հետո ընդգը-
կում է նաև պետական տնտեսությունից դուրս (կամավոր կազմակերպու-
թյունների) ֆինանսները: Այն ժամանակ, յերբ միասնական ֆինպլանում ընդ-
գրկվում են հանրայնացված տնտեսության բոլոր կուտակումները (շահույթ,
մարում և այլն), պետբյուջեն միայն վերաբաշխվելիք մասն է ընդգրկում:

Վերջապես, չպետք է մոռանալ նաև այն, վոր միասնական ֆինպլանն

ինքը վերաբաշխման թափներ չունի, այլ այդ նպատակի համար ոգտագործում է վերաբաշխման բյուջետային և վարկային մեթոդները: ԽՍՀՄ պետական բյուջեյի հիմնական խնդիրը սոցիալիստական սեկտորի ֆինանսավորումն ու դրա հետ կապված վերաբաշխման ֆունկցիաների կատարումն է: Այդ վերաբաշխումը կատարվում է ինչպես առանձին դասակարգերի ու սեկտորների միջև, այնպես էլ առանձին շրջանների միջև, անցյալում ճնշված աղքատյին փոքրամասնությունների նյութական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու տեսանկյունով:

Այնուհետև, բյուջետային սխտեմն ու բյուջետային կազմակերպությունը մի հզոր միջոց են տնտեսական հաշվարկ կիրառելու համար: Հստակորեն բաժանելով իրարից տնտեսական որդանների միջոցներն ու համապետական ռեսուրսները, պահանջելով խստագույն բյուջետային կարգապահություն, պետական բյուջեն խթանում է տնտեսական հաշվարկի կիրառումն ու խորացումը պլանավորման ու տնտեսարարություն ամբողջ սխտեմում: Այստեղ պետբյուջեյի ծախսերի մասի կատարումը և տնտեսական որդանների ֆինանսավորումն անմիջականորեն կապված է կուտակումների վերաբերյալ առաջադրանքների կատարման հետ: Վերջապես, պետբյուջեյի ինչպես նաև ԽՍՀՄ ամբողջ բյուջետային կազմակերպությունների, այն է՝ միութենական տնտեսությունների, դաշնակից հանրապետությունների և տեղական գործկոմիտեների կողմից վարկավորվող տնտեսությունների բյուջեների բնորոշ գծեր՝ յեկամուտների և ծախսերի միասնությունն է:

Այսպիսով, ուրեմն, ԽՍՀՄ պետական բյուջեն հիմնական գործառնական ֆինանսական պլան է, վորի միջոցով իրագործվում ժողովրդական յեկամուտի դասակարգային, ճյուղային և տերրիտորիալ վերաբաշխումը: Պետական բյուջեն ֆինանսավորում է սոցիալիստական եկոնոմիկայի հանգուցային բնագավառները, այն է՝ սոց-կուլտուրական ձեռնարկումները, կառավարչական ապարատի պահպանումն ու յերկրի պաշտպանություն գործը: Վերջապես, պետբյուջեյի միջոցով կիրառվում է տնտեսական հաշվարկը և վերահսկողությունն յենթարկվում պետական ռեսուրսների նպատակահարմար ու յնապողարար ծախսումը:

1923 թ. սահմանադրությունը, վորը կառուցված է դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով, սահմանել և ԽՍՀՄ բյուջետային և հարկային սխտեմի միասնություն, պետական միասնական բյուջեյի հաստատման իրավունքը վերապահելով միութենական գերագույն մարմիններին:

ԽՍՀՄ բյուջետային կառուցվածքը կարգավորվում է Միության և դաշնակից հանրապետությունների բյուջետային իրավունքների վերաբերյալ կանոնադրությամբ:

1924 թ. մինչև 1927 թ. միքանի անգամ վերանայվել են Միության և դաշնակից հանրապետությունների բյուջետային իրավունքները, և դրա հիման վրա բաշխվել են յեկամուտներն ու ծախսերը Միության ու դաշնակից հանրապետությունների միջև. սահմանվել է բյուջեների ընթացքի, քննություն և հաստատման կարգը: Վերջապես, հանրապետական ու տեղական բյուջեների յեկամուտային բազան լայնացնելու և համապետական յեկամուտները կատարման գործում տեղերի շահագրգռվածությունն ուժեղացնելու նպատակով բյուջետային սխտեմը համապատասխանորեն փոփոխվել է ԽՍՀՄ Կենտ-

գործկոմի և Ժողովրդարհի 1931 թ. դեկտ. 21-ի վորոշմամբ (հանրապետական և տեղական բյուջեների շահույթից հատկացումներ կատարելու կարգի, տնտեսական որդանների շրջանառու միջոցներ կազմելու մասին և այլն):

Միասնական պետական բյուջեն բաղկացած է միութենական և յոթ դաշնակից հանրապետությունների բյուջեներից:

Միասնական պետական բյուջեյի վերաբերմամբ միութենական որենդորություն կարգավորում են՝ ԽՍՀՄ ամբողջ պետբյուջեյի կառուցելու, համախթենական և դաշնակից հանրապետությունների բյուջեներով անցնող յեկամուտներն ու ծախսերը վորոշելու, հանրապետական բյուջեների ոգտին շրջանառություն հարկից հատկացումներ կատարելու կարգի, բյուջեյի քննություն, հաստատման կարգ սահմանելու և բյուջետային կարգապահություն ձեռնակումներին հետ կապված հարցերը:

Պետական բյուջեյի գծով դաշնակից հանրապետությունների որենդորություն կարգավորվում են՝ հանրապետական բյուջեյի լրացուցիչ (բացի միութենական որենդով նախատեսվածից) վորոշ յեկամուտների վորոշումը՝ համաձայն միութենական որենդորություն, բյուջեյի քննություն, հաստատման և կատարման հետ կապված հարցերը: Միութենական բյուջեն մացված հարկերից կարելիորագույնները են՝ շրջանառության հարկը, ապրանքային հատուկ ֆոնդի իրացումից ստացված յեկամուտները (առևտրական գներով իրացվող ապրանքների ֆոնդ), միութենական ձեռնարկումներին շահույթից կատարվող հատկացումներ, տրանսպորտի, կապի գուտ յեկամուտներ, մաքսային յեկամուտներ և այլն:

Բնակչության մորիլիդացիայի յենթարկված ռեսուրսներից համամիութենական բյուջեն են մուծվում (1935 թ. բյուջեյով) բանվորների և ծառայողների մեջ իրացված մասսայական փոխառությունների վճարումներին 50%-ը և կուլտուրականների ու մենատնտեսների մեջ իրացվածին 50%-ը, բնակարանային և կուլտուրական շինարարություն տուրքին 50%-ը (բացառությամբ Տաճիկստ. և Թուրքմեն. ԽՍՀ հանրապետությունների):

Հանրապետական բյուջեների յեկամուտային բազան հետևյալ կարելիորագույն աղբյուրներն են կազմում—գյուղհարկը (հետո հանձնվում է տեղական բյուջեյին), բնակարանային և կոմունալ շինարարության կարիքների համար գանձվող տուրքին 50%-ը (Տաճիկստ. և Թուրքմեն. ՍԽՀ 100%-ը): Մասսայական փոխառությունների իրացումից կատարվող հատկացումներին չափը յուրաքանչյուր տարին առանձին է վորոշվում: 1935 թ. բանվորների և ծառայողների մեջ իրացված պետական մասսայական փոխառությունների 15%-ը մուծվում է պետբյուջեյին, 10%-ը տեղական բյուջեները, յակ կուլտուրականությունների և մենատնտեսների մեջ իրացված փոխառությունների գումարներին 50% հատկացվում է տեղերի ոգտին: Յեվ, վերջապես, դաշնակից հանրապետությունների բյուջեներն են մուծվում նաև հանրապետական ձեռնարկումներին շահույթից կատարվող հատկացումները:

Դաշնակից հանրապետությունների յեկամուտների յոշորագույն աղբյուրը կազմում են շրջանառության հարկից կատարվող հատկացումները, վոր ամեն տարին վորոշում է ԽՍՀՄ Ժողովրդարհն յուրաքանչյուր հանրապետության համար առանձին: Դաշնակից հանրապետությունների Ժողովրդարհներն իրենց հերթին յուրաքանչյուր տարին իրենք են վորոշում, թե վորքան պետք է հատկացվի ինքնավար հանրապետությունների բյուջեներին:

և տեղական բյուջեներին: Բացի դրանից, դաշնակից բյուջեների ոգտին սահմանվում են հատուկ մասհանումներ՝ յուրաքանչյուր միջնակարգ մեկ տոնն զտած բամակից 100 ռուբլի, հանված նավթի յուրաքանչյուր տոննայից 1 ռ. և միջնակարգ յուրաքանչյուր մեկ տոնն ծխախոտից 190 ռուբլի: (Վերջինը սահմանված է միմիայն Աբխազիայի, Աջարստանի և Մոլդավիայի ՍՍՀ-երի համար): Պետական հարկերի պլանը կատարելու և գերակատարելու գործում տեղերի շահագրգռվածությունն ուժեղացնելու նպատակով դաշնակից հանրապետությունների ոգտին են թողնվում նախահաշվային յենթադրույթյուններից ավելի գանձված գումարները:

Համամիութենական բյուջեյի ծախսերի մասը կազմում է ժողովրդական տնտեսության միութենական նշանակություն ունեցող ճյուղերի, այն է՝ ելեկտրոէներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության ու ջրային տնտեսության, տրանսպորտի, կապի, առևտրի, համկոմբանկի վարկերով կատարվող կոմունալ և բնակարանային շինարարության, փոխառությունների, սոց-կուլտուրական ձեռնարկումների, յերկրի պաշտպանության, կառավարչության կենտրոնական օրգանների պահպանման ֆինանսավորումը: Բացի այդ, համամիութենական բյուջեն են մտցվում նույն բյուջեյով պահպանվող բանվորների և ծառայողների սոցապահովագրության ծախսերը: Պետբանկի հետ կապված հաշվարկների ծախսերը, Ժողկոմխորհի պահեստի ֆոնդը և համամիութենական պետական պահեստի ֆոնդը:

Դաշնակից հանրապետությունների բյուջեների ծախսերի մասը կազմում է տնտեսության հանրապետական նշանակություն ունեցող ճյուղերի ֆինանսավորումը, սոց-կուլտուրական ծախսերը, կառավարման հանրապետական օրգանների պահպանման ծախսերը, և պետական յեկամուտներից տեղական բյուջեների ոգտին կատարվող հատկացումները:

Բյուջետային իրավունքների վերաբերյալ կանոնադրության (1927 թ.) 16-րդ հոդվածի համաձայն, դաշնակից հանրապետությունների բյուջեների հաշվեկշիռը պետք է կազմվի առանց դեֆիցիտի: Սակայն, յերբ պարզվում է, վոր այս կամ այն դաշնակից հանրապետությունը հնարավորություն չունի վորոշ ծախսեր յեկամտային ազբյուրների հաշվին ծածկելու, այդ դեպքում կամ դոտացիա յե տրվում, կամ յեկամուտների համամիութենական աղբյուրներից հատկացումներ են կատարվում:

ՍՍՀՄ բյուջեյի կառուցվածքի մնացած հիմնական մոմենտներից անհրաժեշտ է ընդգծել նաև մի կարեվոր հանգամանք, վորն ապահովում է բյուջեյի կատարման կայունությունը, այդ այն է, վոր յեթե ՍՍՀՄ օրգանները դաշնակից հանրապետությունների բյուջեյի վորևէ յեկամուտն իջեցնում կամ ծախսերն աճեցնում են, ապա այդ դեպքում փոխհատուցում է Միությունը:

Իսկ յեթե հանրապետական բյուջեների յեկամուտները լրիվ չեն ստացվում, ապա հանրապետությունների օրենսդրական օրգանները պարտավոր են միջոցներ ձեռք առնել ծախսեր իջեցնելու համար կամ յեկամտային մասը վերանայելու՝ ըստ հնարավորության ավելացնելու նպատակով:

Վերջում պետք է նշել, վոր ՍՍՀՄ պետբյուջեյի կառուցվածքը «ֆինանսական և մասնավորապես բյուջետային բաժանված լայն իրավունքներ է վերապահում հանրապետություններին, և այդ հնարավորություն է տալիս նրանց յերենց սեփական պետական-վարչական, կուլտուրական և տնտեսական նախաձեռնություններ յերևան բերելու» (Համ. Կ (բ) Կ 12-րդ համագումարի վորոշումից):

Ինչ վերաբերում է ՍՍՀՄ պետբյուջեյի կազմելուն, ապա նախ և առաջ անհրաժեշտ է ընդգծել, վոր պետբյուջեյի նախագծումները պետք է ամբողջովին համապատասխանեն Ժողովրդական տնտեսության պլանի քանակական և վորակական ցուցանիշներին: Հետևապես, միանգամայն սխալ է «այսպես կոչված» ֆինանսական հնարավորությունների թեորիան, վորն ապացուցում է, վոր նախ պետք է բյուջեն կազմել և ապա Ժողովրդական տնտեսության պլանը: Այդ թեորիան բացահայտ աջ ոպորտունիստական է, քանի վոր յեր Ժամանակին աջ ոպորտունիստներն էյին պահանջում, վոր Ժողովրդական տնտեսության պլանը համակերպվի բյուջետային հնարավորություններին, բյուջեյի յեկամուտներին: Ի տարբերություն կապիտալիստական յերկրների բյուջեների, վորոնք բավական վերացական յեղանակներով են կազմվում, ՍՍՀՄ բյուջեն նույնպես Ժողովրդական տնտեսության պլանի հիման վրա յե պլանավորվում: Պետական բյուջե կազմելու պրոցեսը Ժողովրդական տնտեսության պլան կազմելու մի անխզելի մասն է, քանի վոր բյուջետային պլանավորումը Ժողովրդական տնտեսության պլանավորման մի մասն է: Ժողովրդական տնտեսության պլանի հիման վրա ու դրա համեմատ վորոշելով առանձին ճյուղերի բյուջետային հնարավորությունները, բյուջեն միաժամանակ նախատեսում է նաև այդ ծախսերը ծածկելու աղբյուրները: Պետական բյուջեն սովորաբար կազմվում է մի տարվա համար: Վերականգնման շրջանում, յերբ անհրաժեշտ էր ընդգրկել գյուղատնտեսական արտադրությունը, վորն այդ Ժամանակ հենվում էր անհատական տնտեսության վրա, բյուջեն կազմվում էր հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը: Հետագայում մի կողմից, յերկրի յնդուստրացման բնագավառում ձեռք բերված հաջողություններն ու սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպումը, իսկ մյուս կողմից՝ ամբողջ շինարարական սեզոնը, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերջացող սեզոնը տնտեսական տարվա ընթացքում լրիվ ընդգրկելու անհրաժեշտությունը հնարավորություն տվին (1930 թ.) տնտեսական տարին սահմանելու հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

Պետբյուջեն յերկու գլխավոր ինստանցիաներում է կազմվում՝ Ֆինոնդ-կոմատում և Պետպլանում: Դաշնակից հանրապետությունների ֆինոնդկոմատները կազմում են բյուջեյի նախագիծը և մտցնում հանրապետական Ժողկոմխորհի քննություն, վորը լսելով ֆինոնդկոմատի ղեկուցումն ու Պետպլանի յեզրակացությունն այն մասին, յե բյուջեն վորքան է Ժողովրդական տնտեսության պլանի համաձայն կազմված, քննության է առնում այն: Ժողկոմխորհի հավանությունը ստանալուց հետո բյուջեն մտցվում է հանրապետական կենտգործկոմիներն ի հաստատություն և ապա ներկայացվում է ՍՍՀՄ Ժողկոմխորհին:*)

Դաշնակից հանրապետությունների բյուջեները ՍՍՀՄ Ֆինոնդկոմատը՝ ՍՍՀՄ Ժողկոմխորհի հանձնարարությամբ միացնում է համամիութենական բյուջեյի նախագիծին և կազմում ՍՍՀՄ միասնական բյուջեյի նախագիծ: Միասնական պետական բյուջեյի նախագիծը քննության է առնվում ՍՍՀՄ

*) Դործնականում, այժմ դաշնակից հանրապետությունների բյուջեները դաշնակից հանրապետությունների Ժողկոմխորհների հավանություն ստանալուց հետո անմիջականորեն ներկայացվում են ՍՍՀՄ Ժողկոմխորհին և Ֆինոնդկոմատին:

ժողովում խորհում և հավանություն ստանալուց հետո ներկայացվում է ԽՍՀՄ Կենտգործկոմին ի հաստատություն: Այն դեպքերում, յերբ դաշնակից հանրապետության կառավարությունը համաձայն չի լինում ԽՍՀՄ Ֆինոդկոմատի և ժողովխորհրդի մտցրած փոփոխություններին, այդ հարցը մտցնում է ԽՍՀՄ Կենտգործկոմը: ԽՍՀՄ Կենտգործկոմին կից կազմակերպված է հատուկ բյուջետային հանձնաժողով, վորը քննում է պետբյուջեի նախագիծն իր բոլոր մասերով, ԽՍՀՄ ժողովխորհրդի ամեն տեսակ առաջարկները բյուջեի հաստատման վերաբերմամբ, քննում է պետբյուջեի կատարման հաշվետվությունները, ինչպես նաև ԽՍՀՄ ժողովխորհրդի կողմից հաստատված պետբյուջեի նախագծի առթիվ դաշնակից հանրապետությունների առարկությունները:

ԽՍՀՄ միասնական պետական բյուջեն հաստատում է ԽՍՀՄ Կենտգործկոմի նստաշրջանը, նախապես լսելով ԽՍՀՄ Ֆինոդկոմատի ղեկավարը և ԽՍՀՄ Կենտգործկոմի բյուջետային հանձնաժողովի յեղրահացությունը: Համամիութենական բյուջեն և դաշնակից հանրապետությունների բյուջենները ԽՍՀՄ Կենտգործկոմի նստաշրջանը հաստատում է մեկ միասնական ուրենսդրական ակտով, վորով մի ավելորդ անգամ ընդգծվում է ԽՍՀՄ բյուջեի և ամբողջ բյուջետային սխեմայի միասնությունը: Համամիութենական բյուջեն ԽՍՀՄ Կենտգործկոմը հաստատում է ըստ յեկամուտների ու ծախսերի կարևորագույն ամփոփ ստորաբաժանումներին: Իսկ դաշնակից հանրապետությունների բյուջենները հաստատվում են ըստ յուրաքանչյուր հանրապետության յեկամուտների և ծախսերի հաշվեկշռային ամփոփումներին: Բյուջեի հաստատման այս ձևը հնարավորություն է տալիս դաշնակից հանրապետությունների կենտգործկոմներին և ժողովխորհրդներին վորոշ ճշտումներ մտցնել բյուջետային միջոցների բաշխման մեջ և կարգավորել այդ:

Յուրաքանչյուր առանձին պետբյուջեի (համամիութենական, դաշնակից հանրապետության, ինքավար մարզի) կատարումն իրագործվում է դրամարկդի միասնություն հիման վրա: Յեկամուտներն ու ծախսերն անց են կացվում պետրանկում միասնական՝ տվյալ բյուջեի համար ընդհանուր, ընթացիկ հաշվով, կապիտալ շինարարության վարկերը հանձնվում են հատուկ բանկերի, վորոնք իրենք են վարկեր բաց թողնում, նախապես ստուգելով, թե դրանք վորքան ձևա են ոգտագործվում:

Վորպեսզի բյուջեի վերաբերյալ այս հատվածի պատկերը լրիվ լինի, անհրաժեշտ է այստեղ համառոտակի կանգ առնել բյուջեի դարգացման առանձին ետադների վրա:

Ռազմական կոմունիզմի շրջանում բյուջեն նստուրալիզացիայի յեր յենթարկված և դարձել եր պետության դրամական ծախսերի մի պլանի թղթադրամի եմիսսիայի հաշվին: Բյուջեի յեկամտային աղբյուրները գյուղացիական տնտեսության ռեսուրսներն եյին, վորոնք գանձվում եյին պարեն մասնատրման կարգով, արդյունաբերության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի արտադրանքը, պաշարների ու պահեստի ոգտագործումը և, վերջապես, դրամական եմիսսիան:

Իրամի կուրսի կատաստրոֆիկ անկման պայմաններում վորեն կայուն բյուջեի մասին խոսել չեր կարելի: Այդ կապակցությամբ ել դրամական հարկերին ավելի ու ավելի քիչ տեղ եր տրվում, և 1921 թ, Համառ. Կենտ-

գործկոմի վորոշմամբ բոլոր դրամական հարկերի գանձումը դադարեցվեց:

Ռազմական շրջանի բյուջեի մի այլ առանձնահատկությունն ել՝ պետական և տեղական բյուջեների մեացումն եր (1920 թ.):

1918—1920 թ. թ. կազմվեցին չորս կիսամյա և մեկ տարեկան բյուջե: Սակայն այդ բյուջեներն արժեքազրկվող ռուբլիներով եյին արտահայտված, ուստի և չեն կարող համեմատվել կայուն բյուջեների հետ: Հետևապես, իրավացի յեր ընկ. Սոկոլնիկովը, յերբ ասում եր, թե Եյեթե վորեն մեկը գայթաղվեր և 1918—19 թ.թ. բյուջեներն ընդունել վորպես ամբողջ պետական ապարատի յեկամուտների ու ծախսերի իրական արտահայտություն, ապա, իհարկե, այդ խոշոր թյուրիմացություն առաջ կբերեր: Նոր տնտեսական քաղաքականությունն իր հետ խոշոր նվաճումներ ե բերում: 1921 թ. վերականգնվեցին դրամական հարկերը, տեղական բյուջեն բաժանվեց պետական բյուջեից, վերացվեց ձրի մատակարարման սխեման ու խնդիր դրվեց հետզհետե վերջ տալու բյուջեի դեֆիցիտայնությանը: 1921—24 թ. պայքար ե մղվում վալյուտայի կայունացման և կայուն բյուջեի համար: Եմիսսիան, վորպես յեկամուտի աղբյուր, վերջին անգամ յերեան և գալիս 1923—24 թ. բյուջեյում:

Ստաբիլիզացիոն շրջանի բյուջեի մի այլ բնորոշ գիծն այն ե, վոր աստիճանաբար անհետանում են բնավճարումները, և բնահարկերը փոխարինվում են դրամական հարկերով, վորը նպաստում է շուկայի հարաբերությունների աճմանը և դրամը մուտք ե գործում գյուղը: Յեթե 1922 թ. բյուջեի բնական (նստուրով) մասը հավասար եր 55 տոկոսի, 1923—24 թ. 2,9 տոկոս, իսկ 1924—25 թ. բյուջեյում բնական ատրերը բոլորովին բացակայում են:

Ընդհանուր ֆինանսական առողջացումը զգալիորեն կայունացրեց բյուջեն, և արդեն 1925—26 թ. հաջովեց որենտիր բյուջեներից անցնել կայուն բյուջեների:

Հետագա տարիների ընթացքում ժողովրդական յեկամտի աճմանը զուգընթաց անընդհատ ավելանում է և պետական բյուջեն, և 1924—26 թ, 2,9 միլիարդ ռուբլուց 1927—28 թ. բարձրանում է մինչև 6,6 միլիարդ ռուբ., այսինքն՝ 2,2 անգամ ավելանում ե:

Վորպես դրամի միջակտորային ու միջառակարգային վերաբաշխման մի հզոր լծակ, պետբյուջեն բացառիկ դեր եր խաղում վերականգնման շրջանում ժողովրդական տնտեսության ընդհանուր պլանավորման բնագավառում: Այդ բյուջեի մեջ արտացոլվում են հանրայնացված սեկտորի բոլոր տարերը, յեթե վոչ իրենց կուտակումների ամբողջ գումարով, ապա համեմայն դեպս այդ գումարի մի զգալի մասով, վորը վերաբաշխվում եր բյուջետային կանալներով:

Այնուհետև, մասնավոր սեկտորի շրջանառության մեջ գտնվող նյութական արժեքների մի խոշոր մասը բյուջետային մեթոդներով ներգրավվում ու վերաբաշխվում ժողովրդական տնտեսության ընդհանուր խնդիրներին համեմատ, վորպես մի առանցք, վորի շուրջն եյին կենտրոնացած մյուս տրեստեսական պլանները: Իսկ մյուս կողմից՝ վորոշ չափով ամփոփելով այդ պլանները, պետբյուջեն, վերականգնման շրջանում, պլանավորման ամենասենթետիկ մասն եր հանդիսանում: Սակայն այդ չի նշանակում, թե պետ-

բյուջեն վերականգնման շրջանում փոխարինում եր ժողովրդական տնտեսության պլանը: Ժողովրդական տնտեսության կարգավորման ու պլանավորման ընդհանուր կոմպլեքսում պետք է ժողովրդական տնտեսության պլանավորման ամենից ամբողջացած, սենթետիկ մասն եր, վոր ամենալայն ներգործություն ունեի ժողովրդական տնտեսության պրոցեսների վրա:

Պետբյուջեն, առաջին հնգամյակում նախատեսված 45,2 միլիարդ ռուբլի մասը կատարվեց 72 միլիարդ ռուբլի, այսինքն՝ գերակատարվեց 59,2 տոկոսով: Բյուջեյի գերակատարումը պայմանավորված եր ժողովրդական տնտեսության, ապրանքաշրջանառության, բնակչության դրամական յեկամուտների ընդհանուր աճումով և սոցիալիստական շինարարության խոշոր ծավալումով:

Ծախսերի ընդհանուր գումարից ժողովրդական տնտեսության ֆինանսավորման համար ծախսվում ե 50,2 միլիարդ ռուբլի կամ ամբողջ բյուջեյի 69,8 տոկոսը, սոց-կուլտուրական ձեռնարկումների վրա՝ 4,5 միլիարդ ռ. կամ 8,2 տոկոս, կառավարչական ծախսերը կազմում են 7,6 միլիարդ և կամ 9,7 տոկոս, տեղական բյուջեյին ե անցել 5,4 միլիարդ ռ. կամ 7,5 տոկոսը:

Այստեղ պետք ե նշել, վոր ժողովրդական տնտեսության ֆինանսավորման ծախսերը, հնգամյա պլանի համեմատությամբ, գերակատարված են 106,1 տոկոսով, սոցկուլտուրական ձեռնարկումներին՝ 9,8 տոկոսով, վորից լուսավորության գծով՝ 20,9 տոկոսով: Բնորոշն այն ե, իոր 60 միլիարդ ռ. կամ ամբողջ բյուջեյի 82,6 տոկոսը ծածկվել ե հանրայնացված սեկտորի յեկամուտներով, 10 միլիարդ ռ. կամ 14,2 % կազմել են բնակչության միջոցները, իսկ 2 միլիարդ ռուբլին՝ այլ յեկամուտները:

Յերկրորդ հնգամյակի առաջին յերեք տարվա ընթացքում պետբյուջեն անընդհատ աճում ե 1935 թ. հասնում ե 69,9 միլիարդ ռուբլու՝ 1933 թ. 39 միլիարդ ռուբլու գիմաց: «Քանի վոր պետբյուջեյի մեջ միանում են ամբողջ ժողովրդական տնտեսության ծախսերը, ուստի պետական բյուջեյի խոշոր ավելացումը արտացոլում ե մեր պետության՝ վորպես միասնական սխտեմի, վորպես պլանային տնտեսության սխտեմի ամրացումը» (ընկ. Մոլոտովի ԽՍՀՄ Խորհուրդների 7-րդ համագումարում տված գեկուցումից):

Բյուջեյի քանակական աճմանը զուգընթաց փոփոխվում ե նաև նրա կառուցվածքը, դառնալով վողջ հանրայնացված տնտեսության բյուջե: Այսպես հանրայնացված սեկտորի յեկամուտները 1933 թ. 31,8 միլիարդ ռուբլուց ավելանալով 1935 թ. հասնում են 56,9 միլիարդ ռուբլի, իսկ դրանց տեսակարար կշիռը բյուջեյում 81,5 տոկոսից հասնում ե 89,7 տոկոսի: Միմիայն 1935 թ. հանրայնացված սեկտորի յեկամուտների աճումը 1934 թ. համեմատությամբ, կազմում ե 32 տոկոս: Բնակչության միջոցների մորելիզացիայի գումարները 1935 թ. նախորդ տարվա մակարդակից գրեթե չեն անցնում (նույնիսկ 2,8 տոկոսով իջնում են), կազմելով 5,7 տոկոս միլիարդ ռուբլի, իսկ բյուջեյի հանրագումարի 9,1 տոկոսը: Բնակչության միջոցներից գանձված հարկերի կայունությունը նրանով ե բացատրվում, վոր աշխատավարձի այն հավելումը, վորը կապված ե հացի քարտային սխտեմի վերացման հետ, ամբողջովին ապահովում ե ամեն տեսակ հարկերից:

Միաժամանակ, զգալիորեն ուժեղանում ե կուլակային-կապիտալիստական և այլ տարրերի մնացորդների հարկումը:

Բյուջեյի ծախսերի մասում, ժողովրդական տնտեսության ֆինանսավորման ծախսերը կազմում են 35,1 միլիարդ ռուբլի՝ 1933 թ. 24,8 միլիարդ ռուբլու գիմաց, սոց-կուլտուրական ծախսերը 4,7 միլիարդ ռուբլի՝ 1933 թ. 2,3 միլիարդ ռուբլու գիմաց:

Ինչ վերաբերում ե յերկրի պաշտպանության ծախսերին, ապա 1934 թ. բյուջեյի կատարման պրոցեսում դրանք ավելացան, նախատեսվածի գիմաց, հասնելով 5 միլիարդ ռուբլի: Այդ ծախսերի բարձրացումը բացատրվում ե նրանով, վոր բարձրացան բանակի պարենային և նյութական մատակարարման առարկաների գները, ընդարձակվեց զորանոցային և բնակարանային շինարարության պլանը, ինչպես նաև ձեռք առնվեցին յերկրի մարտունակությունն ուժեղացնելու մի շարք միջոցներ:

Յերկրի պաշտպանության 1935 թ. ծախսերը հաստատված են 6,5 միլիարդ ռուբլու չափով: Միանգամայն ակներև ե, վոր մեզ մոտ յերկրի պաշտպանության ծախսերը բյուջեյի մեջ շատ համեատ տեղ են գրավում կապիտալիստական բյուջեների համեմատությամբ, վորոնց մեջ այդ ծախսերը բյուջեյի զգալի մասն են կլանում: Այսպես, բանակի և նավատորմի վրա 1934 թ. ծախսվել ե ձապոնիայում բյուջեյի 38,5 տոկոսը, Լեհաստանում՝ 39,2 տոկոսը, Անգլիայում՝ 21,6 տոկոսը, Գերմանիայում 39,2 տոկոսը, իսկ ԽՍՀՄ այդ ծախսերը 1935 թ. կազմում են միմիայն 10,3 տոկոս:

Վերջացնելով, մի քանի խոսք ասենք դաշնակից հանրապետությունների բյուջեների մասին:

Լենինյան ազգային քաղաքականության կիրառումը և անցյալում ձեռնարկված ժողովուրդների տնտեսական-կուլտուրական մակարդակի բարձրացումը պահանջում ե յին հանրապետական բյուջեներն զգալի չափով ավելացնել:

Այդ ավելացման պատկերը մենք ստանում ենք հետևյալ թվերից (միլ. ռուբլ.):

	1928—29 թ.	1935 թ.	Աճման % -ը
1. ՌՍՖՍՀ բյուջեն . .	1607,4	7402,4	460,5
2. ՈՒՍՍՀ » . .	412,8	2280,0	554,5
3. ԲՍՍՀ » . .	97,8	486,4	497,3
4. ԱՍՖՍՀ » . .	143,2	881,0	615,2
5. Թուրք. ՍՍՀ » . .	29,5	307,2	1041,3
6. Ուզբ. ՍՍՀ » . .	95,8	542,4	566,1
7. Տաճ. ՍՍՀ » . .	—	293,0	—
ԸՆԴԱՄԵՆԸ . .	2386,5	12201,4	511,2

Ինչպես տեսնում ենք այս թվերից, դաշնակից հանրապետությունների պետբյուջեն վերլուծվող շրջանում ավելացել ե ավելի քան 5 անգամ, իսկ առանձնապես աճել են Ուզբեկստանի, Թուրքմենստանի, ԱՍՖՍՀ-ի, այսին-

քըն, նախկին ռուսաստանի ամենից հետամնաց ծայրամասերի բյուջեները:

Յերկրորդ հնգամյակի առաջին յերկու տարվա պետբյուջեյի կատարման արդյունքներն ու 1935 թ. հաստատված բյուջեն ցույց են տալիս, Վոր «խոշոր չափերով աճել է պետբյուջեն և խորհրդային Միության ֆինանսական հզորությունը, իսկ այս հնարավոր յեղով «միայն շնորհիվ այն բանի, Վոր մեր յերկրում հաղթանակել է սոցիալիզմը»: (Գրինկոյի՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի 1935 թ. 1-ին նստաշրջանում արտասանած ճառից):

Հետագա յերկու տարիները պետք է ավելի ևս ընդլայնեն մեր բյուջեյի բազան՝ յերկրորդ հնգամյակի սոցիալիստական վիթխարի շինարարության պլանը, անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու պլանն ապահովելու համար:

8. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պետական ապահովագրությունը ԽՍՀՄ-ում մի սխտեմ է, Վոր ապահովում է սոցիալիստական ընդլայնած վերարտադրության նորմալ պրոցեսը տարրերային աղետների դեպքում:

Պետական ապահովագրության միջոցով հատուցվում են կոլտնտեսների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների այն ֆնանսները, Վորոնք առաջ են գալիս հրդեհներից, անասունների սատկումից, ինչպես նաև ցանքերը յերաշտի, կարկտահարության և տարրերային այլ աղետների հետևանքով փչանալուց: Դրա համար ել Պետապը նախապես բնակչության միջոցներ է Ժողովում և ապա ապահովագրական վճարներ տալիս:

Վորպես կանոն, Պետապը նոր արժեքներ չի ստեղծում, նրա ակումուլյացիայի յենթարկած կուտակումներ գործադրվում են ապահովագրված գույքի կորած արժեքը վերականգնելու համար: Ապահովագրական վարձատրության չափը կոլտնտեսությունների և կոլտնտեսականների համար ավելի յե, քան նրանց վճարած գումարը կամ ապահովագրական տարիֆը, ուստի Պետապը վերաբաշխում է միայն հավաքած միջոցները: Այսպես, ուրեմն, նոր արժեքներ չստեղծելով, Պետապը վերաբաշխել է արդեն իսկ յեղած արժեքները և ապահովում է վերարտադրության պրոցեսի անընդհատ զարգացումը:

Կապիտալիստական յերկրներում գույք և կապիտալներ ապահովագրող բաժնետիրական ընկերությունների ամբողջ աշխատանքը լինում է խոշոր ռզուտ ստանալը, հետապնդելով շահադիտական նպատակներ, և տարիֆներն ու վճարումներն այնպես են կառուցված, Վոր ավելի խոշոր վճարումներ են կատարում ու ավելի քիչ վարձատրություն են ստանում մանր գույքատերերը, բնակչության մանր բուրժուական խավերը:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում պետական ապահովագրության պծով կուտակված գումարներն ռզուտագործվում են անմիջապես գույքի ապահովագրության վրանասներ հատուցելու և վնասների հնարավորությունը կանխող ձեռնարկումները (միլիորացիա, պարարտացում, հակահրդեհային պահպանություն և այլն) ֆինանսավորելու համար:

Վերջապես, պետական ապահովագրության քաղաքականության նպատակը մեզ մոտ արտադրության սոցիալիստական ձեղերի պաշտություն ու վերարտադրությունն է:

Ապահովագրությունը լինում է անձնական և գույքային:

Անձնական ապահովագրության որյեկտը ֆիզիկական անձն է, նրա ապահովումը ի դեպ մահվան, հաշմանդամության և այլն: Գույքային ապահովագրության որյեկտը գույքն է և նրա ապահովումը հրդեհից, հեղեղումից, անբերրիությունից և այլն:

Գանի Վոր մեզ մոտ գոյություն ունի սոցիալիստական ապահովագրության ինքնուրույն սխտեմ, Վորն ընդգրկում է բոլոր աշխատավորներին, հետևապես անձնական ապահովագրությունը այստեղ տեղի յե տալիս գույքային ապահովագրության, Վորը պետական ապահովագրության հիմնական աեսակն է (կազմելով բոլոր ապահովագրական վճարումների 95 տոկոսը): Ապահովագրությունը յերկու տեսակ է լինում՝ պարտադիր և կամավոր, նայած թե ինչպես են ստացվում վճարումները: Առաջին դեպքում տվյալ որյեկտն ապահովագրվում է պարտադիր կարգով, և գույքատերերը պարտավոր են կանոնավոր կերպով մուծել հասանելիք վճարումները:

Կապիտալիստական տնտեսության մեջ, Վորտեղ վերարտադրության պրոցեսը չի կարելի պլանավորել, չի կարող լինել նաև պետական ապահովագրություն՝ Վորպես խախտված վերարտադրությունը պլանաչափորեն վերականգնելու մի միջոց, ուստի և պարտադիր ապահովագրության սկզբունքն այնտեղ կիրառելի չի:

Պետք է նշել, Վոր մեզ մոտ պետական ապահովագրության գործում խոշոր նվաճումներ են ձեռք բերված. սակայն մի շարք շրջաններում այս բնագավառում նաև Վորոշ բաց են յեղել: Շատ հաճախ ապահովագրությունը ռզուտագործվել է Վորպես տնտեսության հետևանքներն ու կուլակային տարրերի բացահայտ ֆնասարարությունը ծածկելու մի ձև: Այնուհետև, Վորոշ անճշտություններ են յեղել նաև ԽՍՀՄ Ֆինոգիկոմատի կողմից 1931 թ. հրատարակված բանող անասունների և ցանքերի ապահովագրության վերաբերյալ հրահանգներում: (Պետապը պետք է վճարի «անասունների սատկեու հետ կապված վնասները, ինչ պատճառներից ելառաջ յեկած լինի այդ» 1931 թ. մայիսի 15-ի հրահանգը):

Այս բոլոր բացերը Ժամանակին մերկացրել է կուսակցության Կենտկոմը և ապահովագրության աշխատանքի խեղաթյուրումների վերաբերյալ իր Վորոշմամբ («Պրավդա», 1933 թ., մարտի 26-ին) առաջարկել է ԽՍՀՄ Ֆինոգիկոմատին «վերանայել գյուղում կիրավող ապահովագրության վերաբերյալ բոլոր հրահանգները և տեղական ֆինանսական որդաններին հատուկ ցուցումներ տալ, Վորպեսպի հետագայում ապահովագրությունը չոգտագործվի պետության և հասարակական սեփականության դեմ»:

Այդ ցուցումների հիման վրա ԽՍՀՄ Ժողկոմխորհը հաստատել է 1933/34 թ. պարտադիր կոպարային ապահովագրության նոր որենքը (1933 թ. հուլիսի 17), Վորով չի թույլատրվում հատուցել այն ֆնանսները, Վորոնք առաջ են յեկել «կոլտնտեսության, կոլտնտեսականի և աշխատավոր մենատնտեսի մեղքով, այսինքն ալիհայտ անտնտեսության, հասարակական գույքի պաշտպանության բացակայության, հեղահրդեհային կանոնները խախտե-

յու, ինչպես նաև ապահովագրողների դիտավորյալ գործողութունների հետեւմանքով և այլն» (որենքի 16-րդ հոդ.):

Պետական ապահովագրութունը ԽՍՀՄ-ում գուտ դասակարգային սկզբունքներով և կառուցված: Տարիքները (գույքի ապահովագրության համար մուծվող գումարի չափը) և պատասխանատվության (ապահովագրած գույքը իշանալու դեպքում տրվող վարձատրության) նորմաներն ստորաբաժանված են դասակարգային քաղաքականության համեմատ:

Այսպես, որինակ, ֆւաններվճարելիս կոլտնտեսութւոնները, կոլտնտեսականները, բանվորներն ու ծառայողները ստանում են ապահովագրված գույքի 100%, մենատնտեսները, տնայնագործները, արհեստավորները և այլ աշխատավորները՝ 90%: Ապահովագրական գնահատության չափն առանձին դյուղատնտեսական մշակույթների ֆւանները հատուցելու համար (դաշնակից հանրապետութւոններն ունեն իրենց նորմաները) հետևյալ կերպ է ապահովվում: ՌՍՖՍՀ-ում կոլտնտեսութւոնների համար 50 ռուբ., կոլտնտեսականների և մենատնտեսների մինչև 45 ռ., ԱՍՖՍՀ-ում՝ 76 մինչև 54 ռ. մեկ մեկ հեկտարին: Ստորաբաժանված են նաև ապահովագրական տարիքները՝ նայած սոցիալական խմբերին և տերրիտորիաներին, այն է՝ ապահովագրված գյուղատնտեսական շենքի և արդյունաբերական ձեռնարկության համար տրվող գումարը վորոշվում է ապահովագրական այն տարիքի համաձայն, վորն, որինակ ՌՍՖՍՀ-ում կազմում է (ապահովագրական վարձատրութւոն 100 ռուբլուց) կոլտնտեսութւոնների համար 85 կոպ., կոլտնտեսականների՝ 1 ռ. 31 կոպ. և մենատնտեսների՝ 1 ռ. 65 կոպ. (այս բոլոր տվյալները վերացված են 1933/34 թ. պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերյալ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. մարտի 17-ի որենքի համաձայն):

Վերջապես, գյուղատնտեսական հարկն անհատական կարգով վճարող կուլակային տնտեսութւոնների գույքը № 3 ցուցակով յեկամտահարկ վճարող անձանց, ինչպես նաև ընտրական իրավունքներից զրկված այլ անձանց գույքն ապահովագրության յենթակա չէ:

Նույն այդ որենքով պարտադիր կարգով ապահովագրվելիք որյեկտներն հանդիսանում են՝ շենքերը (գյուղատնտեսական, արդյունաբերական և տնայնագործարհեստագործական արհեստանոցները): Բացի այդ, կոլտնտեսութւոններում ամբողջ ինվենտարը, փոխադրական միջոցները, հումքը, պաշարներն ու նյութերը, գյուղատնտեսական բույսերի ցանքերը, խոշոր յեղջյուրավոր անասունները մինչև 1 տարեկան հասակը, ձիերը և ուղտերը մինչև 2 տարեկան հասակը, վոչխարները, այծերն ու խոզերը մինչև 6 ամսական հասակը, բոլոր ազնվացեղ անասունները: Կոլտնտեսականների, մենատնտեսների, բանվորների և ծառայողների, տնայնագործների և արհեստավորների վերաբերմամբ նույն շենքերը, ավելացրած դրան գյուղատնտեսական բույսերի մշակույթները, բանջարանոցները, բոստանները, ամեն տեսակի անասունները (նույն հասակի, ինչպես և կոլտնտեսութւոններում):

1933/34 թ. որենքի մյուս եյական կողմն ել այն է, վոր դարնանացանի ապահովավճարները գանձվում են վոչ թե վաստորեն ցանված, այլ պլանով նախատեսված տարածութւոնից: Պլանից դուրս ցանված գյուղատնտեսական մշակույթները ձրխաբար են ապահովագրվում:

Այնուհետև, կենդանաբուծության հետագա զարգացումը խթանելու համար խոշոր արտոնութւոններ և զեղջեր են կիրառվում անասունների ապահովագրության գործում:

Առաջին հնգամյակի ընթացքում Պետալի գծով գանձված և ծախսված է յեղել ավելի քան 2,5 միլիարդ ռուբլի, ընդվորում կոլլեկտիվացման պրոցեսի բուռն ծավալման հետևանքով զգալիորեն ավելացել են կոլտնտեսային սեկտորի տված կուտակումները, այն է՝ 1928/29 թվի 2,4 միլ. ռուբլուց 1932 թ. հասել են 194,3 միլ. ռուբլու: Այստեղ բնորոշն այն է, վոր առաջին հնգամյակում կոլտնտեսականները վճարել են Պետալին 310 միլ. ռ., հետ են ստացել 390 միլ. ռ., մինչդեռ մենատնտեսները վճարել են 650 միլ. ռ., իսկ հետ են ստացել 340 միլ. ռուբլի:

9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովագրութւոնը ԽՍՀՄ-ում Հոկտեմբերյան հեղափոխության կարեվորագույն նվաճումներից մեկն է:

Դեռևս 1912 թ., յերբ ցարական կառավարութւոնը հանձինս պետական գումարի ընդունեց պետական ապահովագրության որենքը, Լենինը գրել է. «հենց միայն այդպիսի՝ բանվորների կենսական շահերն ամենակուպիտ կերպով ծաղրող որենք կարող եր ծնունդ առնել կատաղի ռեակցիայի այժմյան մոմենտին, հակահեղափոխության տիրապետության շրջանում, կառավարության ու կապիտալի ներկայացուցիչների նախնական յերկարամյա բանակցութւոններից ու համաձայնութւոններից հետո: Ապահովագրության ռեֆորմի իրագործման անհրաժեշտ նախապայմանը, վոր իսկապես համապատասխանում է պրոլետարիատի շահերին,—ցարեզմի վերջնական տապալումն է և պրոլետարիատի դասակարգային ազատ պայքարի համար անհրաժեշտ պայմանների նվաճումը (Լենին, յերկ. Ժող. հ. XIV, եջ 386, 2-րդ հրատ.):

Այս բնութագրերը վերաբերում է վոչ միայն ցարական Ռուսաստանի պետական ապահովագրությանը, այլ և ամբողջ կապիտալիստական հասարակությանը: Կապիտալիստները ամեն միջոց ձեռք են առնում բանվոր դասակարգի հեղափոխական շարժումը կասեցնելու համար և այդ միջոցներից մեկն ել սոցիալիստական ապահովագրության քաղաքականութւոնն է: Այն նպաստները, վոր ստանում են կապիտալիստական ձեռնարկութւոններում աշխատող բանվորները, վոչ այլ ինչ են, բայց յեթե մի «վողորմութւոն» հեղափոխական շարժումը թուլացնելու համար: Իսկ այն գումարները, վոր վճարում եյին կապիտալիստական ապահովագրության որգանները, վերջին հաշվով բանվորի աշխատավարձից կատարվող հանուրդներն եյին, քանի, վոր բանվորի աշխատանքը ժողովրդական յեկամուտների միակ աղբյուրն է: Հետևապես, կապիտալիստական պետության մեջ սոցիալական ապահովագրութւոնն այն մեթոդներից մեկն է, վորով բուրժուազիան պաշտպանում է իր շահերը և պայմաներ ստեղծում բանվոր դասակարգին շահագործելու համար:

ԽՍՀՄ-ում սոցիալական ապահովագրութւոնը պրոլետարական պետության հզոր զենքերից մեկն է, վորն ոգտագործվում է սոցիալիստական հարաբերութւոնների ընդլայնած վերարտադրության և աշխատավորության

նյութական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար: Սոցիալական ապահովագրության յեկամուտները աշխատավարձի պահույններ չեն, այլ լրացուցիչ ֆոնդ, վորը պետութունը ոգտագործում է մի շարք կուլտուրական և տնտեսական ձեռնարկումներ կիրառելու համար:

«Այլ» ոպորտունիզմը ոգտագործելով մեր աճման դժվարությունները «ապացուցում էր», վոր աշխատավորության և մասնավորապես բանվոր դասակարգի նյութական ու կուլտուրական մակարդակն իջնում է, բոլորովին հաշվի չառնելով այն հսկայական ոգնությունն ու սպասարկումները, վոր բանվորը ստանում է սոցիալական ապահովագրությունից: Բավական է միայն մատնանշել, վոր 1934 թ. աշխատավարձի ֆոնդը հավասար էր 38,1 միլիարդ ռուբ., իսկ սոցապի բյուջեն կազմում էր 5,0 միլիարդ ռուբ.: Այդ աջոպորտունիստական զրպարտությունը մերկացրեց ընկ. Ստալինը, վորն ապացուցեց, վոր աշխատավոր մասսաների նյութական և կուլտուրական մակարդակը հսկայական չափերով բարձրացրել է, և դրա ցուցանիշը վոչ միայն բանվորի ստացած միջին աշխատավարձն է, այլ և այն խոշոր գումարները, վոր սոցիալական ապահովագրության որգանները ծախսում են այնպիսի ձեռնարկումների վրա, վորոնք նույնպես բարելավում են աշխատավորների նյութական և կուլտուրական դրությունը (ժամանակավոր անաշխատունակության նպաստ, հանգստյան տներ, սանատորիումների կառուցում ու պահպանում և այլն):

Սոցիալական ապահովագրության կուտակման աղբյուրը բանվորների և ծառայողների աշխատավարձի հավելումներն են: Այդ հավելումների չափը վորոշվում է համաձայն բանվորների և ծառայողների թվի, նրանց միջին աշխատավարձով ու ապահովագրական տարիֆով: Ապահովագրական տարիֆը արտացոլում է յուրաքանչյուր ճյուղի յուրահատկությունը, որինակ, ֆնասակար արտադրության բանվորների համար ապահովագրական տարիֆն ավելի բարձր է, քան ծառայողինը:

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական պետություններում, վորտեղ գործազուրկների թիվը տասնյակ միլիոնների յե հասնում (մանավանդ այժմ՝ ճգնաժամի հետևանքով), սոցիալական ապահովագրության ոգտին կատարված հատկացումները կրճատվում են, ԽՍՀՄ-ում սոցապի բյուջեն տարեցտարի ավելանում է և հետևալ պատկերն ունի.—

1927—28 թ.	1928—29 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.
979,0	1258,9	4191,0	4431,0	5050,0

Ինչպես տեսնում ենք այս թվերից, սոցապի բյուջեն աճել է ավելի քան հինգ անգամ:

Սոցապի կուտակումներն, ինչպես արդեն ասացինք, ծախսվում են մի շարք այնպիսի ձեռնարկումների վրա, վորոնք բարելավում են աշխատավորության նյութական ու կուլտուրական դրությունը:

Այդ ձեռնարկումներն են.

ա) ժամանակավոր անաշխատունակության դեպքում կատարվող ծախսումներ, բանվորին ժամանակավորապես հիվանդության դեպքում տրված նպաստներ, դիետիկական սննդի համար և գործազրկության դեպքերում կատարվող ծախսեր: Մեր սոցիալիստական շինարարության կարելիորագույն նվաճումներից մեկը՝ գործազրկության վերացումն է, ուստի և 1930 թ. այդ ծախսերը սոցապի բյուջեն այլևս չեն մտցվում:

բ) բանվորների յերկար ժամանակ արտադրությունից դուրս մնալու դեպքում տրվող նպաստներ,

գ) բժշկական ոգնության—պրոֆիլակտիկ ձեռնարկումների ֆինանսավորում,

դ) կուլտուրական ծախսեր, մասնավորապես բանվորական բնակարանային շինարարության բնագավառում,

յե) բուժօգնության և լուսավորության գծով կատարվող ծախսեր,

զ) սոցապի որգանների կազմակերպական ծախսեր:

Սոցիալական ապահովագրության առաջին հնգամյակի ծախսերի դինամիկան հետևյալ աղուսակն է տալիս (միլ. ռուբ.).—

Ծ ա խ ս ե Ր	27/28 թ.	28/29 թ.	29/30 թ.	Հատուկ յեռամս.	31 թ.	32 թ.
Ընդամենը, վորից՝	979,0	1258,9	1660,0	541,6	2587,6	4191,0
1. Ժամ. անաշխ. նպաս.	244,0	297,7	359,7	103,2	528,5	695,0
վորից գործուղ. . .	113,5	125,4	70,9	—	—	—
2. Կենսաթոշակներ	251,8	300,5	338,1	—	349,3	483,0
3. Լուսավորություն	1,5	12,4	32,9	31,9	136,4	158,0
4. Բուժօգնություն	244,4	258,6	336,0	100,4	489,0	747,0
5. Բան. բնակ. շին.	35,0	123,3	159,7	67,5	351,6	720,0
6. Կազմակ. ծախս.	25,8	26,1	28,7	5,6	29,4	49,0

Յերկրորդ հնգամյակի առաջին յերկու տարիներում ևս սոցապի ծախսերն անընդհատ աճում են: Այսպես, 1934 թվին կենսաթոշակի գումարը 1933 թվի 627, 3 միլ. ռ. բարձրանում հասնում են 679, 5 միլ. ռ., բուժօգնության ծախսերն ավելանում են 22, 5%-ով (1150 միլ. ռ.), պրոֆիլակտիկ ծախսերը՝ 32, 7%-ով և այլն:

Վերջին ժամանակները մի շարք դեպքեր են յեղել յերբ, «փախստականները», սիմուլյանտներն ու գործալիքները սոցիալական ապահովագրության որգանների կողմից ապահովվել են առաջավոր բանվոր-հարվածայինների և հին կադրայինների հետ հավասարապես (ԱՄՀԿՍ 1933 թ. 3-րդ պլենումի բանաձեւերից): Այսպիսի դիմազրկությունը սոցապի ծախսումների ասպարիզում այն գործնական հետեւանքն է ունենում, վոր փաստորեն միջոցներն վորոշված նպատակով չեն ծախսվում, և հաիշտակվում է սոցիալիստական սեփականությունը: Սոցապը չպետք է պասիվորեն միայն փոխատուցի աշխատավարձը, այլ պետք է ակտիվորեն ներգործի արտադրության կազմակերպման վրա, վոչ մի կերպ թույլ չտալով, վոր իր կուտակումներն ոգտագործվեն անփութության և անտնտեսության հետեւանքները ծածկելու համար: Արհեստակցական և աշխատանքի որգանների միացման հետեւանքով սոցապի ֆինանսական բաղան էլ ավելի յե ուժեղանում և նրա աշխատանքն էլ ավելի յե մոտենում աշխատավորության սպասարկման գործին:

Սոցիալիստական շինարարության հաջողությունները չեն վերացնում սոցիալական ապահովագրության որգանների առաջ յեկրորդ հնգամյակում դրված խնդիրները: Յերկրորդ հնգամյակի վերջում սոցապի բյուջեն պետք է կազմի 9, 3 միլ. ռուբ. 1932 թ. 4,1 միլիոն ռուբ. դիմաց, կամ ավելացում էրկու անգամ:

10. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ

Առաջին հնդամյակը ֆինանսական բնագավառում վոչ միայն ֆինանսական ինստիտուտների, ռեսուրսների քանակական աճմամբ է բնութագրվում, այլ և վորակական տեղաշարժումներով: Այդ տեղաշարժերից մեկն էլ միասնական ֆինանսական պլանի կազմումը պետք է համարել:

Միասնական ֆինպլան կազմել հնարավոր չեղավ մեր տնտեսության սոցիալիստական պլանի հիմքի վրա զարգացած տնտեսության պայմաններում: Պլանային սկզբունքի աստիճանական ուժեղացումն ու խորացումը, ինչպես նաև հանրայնացված սեկտորի ֆինանսական սխեմայի յեկամոտներն ու ծախսերի ավելացումը հրամայաբար թելադրում էին անցել միասնական ֆինպլանի, վորը ժողովրդական տնտեսության պլանի ֆինանսական արտացոլումն է: Կուսակցության և կառավարության 1930 թ. վորոշումների մեջ նշվում է «վոր պլանային տնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունները հնարավոր է անհրաժեշտ են դարձնում ֆինանսների պլանավորումն ավելի բարձր աստիճանի հասցնելն ու հանրայնացված սեկտորի ֆինանսները միասնական ֆինանսական պլանի մեջ ընդգրկելը» (ԽՍՀՄ Ժողովուրդի 1930 թ. 28/IV վորոշումը): «Պլանային սոցիալիստական տնտեսության հաջողությունները թույլ տվին ֆինանսների բնագավառում մկերակել ֆինանսական պլանի սխեմայ, վորն ընդգրկում է յերկրի այն բոլոր միջոցները, վորոնք ծախսվում են կապիտալ շինարարության վրա, հանրայնացված սեկտորի շրջանառում միջոցները լրացնելու, կուլտուրայի կառավարչության, ԽՍՀՄ-ի պաշտպանության վրա» (Համ Կ (բ) Կ Կենտկոմի 1930 թ. դեկտեմբերյան պլենումի բանաձևից):

Միասնական ֆինպլանը, վորպես ժողովրդական տնտեսության պլանի մի մասը, դրսևվորում ու յերեվան է հանում ֆինանսական պրոցեսներն իրենց ամբողջությամբ ու սինթետիկ կապակցությամբ:

Ֆեթե հանրայնացված սեկտորի վերաբերմամբ այստեղ վճռական նշանակություն ունեն կուտակումները, կապիտալ շինարարությունը, շրջանառում միջոցների լրացումն ու կուլտուրական, յերկրի պաշտպանության և կառավարչական ծախսերը, ապա անհատական սեկտորի վերաբերմամբ եյական նշանակություն ունեն բնակչության վերաբաշվող և մորելիդացիայի յենթարկվող ռեսուրսները, վորոնք ուղղվում են հանրայնացված տնտեսության կանալները:

Այստեղ անհրաժեշտ է նշել, վոր ֆինպլանի ծավալին վերաբերող հարցերի շուրջը մի շարք բուրժուական-վնասարար դրույթներ են առաջադրվել: Այսպես, որինակ, պրոֆ. Սորոկինը, վորը ֆինանսները դիտում էր վորպես «պետական տնտեսություն», «պետական միջոցներ», առաջարկեց միաժամանակ ֆինպլանի ծավալն ընդունել հանրայնացված սեկտորի կապիտալ ներդրումներին հավասար, քանի վոր այդ պլանի լայն ծավալը, «ուժերից վեր խնդիր է»:

Ուկրայնայի պետպլանի մի խումբ աշխատողների կարծիքով, միասնական ֆինպլանի ծավալը պետք է լայնացնել և հասցնել ամբողջ ժողովրդական պլանի ռեսուրսների չափին, այսինքն՝ այդ պլանի մեջ մտցնել վոչ միայն մասնավոր սեկտորից գանձվող հարկերը (վերաբաշվող ռեսուրսները), այլ և բոլոր կուտակումներն ու ֆինանսական կապերի այն կոմպլեքսը, վոր

գոյություն ունի բնակչության առանձին խմբերի ու դասակարգերի միջև և բնակչության ու հանրայնացված տնտեսության միջև: Սակայն, ֆինպլանի ծավալն այդպես լայնացնելու դեպքում կթուլանա նրա՝ վորպես մի հզոր գնքի նշանակությունը, քանի վոր նա ի վիճակի չէր լինի այդ ֆունկցիաները կատարելու:

Վնասարար Յուրովսկին կարծում է, թե միասնական ֆինպլանը լայնացրած բյուջե յե և վոր կապիտալիստական յերկրների բյուջեն մի ֆինպլան է, վորն արտացոլում է իր մեջ պետության բոլոր յեկամոտներն ու ծախսերը: «Այնպիսի ֆինանսական պլան, ինչպես կապիտալիստական պետություն պետք ունի ե. . . , խորհրդային յերկիրը դեռ յեվս չունի, նա այդ պլանն այժմ վորոնում է միայն միասնական ֆինպլանի՝ ձեվերում»: Ըստ Յուրովսկու դուրս է գալիս, վոր այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում բյուջեն պլան է, մեզ մոտ փորձեր են արվում միայն պլանի անցնելու համար: Մինչդեռ կապիտալիստական բյուջեյի հմնական հատկանիշը պլանային սկզբունքն չէ, բյուջեյի պլանավորման ֆունկցիան չէ, այլ տիրող դասակարգի հիմնարկներն ու կազմակերպությունները պլաները ֆինանսավորելու համար գումարներ ձեռք բերելն ու ծախսելն է, աշխատավոր մասսաներին շահագործելու և նրանց կոպեկները յուրացնելու միջոցով: Այլ խոսքով, վնասարարները և մասնավորապես Յուրովսկին կապիտալիստական պետությունն ունյացնում են սոցիալիստական շինարարության միասնական ֆինպլանի հետ:

Ճիշտ չի նաև Շախնովսկու այն կարծիքը, թե իբր ֆինպլանը ֆինանսական քաղաքականության պլան է, վորի մեջ թվական արտահայտությունները միայն ոժանդակ դեր են խաղում: Մինչդեռ մեր պայմաններում միասնական ֆինպլանի համար ամենաեյականը հենց այդ թվական արտահայտություններն են, քանի վոր ֆինպլանը տալիս է նախագծված ռեսուրսների և ծախսերի հաշվեկշիռն ամբողջ պետական տնտեսության համար և թվերով պետք է արտահայտի պետության ու բնակչության սոցիալական տարբեր խմբերի և տնտեսության սեկտորների միջև յեղած մի շարք հարաբերությունները: Առանց միասնական ֆինպլանում մի շարք թվերի դիրեկտիվ, պլանային նշանակություն տալու, չի կարելի նաև ֆինանսական քաղաքականության պլանը նշել ամբողջ հանրայնացված տնտեսության համար:

Վերջին հաշվով, ֆինանսական պլանն ընդգրկում է թե ժողովրդական յեկամտի այն մասը, վորը վերաբաշվում է ֆինանսական ինստիտուտների կողմից և թե այն մասը, վոր տնտեսության առանձին ճյուղերի կուտակումն է և վերաբաշխման չի յենթարկվում:

Ֆինպլանի մեջ արտացոլում են՝ ալումուլյացիայի յենթարկվող և վերաբաշխվելիք ռեսուրսների ընդհանուր գումարների հայտաբերումը, այդ ռեսուրսների ալումուլյացիայի մեթոդները, այդ ռեսուրսների դերն ու բաշխումն ըստ առանձին ճյուղերի, առանձին ինստիտուտների դերն այդ գործում, հաշվարկային հարաբերությունները տնտեսության առանձին ճյուղերի և ֆինանսական սխեմայի միջև, ռեսուրսների վերաբաշխումը հանրայնացված և չհանրայնացված սեկտորների միջև, կապիտալ ներդրումների չափն ու հիմնական ֆոնդերի վիճակը: Միասնական ֆինպլանի կազմի մեջ մտնում են պետք ունյացնող, տեղական բյուջեն, գերատեսչությունների հատուկ միջոցները,

վարկային սխտեմի պլանը, սոցիալական ապահովագրության բյուջեն, Պետապի պլանը, խնայողամարկդները, կոոպերացիան, ինքնահարկումը, պրոֆմիությունների միջոցները (սոց-կուլտուրական ձեռնարկումների գծով), ինչպես նաև տնտեսական որդանների սեփական կուտակումները:

Այդ պլաններին միավորումը մեկ միասնական ֆինպլանի մեջ չի վերացնում առանձին, ինքնուրույն պլանները: Հետեւապես, սխալ է մի քանի ընկերների այն տեսակետը, թե քանի վոր ֆինանսները պլանավորվում են միասնական ֆինպլանի սխտեմում, ուստի: հենց դրանով էլ վերանում է ֆինանսական ինստիտուտների դերը: Այստեղ մոռանում են մի հանգամանք, վոր հենց տնտեսական հաշվարկի սկզբունքից յեղնելով, միասնական ֆինպլանի մեջ պլանավորվում են միմյան պերարտագրության ընդլայնման համար ոգտագործվող կուտակումները և ծախսերը, իսկ մնացած ֆինանսները ֆինպլանի ծավալի մեջ չեն մտցվում:

Այնուհետև, յեթե ֆինպլանում պլանավորվում են հանրայնացված տնտեսության ամբողջ կուտակումները, ապա բյուջեյում պլանավորվում է միայն կուտակումների վերաբաշխվող մասը, այսինքն՝ կապիտալ ներդրումների, շրջանառու միջոցների աճի և կուլտուրական ծախսերի այն մասը, վորը չի ծածկվում տնտեսական որդանների սեփական միջոցների հաշվին:

Վերջապես, բյուջեյի և ֆինպլանի եյությունը ճիշտ վորոշելու համար պետք է ընդգծել, վոր ֆինպլանն ինքնին վերաբաշխման հատուկ լծակներ չունի, այլ այդ նպատակի համար ոգտագործվում են գլխավորապես վերաբաշխման բյուջեյային մեթոդները:

Ուսումնասիրելով պետբյուջեն՝ ֆինպլանի այդ հիմնական ելեմենտը, մենք այնուամենայնիվ դրանով ֆինանսական սխտեմի ունեցած դերի ճիշտ պատկերը չենք ստանում: Այսպես, որիակ, ամենից ընդհանրացնող ցուցանիշներից մեկը՝ կապիտալ ներդրումները լրիվ չեն արտացոլվում պետբյուջեյում: 1934 թ. կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալն ըստ պլանի 25 միլիոն. ռուբլի յեր, իսկ բյուջեյով նախատեսվում է մոտ 14 միլիարդ ռուբլի: Կապիտալ շինարարության ֆինանսավորման լրիվ ծավալը արտացոլվում է միայն միասնական ֆինպլանում: Ֆինպլանի սինթետիկ բնույթը չի դարձնում այն մի գործառնական պլան, վորը վերաբաշխում է ժողովրդական յեկամուտը: Ֆինպլանի վերաբաշխիչ դերն իրագործվում է նար մեջ մտնող առանձին ինստիտուտների (պետբյուջե, տեղական բյուջե, վարկային սխտեմ և այլն) գործառնական ֆինպլանների միջոցով: Սակայն այդ չի վերացնում ֆինպլանի վերաբաշխող դերը: Որինակ, սահմանելով կապիտալ ներդրումների ծավալը, վորոշելով դրանց ծածկման աղբյուրները, համաձայնեցնելով իրար հետ այն առանձին պլանները, վորոնց հաշվին դրանք ֆինանսավորվում են, ֆինպլանը դրանով իսկ ակտիվորեն ներգործում է միջոցների վերաբաշխման վրա:

Վորպես ֆինանսների սինթետիկ պլանավորման մի մեթոդ և «չվերացնելով առանձին գործառնական ֆինանսական պլանները (պետբյուջե, արդյունաբերության ֆինպլան, վարկային պլաններ և այլն), միասնական ֆինպլանը պետք է հեշտացնի և բարելավի դրանց փոխադարձ համաձայնեցման գործը և ապահովի միջոցների ամենից նպատակահարար և խնայողական ոգտագործումը ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, կառավարչության և յերկրի պաշտպանության կարիքների համար» (ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմբորհի 1930 թ. մայիսի 25-ի վորոշումից):

III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Այս հատվածում մենք հիմնական դժերով և շատ համառոտակի տալիս ենք ֆինանսական քաղաքականության զարգացման հտապներին վերլուծությունը: Տեղի սղության պատճառով մենք այստեղ վերալուծում ենք ֆինանսական քաղաքականության միայն հիմնական, հանգուցային հարցերը, մի կողմ թողնելով մի շարք մոմենտները: Մյուս կողից, քանի վոր համապատասխան հատվածներում մենք արդեն լուսարանել ենք առանձին ֆինանսական ինստիտուտների (պետբյուջեյի, հարկերի, փոխառությունների, խնայողական գործի և այլն) զարգացման ընթացքը, ուստի այդ վերջինները չեն մտել այս տեսության մեջ:

Ամբողջ հատվածը բաժանել ենք 4 թեմայի՝ ա) ֆինանսները Հոկտեմբերյան հեղափոխության և ռազմական կոմունիզմի շրջանում, բ) Նեպը և ֆինանսները վերականգնման շրջանում, գ) ֆինանսներն առաջին հնգամյակում և դ) ֆինանսները յերկրորդ հնգամյակում:

Ա. ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային պետության ֆինանսական քաղաքականությունը ընդհանուր տնտեսական քաղաքականության մի որդանական մասն է կազմում: Խորհրդային ֆինանսները, վորոնք սոցիալիստական շինարարության ծավալման գործում կարեւորագույն միջոցն էյին, Հոկտեմբերյան հեղափոխության հենց առաջին որերից պետք է ծառայեյին պրոլետարական պետության քաղաքականության խնդրիներին:

Վորպեսզի պարզած լինենք, թե Հոկտեմբերյան հեղափոխության շրջանի ֆինանսների վիճակը և թե այն «ժառանգությունը», վոր ստացավ խորհրդային պետությունը ցարական ու ժամանակավոր կառավարություններից, անհրաժեշտ է համառոտակի լուսարանել, թե ինչ էր ֆինանսների վիճակը Հոկտեմբերյան հեղափոխության նախորդակին:

Մինչև իմպերիալիստական պատերազմը ցարական Ռուսաստանի ֆինանսական դրությունն արտաքուստ «նպաստավոր» էր թվում: 1914 թ. պետական բյուջեն փակվեց յեկամուտների 514,2 միլ. ռ. գերազանցումով ծախսերի հանդեպ: Պետբանկի վոսկու պաշարը 1914 թ. հասավ 669 միլ. ռ., վորը լրիվ ապահովում էր շրջանառության մեջ մտցված վարկատուները (թղթադրամը):

Վերջապես, վերջին 15 տարվա ընթացքում 1898—1913 թ. թ. Ռուսաստանին հաջողվել էր ակտիվ աուտրական հաշվեկշիռ ստեղծել 4,1 միլիարդ. ռուբ. գումարով: Սակայն այդ «կայունությունը» իրականության չեր համապատասխանում, քանի վոր, ըստ եյության, փաստորեն ցարական Ռուսաստանի ֆինանսական դրությունը շատ ծանր էր: Այսպես կոչված «գանձարանի աղատ կանխիկ դրամը» նրանով էր ձեռք բերվում, վոր յեկամուտներն շատ ավելի քիչ էյին ցույց տրվում տարվա սկզբում, սաստիկ ուժեղացվում էր անուղղակի հարկերի ծանրությունը, իսկ այնուհետև տարվա ընթացքում գերակատարելով յեկամուտները՝ աշխատում էյին նպաստավոր տպավորություն ստեղծել ոտարյերկրյա վարկատուների շրջանում Ռուսաստանի ֆինանսական առողջ դրության մասին:

Բյուջեյի զգալի մասը կազմված էր անուղղակի հարկերից, վորոնք իրենց ամբողջ ծանրութեամբ ընկնում էին աշխատավոր մասսաների վրա: Բնորոշն այն է, վոր պետբյուջեյի յեկամուտները 25 տոկոսը կազմում էին ողու մենաշնորհի գումարները: Այսպիսով, «գանձարանի բարորությունը կապված էր ժողովրդի դժբախտութեան և հարեցողութեան հետ» իսկ բյուջեն ինքն, ինչպես ասում են, «հարբած բնույթ էր կրում»: Պետբյուջեյի 2/3-ից ավելին ծախսվում իր պարտքերը վճարելու և ցարական կառավարութեան բյուրոկրատական մեքենան պահպանելու և սպառազինութեան վրա: Ինչ վերաբերում է վալյուտայի «կայունութեանը», ապա այստեղ էլ դրութեանն աննպաստ էր: Վարկատոմսերի «կայունութեանը» շատ թանգ էր նստում ժողովրդական տնտեսութեան վրա ու ձեռք էր բերվում պետական պարտքերի աճման հաշվին: 1913 թ. Ռուսաստանի պետական պարտքը հավասար էր 9 միլիարդ. ռուբլու: Արտաքին փոխառութեանների համար միայն արտասահմանի պարտատերերին ավելի տոկոս էր վճարվում, քան ակտիվ առևտրական հաշվեկշիռն էր տալիս, այն է՝ 1908—13 թ. թ. ընթացքում ակտիվ առևտրական հաշվեկշիռը կազմում էր 2,3 միլիարդ. ռ., մինչդեռ հաշվարկային հաշվեկշիռի պասսիվ սալդոն հավասար էր 3,6 միլիարդ. ռ.: Իմպերիալիստական պատերազմի ավելի ևս ուժեղացրեց ֆինանսական տնտեսութեան լարվածութեանը: Ռազմական ծախսերը ծածկվում էին նորանոր հարկերի, ներքին ու արտաքին փոխառութեանների և եմիսիայի միջոցով: Այս բոլորը, մանավանդ եմիսիան չէր կարող չանդրադառնալ ֆինանսների դրութեան վրա, և փետրվարյան հեղափոխութեան սկզբում ռուբլու կուրսը հավասար էր մինչպատերազմյան արժեքի 1/3-ին: Ժամանակավոր կառավարութեան տիրապետութեան շրջանում ամբողջ ժողովրդական տնտեսութեան ու դրա հետ միասին և ֆինանսների դրութեանն էլ ավելի յե վատթարանում, քանի վոր ժամանակավոր կառավարութեան քաղաքականութեանը ցարիզմի քաղաքականութեան անմիջական շարունակութեանն էր:

Այդ շրջանում առանձնապես ուժեղ թափով աճում էր եմիսիան, վորը 1917 թ. մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում 10 միլիարդ ռուբլուց հասավ 19,5 միլիարդ ռուբլու, իսկ պետական պարտքերն ավելանալով՝ հասավ 18 միլիարդ ռուբլու:

Այս բոլորը թույլ է տալիս նշել, վոր Ռուսաստանի ֆինանսները Հոկտեմբերյան հեղափոխութեան նախորդակին վոլորմիլի դրութեան մեջ էին գտնվում, և վոր Խորհրդային Իշխանութեանը ֆինանսների բնագավառում «ժառանգել էր» վալյուտային քաոս, կազմալուծված և դեֆիցիտային բյուջե, հսկայական պետական պարտք և արժեքավորված ռուբլի:

Խորհրդային իշխանութեան ֆինանսական ծրագիրն այսպես է արտահայտվել Կոմկուսի 6-րդ համագումարի բանաձևում. «Ֆինանսական փրկագումարի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է հետևյալ միջոցները ձեռք առնել. անմիջապես դադարեցնել թղթադրամ բաց թողնելը, հրաժարվել պետական արտաքին և ներքին պարտքերը վճարելուց, չխախտելով սակայն մանր բաժանորդների շահերը, վերակազմել ամբողջ հարկային սխառմը, գույքային և գույքի աճման հարկ, շքեղութեան առարկաների անուղղակի քարձր հարկեր սահմանելու միջոցով, բարեփոխել յեկամտային հարկը, և ինչպես կենտրոնում, նույնպես էլ տեղերում իրական վերահսկողութեան յենթարկել գույքերի յեկամտաբերութեան գնահատման գործը»:

Այնուհետև, ֆինանսական քաղաքականութեան բնագավառում պետք է նախ և առաջ նշել բանկերի ազգայնացման վերաբերյալ դեկրետը (1917 թ. դեկտ. 14-ի): Հաշվի առնելով Փարիզի Կոմունայի սխալը, Խորհրդային Իշխանութեանը պետք է անմիջապես ազգայնացնել բանկերը և դրանով իսկ սահմաններ համապատասխան վերահսկողութեան ու խախտել կապիտալիստական դասակարգերի տնտեսական հզորութեան վճռական հիմքերից մեկը: «Առանց խոշոր բանկերի, սոցիալիզմն անիրագործելի կլինի» և կապիտալիստական տնտեսութեան այդ ապարատը պետք էր «խլել կապիտալիստներից յենթարկվելուց, պետք է նրանց կտրել, անջատել, հատել կապիտալիստներին նրանց ազդեցութեան թելերի հետ միասին, պետք է այդ ապարատը յենթարկել պրոլետարական խորհուրդներին, պետք է դարձնել ավելի լայն, ավելի համապարփակ, ավելի համաժողովրդական» (Լենին):

Բանկերի ազգայնացումն այն հիմնական մոմենտներից մեկն էր, վորոնք ապահովում էին ամբողջ ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը: «Ռուսաստանը, բանկերն ազգայնացնելով ու ամբողջ հողն աշխատավոր մասսաների ձեռքը հանձնելով, թեկոխել է սոցիալիզմի իրագործման մի նոր ուղի» (Լենին):

Ֆերկորդ ակտը ֆինանսական քաղաքականութեան բնագավառում ցարական և ժամանակավոր կառավարութեանների կնքած արտաքին ու ներքին փոխառութեանները չեղյալ համարելն էր:

Մինչ հեղափոխութեան պարտքերի վերացումը Խորհրդային Իշխանութեան ընդունած խոշորագույն ակտերից մեկն էր բուրժուազիայի եքսպրոպրիացիայի ու նրա տնտեսական հսկողութեանը խախտելու ասպարիզում: Բացի այդ, հարկային քաղաքականութեան նպատակը նույնպես բուրժուազիայի տնտեսական դիրքերի թուլացումն ու պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումն էր: Այսպես, որինակ, տեղերին իրավունք տրվեց կոնտրիբուցիա գանձել, մտցվեց պրոդրեսիվ յեկամտային հարկ և աշխատապահակ և արտակարգ հեղափոխական հարկ տրվեց բնակչութեան ունևոր դասակարգերի վրա:

Այսպիսով, ուրեմն, ֆինանսների բնագավառում ստեղծագործական աշխատանքի առաջին իսկ ետապներում ստեղծվեցին ֆինանսական նոր հարաբերութեաններ, վորոնք կապված էին կառավարութեան առաջ դրված խնդիրներին իրագործման հետ պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման գործում:

Թե վորքան խոշոր նշանակութեան էր տրվում այն ժամանակ ֆինանսներին, կարելի յե տեսնել Լենինի հետևյալ խոսքերից, վոր նա ասել է ֆինբաժինների ներկայացուցիչների 1918 թ. մայիսի 18-ի համառուսական համագումարում: «Չպետք է մոռանալ, վոր մենք մեր յուրաքանչյուր արմատական ռեֆորմն անհաշտողութեան կմատենենք, յեթե հաշտողութեան չունենանք ֆինանսական քաղաքականութեան մեջ: Այդ վերջին խնդրից է կախված հասարակութեան սոցիալիստական վերակառուցման մեր ծրագրած հսկայական գործը»:

Ռազմական կոմունիզմի շրջանում ֆինանսների ասպարեզից դուրս են մղվում դրամական հարաբերութեանները, մտցվում են աշխատանքի վարձատրութեան բնական (նատուրալ) ձևեր և բնավճարացման (նատուրալի-

գաղափար) են յենթարկվում գյուղի և քաղաքի տնտեսական կապերը: Դրամի գնողական ուժի հետագա անկման պայմաններում դրամական հարկերը չեղյալ կարող ելական դեր խաղալ, հետևապես, հարկման ավելի եֆֆեկտավոր ձև պետք է համարվեն ընական հարկերը: Այսպես, Համառուտ. Կենտրոնական 1921 թ. փետրվարի 3-ի վորոշմամբ դադարեցվում է ինչպես պետական, նույնպես և տեղական դրամական հարկերի գանձումը: Հետագայում, ընդհանուր տնտեսական քաղաքականություն կապակցությամբ, անհրաժեշտ եր անցնել պարենմասնատրաման ու պարենհարկին, վորոնք խոշոր դեր խաղացին թե պետությունը նյութական բնուրաններով ապահովելու և թե պրոլետարիատի դիկտատուրան ամրացնելու գործում: Պարենհարկը լինելով կուլակություն եքսպրոպրիացիայի մեթոդներից մեկը, միաժամանակ գյուղի միջակ մասսայի կողմից միայն փոխառվություն եր պրոլետարիատին: Բավական է վերհիշել Լենինի այս առթիվ ասած խոսքերը, վորպեսզի պարզ լինի հարցի ելությունը. «մենք ասում ենք, յեթե յերկիրը քայքայված է, յեթե վառելիք չկա և գործարանները կանգնած են, ապա գյուղացին պետք է փոխ հաց տա: Այն թղթադրամը, վոր քեզ տալիս են հացի փոխարեն, ապացույց է, վոր դու պետությունը փոխ ես տվել»:

Հարկման և վերաբաշխման ընական մեթոդների կողքին գոյություն ունեն ժողովրդական յեկամտի վերաբաշխման մի այլ ֆինանսական մեթոդ-եմիսիան, քանի վոր կիսալեզալ ու անլեզալ շուկաներում դգալի ապրանքային բնուրաններ կային, ուստի եմիսիայի միջոցով այդ բնուրանները ձեռք ելին բերվում բանակին ու քաղաքի բանվորներին մատակարարելու համար: Այսպես, 1918—21 թ. թ. այդ յեղանակով ձեռք բերվեց 1,1 միլիարդ ուրբուտ նյութական բնուրաններ (նախապատերազմյան ուրբուտներով), մինչդեռ պարենմասնատրաման միջոցով ձեռք բերվեց 850 միլ. ու: Յեվ իրավացի յե ընկ. Սոկոլնիկովը, յերբ գրում ե, «փառք մեր տպագրական դադգյահին... Պրոլետարական մեծ հեղափոխություն արխիվում, թնդանութների, հրացանների և գնդացիների կողքին պատվավոր տեղում դրված կլինի ֆինոդկոմատի այն գնդացրի դադգյահը, վորը գնդակոծել է բուրժուական կարգերը՝ նրանց դրամական սխտեմի տեսանկյունով, բուրժուական բեթիմի շարժման և շրջանառության որենքները դարձնելով այդ բեթիմը վոչնչացնելու և հեղափոխությունը ֆինանսավորելու մի միջոց»:

Բ. ՆեՊ-Ը Յեվ ԹինԱնՍնԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ռազմական կոմունիզմի պայմաններում հանրապետության տնտեսական ու քաղաքական դրությունը հնարավորություն չտվին ձեռնարկելու ֆինանսների առողջացման գործին, հետևապես, նոր տնտեսական քաղաքականություն անցնելուց հետո, պետք եր վերակառուցել ամբողջ ֆինանսական սխտեմը: Նեպի առաջին տարիների ընթացքում հիմնական ֆինանսական քաղաքականություն յալատակը՝ կայուն վալյուտա, անդեֆիցիտ բյուջե ու ֆինանսական ինստիտուտներ ստեղծելն եր: Սկսած 1921 թ. կեսերից, ֆինանսական շինարարության հարցերը կուսակցության և կառավարության տնտեսական քաղաքականության մեջ կենտրոնական տեղերից մեկն են գըրավում և արտացոլվում են կուսակցական և կառավարական մի շարք վորոշումների մեջ: Կոմկուտի 11-րդ համագումարի բանաձևում յերկու հիմնա-

կան խնդիրներ են առաջադրվում ֆինանսների բնագավառում ուղղու կայունացում ու բյուջետային դեֆիցիտի վերացումը. «դրամանիշների արժեքագրկմանը վերջ տալ և դները կայունացնել կարելի յե միմիայն պետական ու ամբողջ ֆինանսական սխտեմն ամրացնելու, մասնավորապես ռեալ բյուջե ստեղծելու, բյուջեն անդեֆիցիտ փակելու և ապրանքաշրջանառությունը յերկրում ուժեղացնելու միջոցով»:

Ահա այս խնդիրները միայն այն ժամանակ կարելի յեր լուծել, յեթե ամբողջ ժողովրդական տնտեսությունը փոխադրվի ապրանքադրամական տնտեսության ռեսերի վրա և պետբյուջեն թեթևացվեր՝ տնտեսաշվարկ մըտցնելով պետական ձեռնարկություններում և պետական ապարատը կըճատելով: Այնուհետև, ուղղու կայունացումը հնարավոր եր իրագործել բյուջեի առողջացմանը զուգընթաց: Առաջին ձեռնարկումը դրամական շրջանառություն գծով «գենոմինացիան» եր (հաշիվը հեշտացնելու նպատակով խորհրդային դրամանիշների վերանվանում), վոր կատարվեց յերկու անգամ՝ 1922 և 1923 թ. թ.: Սակայն դրամական ռեֆորմի սկիզբը դրվեց կառավարության 1922 թ. հոկտեմբերի 11-ի դեկրետով, վորն իրավունք եր վերապահում Պետբանկին, 25 ադկուս վոսկով կամ ոտարյերկրյա վալյուտայով, իսկ միացած դումարը կարճատե մուրհակներով ու հեշտ իրացվող ապրանքներով ապահովված բանկային տոմսեր բաց թողնել: Կայուն բյուջեի համար միվող պայքարը պահանջում եր խիստ կըճատել բոլոր ժողովրդատների նախահաշիվներն ու հանել պետական բյուջեից մի շարք ձեռնարկություններ: Այնուհետև, չերվոնցի շրջանառությունը հնարավորություն ստեղծեց բոլոր բյուջետային հաշիվները չերվոնցային ուղղու վերածել և միաժամանակ հարկային մեթոդները ձեւավորել: 1922 թ. ուղղակի հարկերի հետ միասին, մտցվեցին նաև անուղղակի հարկեր (ակցիզ): Իսկ առևտրի ծավալման հետեւանքով հրամայական անհրաժեշտություն եր դառնում բնահարկերի փոխարինումը դրամահարկերով: 1923 թ. պարենհարկը փոխարինվեց գյուղհարկով, վորը միացնում եր իր մեջ գյուղացիության մինչև այդ վճարած հարկերը: Քաղաքում հիմնական հարկը՝ յեկամտային—գույքային հարկն եր, վորը վերջնականապես ձեւակերպվեց վորպես յեկամտային հարկ 1924 թ.: Այս բոլոր ռեֆորմներից հետո հարկերի գերը բյուջեի մեջ ավելի ու ավելի յեր ուժեղանում, և դրանով ել հեշտանում եր բյուջեի դեֆիցիտայնությունը վերացնելու գործը. դրան նպաստում ելին նաև պետական գույքերի և ձեռնարկությունների յեկամտաները: Բացի այդ, կիրառվեցին մի շարք ձեռնարկումներ, վորոնք նույնպես պետք է նպաստեին կայուն վալյուտա ստեղծելուն, ինչպես որինակ փախառությունների գարգացումը, վարչական ու տնտեսական գերատեսչությունների ծախսերի կըրճատումն ու պետբանկի միջոցով կատարվող վարկային գործառությունները: 1924 թ. հունվարին XIII Կուսկոնֆերանսը, ամփոփելով տնտեսական շինարարության արդյունքները, ընդգծեց, վոր «մեր տնտեսական քաղաքականություն խնդիրների իրագործման համար չափազանց կարևոր նվաճում է համարում ՌԲԿ XIII կոնֆերանսը կայուն վալյուտա՝ չերվոնցի մտցնելն ու յերկրի հիմնական վալյուտա դարձնելը: Կուսակցության հետագա քաղաքականության նպատակը պետք է լինի չերվոնցի կայունության պաշտպանումն ու դրամական ռեֆորմի ավարտումը»: Դրամական ռեֆորմ

ազարտվեց 1924 թ. սկզբին, իսկ որենսդրական ձեւակերպումը հասցավ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1924 թ. փետրվարի 5-ի՝ դանձարանային տոմսեր բաց թողնելու, 1924 թ. փետրվարի 29-ի՝ արժաթի և պղնձե դրամ բաց թողնելու և 1924 թ. մարտի 7-ի՝ խորհրդային դրամանիշեր բաց թողնելու վերաբերյալ դեկրետներով:

Այսպիսով, ուրեմն, 1924 թ. հիմնականում ավարտվեց մեր ֆինանսա-
կան սխտեմի կառուցումը: Դրամական ռեֆորմն ավարտվեց լիակատար հա-
ջողությամբ, վերպես հետեւանք նեպի շրջանում տնտեսական շինարարու-
թյան բնագավառում ձեռք բերված խոշոր նվաճումների ու հաջողություն-
ների:

Կոմկուսի XIII համագումարը, վորը կայացավ 1924 թ. մայիսին, արձանագրեց, «վոր կոնսակցության Կենտկոմը ժամանակին մոցրեց լայն մոտածված դրամական ռեֆորմը, վորը հսկայական նշանակութիւն ունի պրոլետարիատի ամբողջ սոցիալիստական տնտեսական շինարարութիւյան համար: Այդ խոշորագոյն ռեֆորմի անշեղ կերպռումը հիմք կձառայի ԽՍՀՄ ամբողջ տնտեսական կյանքն առողջացնելու համար»:

Դրամական շրջանառության ձեւին անցնելու պահից, ֆինանսական սխատեմը մի շարք փոփոխություններ յենթարկվեց և պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման ու սոցիալիստական առաջնադացումն ապահովելու գործին եր ծառայում:

Առանձնապես մեծ ուղադրություն դարձվեց գյուղի հարկման և մասնավորապես գյուղհարկի հարցերի վրա, վորը պետք է հիմնական լծակներից մեկը լիներ կուլակուլթյան դեմ պայքարելու, մերձեցումը միջակի հետամրացնելու, գյուղական չքավորությունը կազմակերպելու և գյուղատնտեսական արտադրությունը կարգավորելու գործում: XIV և XV կուսկոնֆերանսների միջակա շրջանում եյական կառուցվածքային փոփոխություններ մտցվեցին գյուղհարկի սխառեմի մեջ: Անհրաժեշտ եր «բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանել գյուղի չքավոր ու միջակ խավերին և, նայած պայմաններին, տարբեր ձեւով սահմանափակել գյուղատնտեսական բուրժուազիայի շահագործական ձգտումները» (Համ. Կ (բ) Կ XV համագումարի վորոշումներից): Այստեղ հատկապես պետք է նշել, վոր գյուղացիության վերաբերմամբ կիրառվող հարկային քաղաքականությունը շարունակ «զնդակոծում» է՝ խիստ տրոցկիստները: Յեւնեւով այն կոնցեպցիայից, թե «անհնար ե» աշխատանք ըանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ, տրոցկիստները ձգտում եյին հարկային ճնշումը գյուղհարկի բնագավառում ուղղել վոշ միայն դեպի կուլակը, այլ և դեպի միջակը (քանի վոր միջակներին նրանք կուլակներ եյին համարում) և դրանով իսկ նրանք թուլացնում եյին պրոլետարիատի և գյուղացիական չքավոր ու միջակ մասսաների դաշինքը կուլակի դեմ:

Ինչ վերաբերում է աջոպորտունիստներին, ապա նրանք կոծկում էին կուլակային վտանգը գլուղում, առավելագույն չափերով պաշտպանում էին կուլակին, պահանջելով նրա համար հարկի ցածր գրույքներ և ապացուցում էին, Վոր կուլակը պետք է խաղաղ կերպով «ներաճի սոցիալիզմի մեջ»:

Իր ժամանակին կուսակցութիւնը վճռական հակահարկած հասցրեց

այս բոլոր «թեորիաներին» և մեր տնտեսության զարգացման հետագա
հաապները զործնաէանում ապացուցեցին կուսակցության ղեխավոր ԳԺԻ
ճշտությունը գյուղի հարկման աապարհչում:

Վերականգնման շրջանում լաճն չափով զարգացավ նաև պետական վարկը (տե՛ս պետվարկի վերաբերյալ հատվածը), և այդ ապացուցեց, վոր խորհրդային տնտեսությունն առանց վորևե գրսի ոգնության իր ներքին կուտակումներով կարող է զարգացնել իր տնտեսական շինարարությունը:

Վերականգնման շրջանի վերջում ԽՍՀՄ ֆինանսական տնտեսությունը վոչ միայն ամրապացավ ու լայնացավ, այլ և դարձավ մի առանցք, վորի շուրջըն ելին կենտրոնացել բոլոր տնտեսական պլանները: Այս գործում առանձնապես խոշոր եր պետական բյուջեյի դերը: 1927/28 թ. պետական բյուջեն հասնում ե 6,6 միլիարդ ռուբ., 1924/25 թ. 2,9 միլիարդ ռուբլու դիմաց և ընդգրկում ու վերաբաշխում ե ժողովրդական յեկամուտի 30%-ից ավելին:

Գ. ՖԻՆԱՆՍՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Տնտեսութեան սոցիալիստական ձեւերի հաղթանակը, շահագործող դասակարգերի վերացումը, հիմնականում ժողովրդական յեկամտի սնունդն ու այդ հիմքի վրա աշխատավոր մասսաների բարեկեցութեան բարձրացումը հնարավորութիւնն ստեղծեցին սոցիալիստական կուտակումն իրագործելու աշխպիսի մասշտաբով, վորն ապահովեց առաջին հնգամյակի հիմնական խնդիրներն, այն ե՛կ յերկրի ինդուստրացումը, գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումն ու յերկրի պաշտպանութեան ամրացումը:

Պլանաավորման վերականգնողական խոշոր աճուսմն առաջին հնգամյակում չեղարկող չփոփոխելի ֆինանսական իր իսկ՝ պլանաավորման կառուցվածքը։ Անհրաժեշտ եր ֆինանսական սխառութի (բյուջե, վարկ, խնայողական դրամարկղոններ և այլն) գործառնական պլանները շաղկապել ժողովրդական տնտեսուսթյան առանձին ճյուղերի պլաններին, ինչպես նաև սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների պլաններին հետ, կառուցել մեկ միասնական ֆինանսական պլան, վորն որգանապէս բղիներ ժողովրդական տնտեսուսթյան պլանին ընդհանուր խնդիրներին։

Առաջին հնդամյակի ֆինանսական պլանը կազմվելու պրոցեսում ցայտուն կերպով արտահայտվեցին ոպորտունիստական պատկերացումները ֆինանսների դերի ու ֆինանսական պլանավորման խնդիրների մասին: Հիմնականում այդ բոլոր «տնտեսագետները» ճգնում էին ապացուցել, Վոր հնդամյակում նախատեսված ֆինանսական ռեսուրսները «չափազանցված» են, «վոչ-ռեալ», Վոր «այդպիսի ռեալ կուտակում հինգ տարվա ընթացքում յերկերը չի կարող տալ» (Վալյուտեն, հնդամյա պլանի քննադատություն առթիվ): Նույն կարծիքն ուներ նաև պրոֆ. Նիկիտսկին:

Ինչպես տեսնում ենք, այդ «Թեոթիաների» մեջ յերևան ե գայիս աջ-
ոպորտունիստական կոնցեսսիան այն մասին, թե մեր առաջին հնգամյակը
ոեալ չի, և անհրաժեշտ ե յերկրի ինդուստրացումը «մարդ» տեմպերով իրա-
գործել:

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջո-

դուրսընկերներն ու պլանային սկզբունքի կիրառման այդ տնտեսութեան բա-
լար ճյուղերում հնարավորութիւն տւին և անհրաժեշտ դարձրին ֆինանսա-
կան ռեֆորմն առաջին հնգամյակում:

Ինչպես մենք արդեն նշեցինք, առաջին ու խոշոր նվաճումը՝ միասնա-
կան ֆինպլան կազմելն էր: Այստեղ մենք կանգ չենք առնի միասնական
ֆինպլանի վրա, քանի վոր այս դասընթացում հատուկ հատված է նվիր-
ված այդ նյութին, սակայն կնշենք, վոր մեր եկոնոմիկայի պայմաններում
ժողովրդական տնտեսութեան ու ֆինանսական պլանավորման սերտ կապն
ամենից լիակատար կերպով միասնական ֆինպլանի մեջ է արտահայտ-
վում:

Մյուս հիմնական ռեֆորմը ֆինանսների բնագավառում պետք է հա-
մարել հարկային ռեֆորմը: Վերականգնման շրջանի հարկային սխառմը չեր
կարող բավարարել վերակառուցման շրջանի պահանջներին: Անհրաժեշտ էր
հարկման նոր մեթոդներ գտնել ինչպես հանրայնացված տնտեսութեան,
նույնպես և մասնավոր սեկտորի համար: Յեւ ահա ամբողջ առաջին հնգամ-
յակի ընթացքում հարկային քաղաքականութեան բնագավառում մի շարք
ռեկոնստրուկտիվ մոմէնտներ մտցվեցին, վորից հետո ԽՍՀՄ Կենտրոնական
և Ժողովրդական 1930 թ. սեպտեմբ. 21-ի վորոշմամբ հարկային սխառմն
արմատական վերակազմութեան յենթարկվեց: Այստեղ մենք դարձյալ այդ
հարցերի վրա կանգ չենք առնում, քանի վոր այդ մասին արդեն խոսել ենք
հարկային ռեֆորմին նվիրած հատվածում:

Վերջապես, ֆինանսական սխառմի խոշոր ռեֆորմը—վարկային ռեֆոր-
մը պետք է համարել:

Վերակառուցման շրջանի պայմաններում, բնականաբար վերականգ-
նման շրջանի վարկային աշխատանքի մեթոդներն ու ձևերը կիրառվել չէին
կարող:

Մինչև այդ յետք առևտրական վարկավորումը նոր պայմաններում
շատ էր դժվարացնում վարկի պլանավորումը, քանի վոր մուրհակային շր-
ջանառութիւնը խեղաթյուրում էր վարկավորման ռեալ բովանդակութիւն-
ը: Կարճատե վարկավորմամբ զբաղվող վարկային հիմնարկների բազմու-
թիւնն ավելի էր բարդացնում վարկային պլանավորման գործը: Վերջա-
պես, մուրհակների բաց թողնումն ու շրջանառութիւնը կապված չէին և չե-
ին ել կարող կապված լինել ապրանքների արտադրութեան և շրջանառու-
թեան նյութական պրոցեսների հետ, մանավանդ վոր հաճախ մուրհակային
շրջանառութեան մեջ էին մտցվում զանազան տեսակի ֆիկտիվ մուրհակներ
(հակընդդէմ, կանխավճարային և այլն):

Վորովհետև այս դասընթացում հատուկ հատված չկա վարկի և վար-
կային հիմնարկների մասին, քանի վոր այդ մոտեմբ «ԽՍՀՄ զբառն ու վար-
կը» դասընթացի մեջ, ուստի այստեղ մենք ստիպված ենք շատ համառո-
տակի կանգ առնելու վարկային ռեֆորմի և վարկային հիմնարկների
վրա:

Վարկային ռեֆորմի հիմնական խնդիրն այն էր, վորպեսզի վարկավո-
րումն անմիջորէն կապակցվի արտադրութեան և շրջանառութեան նյութական
պրոցեսների հետ, վերակազմվի վարկային աշխատանքը հաշվի առնելով ժո-
ղովրդական տնտեսութեան իրական պահանջները, վարկավորումը յենթար-

կի պլանին և վերջապես, վարկի օգտագործումը դարձնի տնտեսական պլան-
ների վորակական ու քանակական առաջադրանքների կատարման վրա
հսկելու և տնտեսական հաշվարկն ամբացնելու կարևորագույն լծակներից
մեկը:

Վարկային ռեֆորմը կիրառվեց ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողովրդական
1930 թ. հունվարի 31-ի վորոշման հիման վրա: Այդ ռեֆորմի համաձայն
վերացվեցին առևտրական վարկն ու մուրհակային շրջանառութիւնը, և
սահմանվեց անմիջական բանկային վարկավորման սխառմը, ամբողջ կար-
ճատե վարկավորումը կենտրոնացվեց Պետբանկում: Անմիջական վարկավո-
րումը պետք է յուրաքանչյուր ձեռնարկութեան դրդեր անցնելու տնտեսա-
կան հաշվարկի, այլ և ուժեղացներ ֆինանսական վարկային կարգապահու-
թիւնը: Սակայն վարկային ռեֆորմը գործնականում կիրառելիս տեղի ու-
նեցան մի շարք խեղաթյուրումներ և նույնիսկ վնասարարութեան դեպ-
քեր:

Վարկային ռեֆորմի հիմնական խեղաթյուրում պետք է համարել՝ ան-
խտի բոլորի վարկավորումը «պլանի դիմաց», յերբ տնտեսական կազմա-
կերպութիւնները վարկ էին ստանում անկախ պլանի կատարման ընթաց-
քից: Դրա հետեանքը յեղավ վարկավորման ավտոմատիզմը, այն է Պետբան-
կը հաշիվներ վճարում էր մեքենայաբար, հիմնվելով ներկայացված պլան-
ների վրա: Ստեղծվեց մի դրութիւն, յերբ վաճառողը չեր կատարում պայ-
մանագրերը, իսկ գնորդը հնարավորութիւն չուներ կարգավորելու իր հաշ-
վին կատարված ծախսերը, քանի վոր Պետբանկն առանց իր կլիենտի գի-
տութեան մեքենայաբար վճարում էր ներկայացված բոլոր հաշիվները: Այս
բոլորի հետեանքով խախտվում էին տնտեսական հաշվարկի հիմունքները,
կլիենտուրայի ակտիվ և պասիվ հաշիվների վերացումն ու դրանց փոխա-
րինումը միասնական կոնտոկորէնտով փաստորէն միանգամայն դիմադուրկ
էր դարձնում տնտեսական օրգանների միջոցները:

Այս բոլոր խեղաթյուրումները վերացնելու նպատակով ԽՍՀՄ Ժողով-
րդական 1931 թ. հունվարի 14-ի և մարտի 20-ի վորոշումները համաձայն
վարկավորումը կապում էր պլանի կատարման ընթացքի հետ: Այնուհետև,
վարկավորումն ինքը պայմանավորվում էր պայմանագրերով, վորոնք վորո-
շում էին բանկային վարկավորման չափը: Վաճառողների հաշիվները կարող
էին վճարվել միայն հատկացված վարկի սահմաններում ու գնորդի համա-
ձայնութեամբ (հաշվի ակցեպ), կամ նրա հանձնարարութեամբ (ակքեպ-
տիվ):

Վարկային ռեֆորմի խեղաթյուրումները վերացնելու գործում խոշոր
նշանակութիւն ունեցան նաև մի շարք այլ օրենսդրական ակտեր և հատ-
կապես Աշխ. ու Պաշ. Խորհր. 1931 թ. հուլիսի 23-ի տնտեսական օրգանների
կողմից սեփական շրջանառու միջոցներ կազմելու վերաբերյալ վորոշումը:
Այդ վորոշման համաձայն բոլոր տնտեսական մարմինները պետք է իրենց
սեփական շրջանառու միջոցներն ունենային, իսկ բանկային ռեսուրսների
հաշիվն բավարարում էին միայն դրանց սեզոնային և ժամանակավոր
զրամական կարիքները: Յեթե մինչև այդ Պետբանկը ծածկում էր տնտեսա-
կան օրգանի ամբողջ զրամարկային ձեղքվածքը, ապա այժմ բանկը բա-
վարարում էր միայն այն սեզոնային կարիքները, վորոնք վերաբարարու-
թեան պրոցեսում ապահովում էին բանկային ռեսուրսների վերադարձը:

Վարկային ռեֆորմը կիրառելու և կարճատև վարկավորման ամբողջ գործը Պետքանկում կենտրոնացնելու հետ միասին միջոցների ճիշտ ոգտագործման վրա հսկելու և շինարարութեան մեջ ու կապիտալ ներդրումներում ընդհանրապես տնտեսական հաշվարկ մտցնելու նպատակով ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողովրդային 1932 թ. մայիսի 5-ի վորոշմամբ, ֆինտոլկոմատի սխառնում կազմակերպվեցին հատուկ բանկեր (պրոմբանկ, գյուղբանկ, համկոոպբանկ, կենտկոմբանկ և տեղական կոմունալ բանկեր) Հատուկ բանկերի կազմակերպումը թույլ տրվեց շահագործման ծախսերը վատել կապիտալ ծախսերից և դրանով իսկ ապահովել իրական վերահսկողութունը կապիտալ շինարարութեան ընթացքի վերաբերմամբ: Կանգ չառնելով հատուկ բանկերի իրավունքների ու պարտականութունների վրա, այստեղ նշենք միայն, զոր վարկի ու վարկային հիմնարկների ռեֆորմը վերակառուցման շրջանում կիրառվեց միջոցները «մեծագույն ու մեծագույն խնայողութեամբ» (Լենին) ծախսելու և տնտեսական հաշվարկն ու ուղղով կոնտրոլն ամրացնելու խնդրի համաձայն:

Վերը նշված հիմնական ռեֆորմների լույսի տակ հետաքրքրական է այժմ ընդհանուր գծերով կանգ առնել առաջին հնգամյակի ֆինանսական պլանի կատարման վրա:

Հինգ տարվա ընթացքում միասնական ֆինպլանով նախագծված է 91,6 միլիարդ ռուբ. յեկամուտ, իսկ կատարված է $4\frac{1}{4}$ տարվա ընթացքում 120,1 միլիարդ ռուբլի: Այս գումարից 89,9 միլիարդ ռուբ., կամ 75 տոկոսը կազմում են հանրայնացված տնտեսութեան միջոցները, 21,5 միլիարդ ռուբ. կամ 18 տոկոսը բնակչութեան միջոցները, և յեթե առաջին ծախսերը գերակատարվել են 19 միլիարդ ռ., ապա յերկրորդ ծախսերը գերակատարվել են միայն 4,2 միլիարդ ռ.: Այլ խոսքով, ամբողջ ֆինպլանի գերակատարումը հիմնականում կազմում էր հանրայնացված տնտեսութեան կուտակումների աճումը: Բնակչութեան միջոցների մեջ բարձրացավ կամավոր կանալների և հատկապես փոխառութունների տեսակարար կշիռը, այն է՝ հնգամյակում նախատեսված 4,3 միլիարդ ռուբլու փոխարեն փաստորեն ստացվեց 6 միլիարդ ռուբլի: Միասնական ֆինպլանի գերակշռող մասը գործադրվել է արտադրողական նպատակներով տնտեսական և կուլտուր-կենցաղային շինարարութեան վրա: Ժողովրդական տնտեսութեան ֆինանսավորման համար հնգամյակում նախատեսված 56,8 միլիարդ ռուբլու փոխարեն ծախսված է 80,3 միլիարդ ռուբ., կամ 23,5 միլիարդ ավելի, իսկ սոց-կուլտուրական ձեռնարկումների վրա՝ 23,9 միլիարդ ռուբլի, նախատեսված 21,4 միլիարդ ռ. դիմաց: Ընդհանուր առմամբ, այս յերկու հատվածները կազմել են ֆինպլանի բոլոր ծախսերի 86,8 տոկոսը, մինչդեռ կառավարչական և յերկրի պաշտպանութեան ծախսերը կազմել են միայն $7\frac{1}{2}$ տոկոս: Սոց-կուլտուրական ծախսերի ամենից բարձր աճում մենք ունենք ազգային հանրապետութուններում, վորոնք արագորեն վերացնում են ցարիզմից ժառանգած իրենց տնտեսական ու կուլտուրական հետամնացութունը և ձեռն ազգային բովանդակութեամբ պրոլետարական ազգային կուլտուրա յեն կառուցում: Այսպես, յեթե սոց-կուլտուրական ծախսերը տեղական բյուջեներով ամբողջ ԽՍՀՄ-ում աճում են 3,4 անգամ (1932 թիվը 27/28 թ. հանդեպ), ապա Ուզբեկստանում՝ 6,5 անգամ, Թյուրքմենստանում՝ 7,5 անգամ, Տաջիկստանում 3,8 անգամ, ԱՍՖՍՀ-ում՝ 4 անգամ և այլն, Այս թվերը յենինյան ազգային քաղաքականութեան կիրառման ցայտուն պատկերն են տալիս:

Առաջին հնգամյակի ֆինպլանի գերակատարման հաջողութունները մի

ավելորդ անգամ ապացուցեցին ամբողջ հնգամյա պլանի ռեալ ընույթը և դրանով կսկ տապալեցին հնգամյակով նախատեսված ֆինանսական ռեսուրսների «ծանրութեան» և անիրագործելիութեան վերաբերյալ բոլոր «թեթությունները»:

Դ. ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսութեան դարգացման յերկրորդ հնգամյա պլանը կապիտալիստական տարերի ու ընդհանրապես դասակարգերի վերացման և յերկրի ամբողջ աշխատավոր բնակչութունը անդասակարգ սոցիալիստական հասարակութեան գերակից ու ակտիվ կառուցողներ դարձնելու մի պլան է, ամբողջ ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցման և բանվորների ու գյուղացիական մասսաների կենսական մակարդակն արմատապես բարձրացնելու պլան: Համաշխարհային պատմական նշանակութուն ունեցող այս խնդիրները կարելի յե լուծել միմիայն պրոլետարիատի դիկտատուրայի հետագա ամրացման, յերկրի հետագա ինդուստրացման և գյուղատնտեսութեան կոլեկտիվացումը լիովին ավարտելու ճանապարհով:

Ընկ. Ստալինը 1933 թ. Համկոմկոմի հունվարյան պլենումում իր հաշվետու զեկուցման մեջ հետևյալ հստակ ու վորոշակի ցուցումներն է տվել դրամական տնտեսութեան հարցերի առթիվ. «Մեզ առում են, թե չի կարելի առևտուր ծավալել, նույնիսկ յեթե այդ խորհրդային առևտուր է, առանց առողջ դրամական տնտեսութեան և առողջ վալյուտայի, թե նախ պետք է բուժել դրամական տնտեսութունն ու մեր խորհրդային վալյուտան, վորն իբրև թե վոչ մի արժեք չունի: Այսպես են մեզ ասում կապիտալիստական յերկրների տնտեսագետները... Ինչպես կարելի յե պնդել, վոր մեր խորհրդային վալյուտան վոչ մի արժեք չունի: Միթե փաստ չի, վոր մեր վալյուտայով մենք կառուցել ենք Մագնիտոստրոյը, Դնեպրոստրոյը, Կուզնեցկստրոյը, Ստալինգրադի և Խարկովի տրակտորային գործարանները, Գորկովի և Մոսկվայի ավտոմեքենաների գործարանը, հարյուր հազարավոր կոլտնտեսություններ և հազարավոր խորհրտնտեսություններ...

Ինչով է ապահովվում խորհրդային վալյուտայի կայունութունը... Իհարկե, վոչ միայն վոսկու պաշարով: Խորհրդային վալյուտայի կայունութունը նախ և առաջ ապահովում է պետութեան ձեռքում յեղած ապրանքային մասսաների հսկայական քանակութեամբ, վորն ապրանքաշրջանառութեան մեջ է մտցվում կալուն գներով: Տնտեսագետներից վիճրը կարող է ժխտել, վոր այս ապահովումը, վորը միայն ԽՍՀՄ-ում գոյութուն ունի, վալյուտայի կայնութեան ավելի ռեալ ապահովում է, քան վորևե վոսկե պաշար: Կհասկանանք արդյոք յերբեմիցե կապիտալիստական յերկրների տնտեսագետները, վոր նրանք վերջնականապես խճճվել են այն թեորիայի մեջ, թե իբր վոսկե պաշարը վալյուտայի կայունութեան միակ ապահովութունն է»: Յերկրորդ հնգամյակի ծրագրի իրագործումը խոշոր ֆինանսներ է պահանջում:

«Տնտեսական գործունեյութեան հիմքը պետք է կազմի այն պայքարը, վոր մղվելու յե ժողովրդական տնտեսութեան բոլոր ողակներում տնտեսական հաշվարկ մտցնելու, պլանային-ֆինանսական կարգապահութունն ուժեղացնելու, խորհրդային ուղղին ավելի ևս ամրացնելու համար, մի հանգամանք, վոր կարեւորագույն լծակ է հանդիսանում տնտեսական հաշվարկն ուժեղացնելու և գյուղի ու քաղաքի տնտեսական կապերն ամրացնելու գործում» (XVII Կուս համագումարի՝ ընկ. ընկ. Մոլոտովի և Կուլերիշիվի զեկուցումների առթիվ ընդունած բանաձեւերից):

Յերկրորդ հնգամյակում ֆինանսների ծավալը առաջին հնգամյակի 120,1 միլիարդ ռուբլուց կհասնի 348,8 միլիարդ ռ., այսինքն՝ 2,8 անգամ կավելանա: Ֆինանսավորման մի այսպիսի վիժխարի ծրագրի իրագործումն ապահովվում է նրանով, վոր միաժամանակ նախատեսվում է արտադրանքի աճում սոցիալիստական տնտեսության բոլոր ճյուղերում, նրա աշխատանքի վորակի զգալի բարձրացում և սոցիալիստական կուտակումների զգալի ավելացում այդ հիմքի վրա:

Յերկրորդ հնգամյակի պլանով նախատեսվում է 26,2 միլիարդ ռուբլու կուտակում իջեցված գներով:

Բնակչության միջոցների ներգրավումը (կամավոր մոծումների և պարտադիր վճարումների կարգով) նախատեսվում է 1932 թ. դիմաց 13,3 % աճումով (8,2 միլիարդ ռուբլուց 9,3 միլիարդ ռուբլի): Անհրաժեշտ է նաև նշել, վոր փաստորեն բնակչության կողմից պետությանը վճարած գումարներն ավելի քիչ կլինեն յերկրորդ հնգամյակի մորելիզացիայի պլանով նախատեսված գումարից, քանի վոր մարած պարտատոմսերի, տոկոսների և շահումների համար բնակչությանը վերադարձված գումարները գրեթե յերեք անգամ ավելանում են: Յերկրորդ հնգամյակի ֆինանսական ռեսուրսների ծավալն ու կառուցվածքը հետևյալ ձևով են արտահայտում:

ՅԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ	1932 թ.		1937 թ.		Առաջին հնգամյակում		Յերկրորդ հնգամյակում	
	Միլիարդ ռուբ.	Գումարի տոկոսով	Միլիարդ ռուբ.	Գումարի տոկոսով	Միլիարդ ռուբ.	Գումարի տոկոսով	Միլիարդ ռուբ.	Գումարի տոկոսով
I ա) Սոց. տնտեսութ. կուտակումներ առանց գների իջեցման	31,1	69,7	100,5	83,3	73,6	61,3	332,2	79,4
վ ո Ր Ի Գ՝								
1) Շահույթ	6,6	14,8	29,1	24,1	19,1	15,9	79,7	19,0
2) Շրջանառ. հարկ	19,59	43,5	63,0	52,2	42,3	35,2	218,5	52,2
բ) Սոց. տնտեսութ. կուտակումներ, գների իջեցումով	31,1	69,7	61,5	75,4	73,6	61,3	262,2	75,2
II Հիմնական ֆոնդերի իջեցում	2,0	4,5	6,8	7,1	6,3	5,2	20,0	5,7
III Բնակչութ. միջոցներ	8,2	18,4	9,3	11,4	21,5	17,9	46,1	13,2
IV Այլ յեկամուտներ	3,3	7,4	5,0	6,1	18,7	15,6	20,5	5,9
Ընդամենը յեկամուտներ՝ գների իջեցումով	44,6	100	81,6	100	120,1	100	338,8	100
Ընդամենը յեկամուտներ՝ գների իջեցումով	44,6	100	120,6	—	120,1	100	418,8	—

Յեկամուտների ընդհանուր գումարի մեջ սոցիալիստական տնտեսության տեսակարար կշռի բարձրացումը 61,3 տոկոսից 79,3 տոկոսը պայմանավորված է ներարտադրական կուտակումների աճումով, վորն իր հերթին

ապահովված կլինի ինքնարժեքի և շրջանառության ծախսերի իջեցումով: Յերկրորդ հնգամյակի ֆինանսական ծրագրի բնորոշ գիծը կուտուր-կենցաղային ծախսերի (լուսավորություն, առողջապահություն, կադրեր, մամուլ և այլն) տեսակարար կշռի ավելցումն է, վորին զուգընթաց լիովին ապահովվում են տնտեսության ֆինանսավորումը և կառավարչական ու յերկրի պաշտպանության ծախսերը: Մինչդեռ բոլոր ծախսերը 1932 թ. համեմատությամբ ավելանում են 1,7 անգամ, կուտուր-կենցաղային ծախսերն աճում են ավելի քան յերկու անգամ և սրա հետևանքով այդ ծախսերի տեսակարար կշռը բարձրանում է 1932 թ. 21 տոկոսից և 1937 թ. հասնում է 28,4 տոկոս: Կուտուր-կենցաղային հիմնարկների համար յերկրորդ հնգամյակում նախատեսված 75,4 միլիարդ ռուբլին կապահովի այդ հիմնարկների ցանցի զգալի լայնացումն ու աշխատավորության կուտուր-կենցաղային սպասարկման գործի բարելավումը: Մասնավորապես ֆինանսավորման պլանով նախատեսված է տարրական և միջնակարգ դպրոցի կոնստիդենտների աճում 37,8 տոկոսով, ԲՈՒՀ-ի և տեխնիկումների՝ 42,1 տոկոսով, հիվանդանոցային մահճակալների թվի ավելացում 60,3 տոկոսով, առկայանների՝ 83 տոկոսով և այլն:

Տնտեսության ֆինանսավորման համար հնգամյա պլանով նախատեսված 208,3 միլիարդ. ռուբլին լրիվ ապահովում է կապիտալ ներդրումները և նյութական պաշարի կուտակումն արտադրության ու շրջանառության մեջ և հնարավորություն է տալիս նորմալ պայմաններ ստեղծելու արտադրական և առևտրական ձեռնարկությունների աշխատանքի համար: Շրջանառութ. ֆոնդերի աճումը հնգամյակի ընթացքում նախատեսված է 26,4 միլիարդ ռուբլի, հաշվի առնելով արտադրանքի վորակի բարձրացման խնդիրներն ու ասորտիմենտային տեղաշարժերի հետ կապված անհրաժեշտ պաշարը: Յերկրորդ հնգամյակի բոլոր տեսակի ծախսերը հետևյալ կերպ են բաշխվում (միլիարդ ռուբ.):

Ծ Ա Խ Ս Ո Ւ Մ Ն Ե Ր	1932 թ.		1937 թ.		Առաջին հնգամյակում		Յերկրորդ հնգամյակում	
	Բացարձակ	Գումարի տոկոսով	Բացարձակ	Գումարի տոկոսով	Բացարձակ	Գումարի տոկոսով	Բացարձակ	Գումարի տոկոսով
Ժող. տնտես. ֆինանսավոր.	30,4	68,2	44,7	58,3	80,3	66,8	208,3	62,4
Կուտ. կենց. ձեռնարկութ. ֆինանսավ. (առանց տնտ. կազմ. կողմից կադրերի համար կատարված ծախսերի)	9,4	21,1	20,2	26,4	23,9	20,0	75,4	22,6
Կառավարչութ. և յերկրի պաշտպանության ծախսեր Պետփոխառությունների ծախսեր	2,5	5,6	4,3	5,6	9,0	7,5	19,0	5,7
Այլ ծախսեր	1,0	2,2	2,8	3,7	2,2	1,9	10,0	3,0
Այլ ծախսեր	1,3	2,9	4,6	6,0	4,7	3,8	21,2	6,3
Ընդամենը	44,6	100	76,6	100	12,1	100	333,8	100
Պետական պահեստի ֆոնդ	—	—	5,0	—	—	—	15,0	—
Ընդամենը	—	—	81,6	—	—	—	348,8	—

Այս ծախսերն ամբողջովին ապահովվում են ֆինանսական այն ռեսուրսներով, վոր բյուջեն, ճյուղային ֆինանսավորման պլաններն ու վարկային հիմնարկները կունենան գները 35—40% -ով իջեցնելուց հետո:

Բյուջետային սխառեմը յերկրորդ հնգամյակում դառնում է ռեսուրսների կենտրոնացված կուտակման և բաշխման կարևորագույն լծակը՝ տնտեսությունը, կուլտուրան, կառավարման ու յերկրի պաշտպանության գործը ֆինանսավորելու, ինչպես նաև անհրաժեշտ պահեստի գումարներ կուգմելու համար:

Բավական է միայն նշել, վոր ֆինանսական ռեսուրսների 348,8 միլիարդ ռուբլի ընդհանուր գումարից, հաշվի առնելով գների իջեցումը, բյուջետային սխառեմի (միասնական և տեղական բյուջեներ) յեկամուտները կազմում են 254,2 միլիարդ ռուբլ. կամ 72,8%: Բացի դրանից, սոցիալիստական տնտեսությունից ստացվող ռեսուրսների տեսակարար կշիռն ավելանում է 1932 թ. 80,3%-ից հասնում է 1937 թ. 82,7%, իսկ բնակչության տված միջոցների տեսակարար կշիռն 16,8%-ից իջնում է 12,7%⁰/₁₀: Ինչպես ֆինանսական ռեսուրսների կառուցվածքում, նույնպես և բյուջեյում արտացոլում են յերկրորդ հնգամյակի համար նախագծված վերակական փոփոխությունները:

Ամենախոշոր կառուցվածքային փոփոխությունները նախատեսված են բյուջեյի ծախսերի մասում: Այսպես, ժողովրդական տնտեսության ֆինանսավորման ծախսերի տեսակարար կշիռն իջնում են 1932 թ. 71,80%-ից և 1937 թ. հասնում է 57,6 տոկոսի, միաժամանակ բարձրանում է կուլտուրական ծախսերի տեսակարար կշիռը և 18,9 տոկոսից հասնում է 22,8 տոկոսի, փոխառությունները 7,3 տոկոսից հասնում է 11,2 տոկոսի: Ժողովրդական տնտեսության ֆինանսավորման տեսակարար կշռի նվազումը նրանով է պայմանավորվում, վոր ըստ պլանի պետք է ավելանան տնտեսության սեփական ռեսուրսները (շահույթ, մարում, վորոնց հաշվին պետք է ծածկվի ծախսերի մեծ մասը:

Բացի ծախսերից, 1937 թ. հավաքական բյուջեյում ազատ պահեստի ֆոնդ է նախատեսված 5 միլիարդ ռուբլի, ապահովելու համար այն լրացուցիչ ձեռնարկումները, վորոնք անհրաժեշտ կլինեն յերկրորդ հնգամյակի պլանը կատարելու:

Յերկրորդ հնգամյակում բյուջեյի և ժողովրդական տնտեսության կարելիորագույն ճյուղերի փոխհարաբերությունները՝ ինչպես բյուջեյի ոգտին վճարումներ կատարելու, նույնպես և բյուջեյից գումարներ ստանալու տեսակետից, բնորոշվում են հետևյալ տվյալներով:

(Միլիարդ ռուբլիներով)			
Ճ յ ու լ ե բ	Ծրջան. հարկ և մասնառուծվող շահույթից բյուջեյի ոգտին	Ֆինանսավորում բյուջեյից (պետ. և տեղ.)	Ստիգ (բյուջեյի ոգտին, տնտեսության ոգտին)
1. Չորս ժողովմառների արդյունաբերութ.	65,6	50,1	15,5
2. Գյուղատնտեսակ. (հողթող. և խորհանտոգկ.)	—	19,1	—19,1
3. Յերկաթուղ. տրանսպորտ . .	17,4	17,4	—
4. Տրանսպորտի այլ տեսակ . .	—	9,9	—9,9
5. Կ ո ալ	2,0	1,5	+0,5
6. Կոմունալ տնտեսություն . .	4,6	5,3	—0,7
Ընդամենը	90,6	103,6	—12,7

Վարկային սխառեմի հիմնական խնդիրը յերկրորդ հնգամյակում՝ ուղարկվող կոնտրոլի ուժեղացումն և արտագրություն, շինարարության և ապրանքաշրջանառության մեջ:

Պետրանկի վարկային գործառնությունների բնագավառում նախագծվում է նորմալ վարկավորման հետագա զարգացումը, վորը կապված է արտադրության, ապրանքաշրջանառության և միջերումների աճման հետ, առատադրության, ապրանքաշրջանառության և միջերումների աճման հետ, առատադրության չափով կրճատելով արտապլանային վարկերը և վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելով փոխառությունների ուղվճարման դեպքերը: Պետրանկի բոլոր ախիվ գործառնությունները, վորոնք վերաբերում են տնտեսության վարկավորմանը, պետք է լրիվ ծածկվեն պասսիվների (ընթացիկ և հաշվարկային հաշիվներ) նորմալ աճման և բանկի կուտակումների հաշվին, առանց ոգտագործելու եմիսսիոն աղբյուրները:

Պետրանկի վարկային գործառնությունների զգալի աճման հետ միասին յերկրորդ հնգամյակում պետք է իջեցվեն տոկոսային դրույքները թե ախիվ և թե պասսիվ գործառնությունների դժով:

Սոցիալիստական կուտակումների պլանի կատարումը, կուլտուրային և պետական-կոոպերատիվ գների իջեցումը, անդամ հաշվարկի սխառեմի յայնացումը և խնայողական դրամարկղների գործառնությունների ընդլայնումը բնակչության դրամական կուտակումները ներգրավելու ասպարիզում, ահան այս բոլորը պետք է ապահովի յերկրորդ հնգամյակի պլանի անեմիսսիոն կատարումը: Նյութական ֆոնդերի ավելացումը ժողովրդական տնտեսության մեջ, ապրանքաշրջանառության աճումը ծավալուն խորհրդային առևտրի բազայի վրա, հացի, ալյուրի, ձավարի և այլ միջերքների քարտային սխառեմի վերացումը, գների իջեցումը և ավելի կամրացնեն դրամական շրջանառությունը և դրամի, ժողովրդական տնտեսության այդ լծակի խոշոր գերը:

Յերկրորդ հնգամյակի պլանի կատարումը սոցիալիստական տնտեսության կուտակումների, ինչպես նաև հսկայական ծախսերի եֆֆեկտիվ ոգտագործման նպատակով պահանջում է, վորպեսզի ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության բոլոր ողակներում անշեղորհն կիրառվի տնտեսական հաշվարկը, ուղարկվող կոնտրոլը և ամրանա ֆինանսական ու վարկային կարգապահությունը:

Ց Ա Ն Կ

Ա ռ ա ջ ա ր ա ն	ԵԶ
1. ԽՍՀՄ-ի Ֆինանսների ելույթունը	5
2. Ժողովրդական յեկամուտը	9
3. Հ ա ր կ ե ր	14
4. Հարկերի փոխադրման և հարկի ծանրության պրոբլեմը	25
5. Պետական վարկ	28
6. Խնայողական դործը	35
7. Պետական ֆինանսական բյուջեն	40
8. Պետական ապահովագրութուն	50
9. Սոցիալիստական ապահովագրութուն	53
10. Միասնական ֆինանսական պլան	56
11. Ֆինանսական քաղաքականության զարգացման հտապ- ների վերլուծութուն	59
ա) Ֆինանսները Հոկտեմբերյան Հեղափոխության և ռազմա- կան կոմունիզմի շրջանում	59
բ) ՆԵՊ-ը և ֆինանսները վերականգնման շրջանում	62
գ) Ֆինանսները առաջին հնգամյակում	65
դ) Ֆինանսները յերկրորդ հնգամյակում	69



А. 198
38

483

А Р М.
4-290

1

2

ФИНАНСЫ СССР

Составил Г. ШАКАРЯН

(По учебнику „Финансы СССР“ составленному бригадой под редакцией В. П. ДЬЯЧЕНКО)

Издание Арм. Отделения Зак. Заочн. Института Финансовых и
Экономических Наук (Зак ЗИФЭН)

Эривань 1935

ՀՀ Ազգային գրադարան



NL0197914

4-2902